ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 (107). 2021

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը (կենտրոնում)
և ՀՀ արտգործնախարար Արա Այվազյանը (ձախից)
Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում

Երևան, 2021 թ. մայիսի 6

ՀՀ Պաշտպանության նախարարի պաշտոնակատար
Վաղարշակ Հարությունյանի և ՌԴ Պաշտպանության նախարար,
բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հանդիպումը

Երևան, 2021 թ. մայիսի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1 (107). **2021**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ասատրյան Զ. Դ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Ասրյան Է. Է.
Դավթյան Ա. Մ.
Կարապետյան Ա. Հ.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Պողոսյան Ա. Ա.
Սահակյան Ս. Մ.
Սարգսյան Ա. Գ.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Քոչարյան Տ. Տ.
Օհանյան Ս. Ռ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ. ԱՐԴԻ ՓՈՒԼ

Մ. Ա. Պետրոսյան, Պատերազմի սերունդներ. պատերազմի զարգացումը արդի փուլում . . . 9

Տ. Տ. Քոչարյան, Ն. Հ. Գրիգորյան, Ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման արդի մեթոդաբանության որոշ հարցեր (ՀՀ օրինակով) 21

Գ. Վ. Տավարածյան, Պաշտպանական ոլորտում ռազմավարական պլանավորման և ռազմավարական որոշումների կայացման մեթոդաբանության որոշ հարցեր 33

Ա. Մ. Շահվերդյան, Ռազմավարական զսպման ուժային միջոցների կատարելագործումը՝ նորագույն ՍՌՏ-ների զարգացման համատեքստում 49

Հ. Պ. Մինասյան, Ժամանակակից պատերազմների առանձնահատկությունների հաշվառմամբ ՀՕՊ-ի զորքերի մարտական հնարավորությունների մեծացման որոշ հարցեր 60

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գ. Հ. Ղազարյան, Զորակոչիկների և զինծառայողների հոգեվիճակի ախտորոշում Լյուշերի թեստի կիրառմամբ 69

Ա. Ե. Դավթյան, ՀՀ Զինված ուժերում ֆիզիկական պատրաստության ստուգման և գնահատման կարգի օպտիմալացման գործընթացում համակարգչային ծրագրերի կիրառումը . . . 76

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. Համբարձումյան, Արցախի հայաթափման հիմնախնդրի որոշ գնահատումներ հակամարտության լուսաբանման համատեքստում 87

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. Հարությունյան, Նոր կորոնավիրուսային համավարակի ազդեցությունը ՀՀ ռազմատնտեսական անվտանգության վրա 96

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Վ. Վ. Ծատուրյան, Պարբերական հիվանդությանն առնչվող որոշ պրոբլեմներ 110

Գ. Ռ. Վարդանյան, Լ. Ս. Գալստյան, Միկրոալիքային ճառագայթման գեներատորներով աշխատող անձանց հոգեհուզական վիճակի որոշ հարցեր 115

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 123

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան,* ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Վ. Տավարածյան, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ,
Տ. Տ. Քոչարյան, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ,
Ս. Ա. Սուջյան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ,
Հ. Հ. Հովհաննիսյան, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 1 (107)**. 2021**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алтунян Г. Р., Асатрян З. Д. (зам. гл. редактора),
Асрян Э. Э., Давтян А. М., Карапетян А. Г., Кочарян Т. Т., Макарян А. А.,
Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А., Оганян С. Р.,
Погосян А. А., Саакян С. М., Саргсян А. Г., Симонян С. В., Смбатян Н. В.,
Тер-Григорьянц Н. Г., Шахназарян Т. Н.

СОДЕРЖАНИЕ

ПОКОЛЕНИЯ ВОЙНЫ: СОВРЕМЕННЫЙ ЭТАП

М. А. Петросян. Поколения войны: развитие войны на современном этапе . . . . . 9 (19)*

Т. Т. Кочарян, Н. Г. Григорян. Некоторые вопросы современной методологии разработки стратегий национальной безопасности (на примере РА) 21 (31)

Г. В. Таварацян. Некоторые вопросы методологии стратегического планирования и принятия стратегических решений в сфере обороны 33 (46)

А. М. Шахвердян. Усовершенствование силовых средств стратегического сдерживания в контексте развития новейших ВВТ . 49 (58)

У. П. Минасян. Некоторые вопросы повышения боевых возможностей войск ПВО с учетом особенностей современных войн 60 (67)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

Г. А. Казарян. Диагностика психологического состояния призывников и военнослужащих методом теста Люшера 69 (84)

А. Е. Давтян. Применение компьютерных программ в процессе оптимизации порядка проверки и оценки физической подготовки в Вооруженных Силах РА 76 (85)

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

Н. А. Амбарцумян. Некоторые оценки проблемы дearменизации Арцаха в контексте освещения конфликта 87 (94)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

Г. Э. Арутюнян. Влияние новой коронавирусной пандемии на военно-экономическую безопасность РА 96 (109)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

В. В. Цатурян. Некоторые проблемы, связанные с периодической болезнью 110 (120)

Г. Р. Варданян, Л. С. Галстян. Некоторые вопросы психоэмоционального состояния лиц, работающих с генераторами микроволнового излучения 115 (121)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 123 (126)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор; *Н. У. Аракелян,* академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук; *Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян,* академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА; *С. А. Галстян,* доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян,* доктор политических наук, профессор; *Т. Т. Кочарян,* доктор политических наук, профессор; *А. А. Манташян,* академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор; *М. В. Маркосян,* доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор; *В. Г. Саакян,* кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян,* академик НАН РА; *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор; *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА; *А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор; *Ю. М. Суварян,* академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА; *Т. Т. Кочарян,* полковник, доктор политических наук, профессор, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке–начальник ИНСИ; *С. А. Суджян,* кандидат географических наук, доцент, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА; *Д. М. Манасян,* кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА; *Г. О. Оганисян,* полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1 (107)**. 2021**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Altunyan G. R.*, *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Asryan E. E.*, *Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Idinyan R. A.*, *Karapetyan A. H.*, *Kocharyan T. T.*, *Makaryan A. A.*, *Margaryan R. P.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*, *Ohanyan S. R.*, *Poghosyan A. A.*, *Sahakyan S. M.*, *Sargsyan A. G.*, *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Smbatyan N. V.*, *Ter-Grigoryants N. G.*

CONTENTS

GENERATIONS OF WAR: THE CURRENT STAGE

M. A. Petrosyan. Generations of war: development of war at the current stage . . . . . 9 (20)*

T. T. Kocharyan, N. H. Grigoryan. Some issues of modern methodology of the development of the national security strategies (the case of the RA) 21 (32)

G. V. Tavaratsyan. Some issues of the methodology of strategic planning and strategic decision-making in the defense sphere 33 (47)

A. M. Shahverdyan. The improvement of forcible means for strategic deterrence in the view of development of newest weapons and military equipment 49 (59)

H. P. Minasyan. Some issues of Air Defense Forces combat capabilities improvement with a view on the peculiarities of modern wars 60 (68)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

G. H. Ghazaryan. Diagnosis of psychological state of conscripts and servicemen by means of the Lüscher test 69 (86)

A. Ye. Davtyan. Applying computer programs to the process of optimizing the order of the RA Armed Forces physical fitness testing and assessment 76 (86)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY INFORMATION SCIENCE

N. A. Hambardzumyan. Some estimates of the Artsakh de-Armenianization issue within the framework of the conflict coverage 87 (95)

ECONOMIC SECURITY

G. E. Harutyunyan. The impact of the novel coronavirus pandemic on the military and economic security of the RA 96 (109)

MILITARY MEDICINE

V. V. Tsaturyan. Some problems concerning Familial Mediterranean Fever 110 (121)

G. R. Vardanyan, L. S. Galstyan. Some issues of the psycho-emotional state of persons working with microwave generators 115 (122)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 123 (128)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *G. Y. Baghdassarian,* Full Member, NAS, RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Harutyunyan,* Full Member, NAS, RA; *T. T. Kocharyan,* Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian,* Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian,* Full Member, NAS, RA; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Mirijanian,* Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan,* PhD in Physical and Mathematical Sciences; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG, Head, NDRU, MOD, RA; *T. T. Kocharyan,* Col, Doctor of Political Sciences, Professor, Deputy Head in Education and Research – Head of INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan,* PhD in Geography, Associate Professor, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; *D. M. Manasyan,* PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyan,* Col, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ.
ԱՐԴԻ ՓՈՒԼ

ПОКОЛЕНИЯ ВОЙНЫ:
СОВРЕМЕННЫЙ ЭТАП

GENERATIONS OF WAR:
THE CURRENT STAGE

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Մ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գիտնական վերլուծաբան,
ԲՊՀ դասախոս

"Understanding the type of war you are fighting is the first step to winning"

General Anthony Zinni[*]

ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքականության, տնտեսության, հասարակության, շրջակա միջավայրի, արժեքների, գաղափարների փոփոխությունները և տեխնոլոգիաների զարգացումը անխուսափելիորեն և անմիջականորեն ազդում են պատերազմի բնույթի, մասշտաբների, շարժառիթների, պատերազմավարության ձևերի վրա: «Նոր սերնդի» պատերազմների մարտահրավերներին դիմակայելու, դրանցում արդյունավետ կերպով գործելու, առաջադրված խնդիրներն անշեղորեն կատարելու նպատակով բանակները ևս ենթարկվում են որակական և քանակական փոփոխությունների: «Նոր սերնդի» պատերազմներում հաջողությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով տվյալ պետության զինված ուժերը պատրաստ կլինեն փոփոխություններին ու խոչընդոտների հաղթահարմանը:

Պատերազմի բնույթի փոփոխությունների ուսումնասիրության հիման վրա հնարավոր է վեր հանել պատերազմի ու պատերազմավարության զարգացման միտումներն ու օրինաչափությունները: Դեռ 20-րդ դարի վերջին շրջանառության մեջ դրվեց «պատերազմի սերունդ» հասկացությունը, որը հնարավորություն է ընձեռում մեկ հարթությունում դիտարկելու պատերազմի վարման ձևերի ու եղանակների փոփոխություններն ու այդ փոփոխությունների հիմնական պատճառները: Պատերազմի սերունդների նկատմամբ մոտեցումները երբեմն լինում են խիստ տարբեր: Այդ տարբերությունները վերաբերում են սերունդների հերթագայությանը, այս կամ այն սերնդին բնորոշ առանձնահատկություններին և այլն: Պատերազմի սերունդների ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի ապագա պատերազմների բնույթի կանխատեսման, պաշտպանությանը պետության պատրաստման, պատերազմի զարգացման հնարավոր միտումների գնահատման և զինված ուժերի զարգացման անհրաժեշտ ուղու ընտրության տեսանկյունից: Պատերազմի սերունդների ուսումնասիրությունն առավել քան արդիա-

[*] «Պատերազմի տեսակի ըմբռնումը դրան հաղթելու առաջին քայլն է», գեներալ Էնտոնի Զինի:

կան է 44-օրյա պատերազմից հետո՝ ՀՀ և ԱՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների և ապագա պատերազմներին պատրաստվելու հրամայականի հաշվառմամբ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Պատերազմի սերունդների վերաբերյալ դատողությունները ձևավորվել են 1980-ականների վերջին Ու. Լինդի, Կ. Նայտինգեյլի, Ջ. Շմիդտի, Ջ. Սատոնի, Գ. Ուիլսոնի «Պատերազմի փոփոխվող դեմքը: Չորրորդ սերունդ» հոդվածը[1] լույս տեսնելուց հետո: Այդ հոդվածում արծարծվել են մի շարք հարցեր, որոնք հիմնաքարային են դարձել հետագա քննարկումների, ինչպես նաև արևմտյան ռազմական մտքի զարգացման համար: Այնուհետև պատերազմի սերունդների տարանջատման հարցը լայնորեն քննարկվել է մեծ թվով այլ հեղինակների աշխատություններում: Մասնավորապես՝ արժեքավոր են Ու. Լինդի[2], Թ. Համեսի[3], Դ. Աբոտի[4], Դ. Ռիդի[5], Վ. Սլիպչենկոյի[6] մշակումները: Պատերազմի սերունդների տարանջատումը միանշանակ չէ և որոշ դեպքերում խիստ պայմանական է: Առանձնացվում են մի քանի հիմնական մոտեցումներ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՉՈՐՍ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՆ ԸՍՏ ՈՒ. ԼԻՆԴԻ

Ու. Լինդը պատերազմի էվոլյուցիոն (բարեշրջական) զարգացումը բաժանում է չորս հիմնական շրջադարձային փուլերի[7]:

Առաջին սերնդի պատերազմին բնորոշ էին հրացանը (մուշկետ), գծային և շարասյունային մարտավարությունները: Այն զարգացել է մասամբ որպես պատասխան տեխնոլոգիական գործոնների (կրակային գիծն ապահովում էր կրակային հզորություն, խստավարժումն անհրաժեշտ էր մեծ արագաձգության հասնելու համար), մասամբ էլ որպես պատասխան հասարակական պայմաններին և գաղափարներին: Առաջին սերնդի պատերազմների օրինակներ են Անգլիական քաղաքացիական պատերազմը (1642–1651 թթ.),

[1] Տես *William S. Lind, Keith Nightengale, John F. Schmidt, Joseph Sutton, Gary I. Wilson.* The Changing Face of War: Into the Fourth Generation. “Marine Corps Gazette”, October 1989:

[2] Տես *Уильям С. Линд, Грегори А. Тиле.* Руководство по ведению войны четвертого поколения, 2015 (https://velesova-sloboda.info/archiv/pdf/lind-rukovodstvo-po-vedeniyu-voyny-chetvertogo-pokoleniya.pdf):

[3] Տես *Thomas X. Hammes.* The evolution of war: the Fourth Generation. “Marine Corps Gazette”, September 1994; *նույնի՝* The Sling and the Stone: On War in the 21st Century. Zenith Press, 2004:

[4] Տես “The Handbook of 5GW: A Fifth Generation of War?” Ed. by Daniel H. Abott. Nimble Books LLC, 2010:

[5] Տես *Donald J. Reed.* Beyond the War on Terror: Into the Fifth Generation of War and Conflict. “Studies in Conflict & Terrorism”, 2008, Vol. 31, Issue 8:

[6] Տես *Владимир Слипченко.* Войны шестого поколения. Оружие и военное искусство будущего. М., 2002:

[7] Տես *Ուիլյամ Ս. Լինդ, Գրեգորի Ա. Թիլե*, Նշ. աշխ.:

Անգլո-իսպանական պատերազմը (1654–1660 թթ.), Յոթնամյա պատերազմը (1756–1763 թթ.), Նապոլեոնյան պատերազմները (1803–1815 թթ.) և այլն:

Երկրորդ սերնդի պատերազմներին բնորոշ էին ակոսավոր հրացանը, փշալարերը, գնդացիրը և հրետանային կրակը: Մարտավարությունը հիմնված էր կրակի ու շարժման վրա և, ըստ էության, շարունակում էր մնալ գծային: Ի տարբերություն առաջին սերնդից, այստեղ շեշտը դրվում էր փակ դիրքերից վարող հրետանային կրակի վրա: Երկրորդ սերնդի պատերազմների օրինակներ են Ամերիկայի քաղաքացիական պատերազմը (1861–1865 թթ.), Առաջին համաշխարհային պատերազմը (1914–1918 թթ.), Իրան-իրաքյան պատերազմը (1980–1988 թթ.) և այլն:

Երրորդ սերնդի պատերազմները ևս պատասխան էին մարտի դաշտում կրակային հզորության աճման, իսկ շարժիչ ուժը հիմնականում գաղափարներն էին:

Այսպես. գերմանացիները, քաջ գիտակցելով երկու ճակատով պատերազմ մղելու անհնարինությունը, մշակեցին «կայծակնային պատերազմի» ծրագիրը, որը փորձեցին իրականացնել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Եվ եթե այդ ռազմավարությունն իրեն արդարացրեց առաջին շրջանում (1939–1941 թթ.), ապա Խորհրդային Միության դեպքում ձախողվեց, ինչի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ արևմտյան ճակատում ձեռք բերված հաջողությունները վճռորոշ չէին, քանի որ Անգլիան շարունակեց պայքարը, և Գերմանիան ստիպված եղավ պատերազմել երկու ճակատով[8]:

Երրորդ սերնդի պատերազմների օրինակներ են Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939–1945 թթ.), Կորեական պատերազմը (1950–1953 թթ.) և այլն:

Չորրորդ սերնդի պատերազմների վերաբերյալ հիմնական հայացքները տեղ գտան Ոհ. Լինդի և Գ. Թիլեի «Չորրորդ սերնդի պատերազմների վարման ուղեցույց» մենագրության մեջ, որը լույս է տեսել 2015 թ.: Ըստ Լինդի՝ ժամանակակից պատերազմն սկսվել է 1648 թ. Վեստֆալյան հաշտությունից հետո, որով ավարտվեց Երեսնամյա պատերազմը: Այդ համաձայնագրով պետությունը, որն ինքնին նոր հաստատություն էր, սահմանեց պատերազմ վարելու իր մենաշնորհը:

Չորրորդ սերնդի պատերազմների հիմքում պետությունների լեգիտիմության ճգնաժամն է, հետևաբար չորրորդ սերնդի ոչ մի սպառնալիք չի կարող ունենալ միայն խիստ ռազմական լուծում: Ավելին. ռազմական ուժն ինքնին չի կարող վերադարձնել պետության լեգիտիմությունը:

Չորրորդ սերնդի պատերազմներում օգտագործվում են բոլոր հնարավոր ցանցերը՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական և այլ տեսակի, որպեսզի հակառակորդի՝ քաղաքական որոշումներ ընդունողնե-

[8] Տես «Հատվածներ Լ. Ֆրիդմանի «Ռազմավարություն. պատմություն» աշխատությունից»: «ԱՏ», 2020, հմ. 1, էջ 95–99, հմ. 2, էջ 20–28, *նաև*՝ «Роковые решения Вермахта. Воспоминания немецких полководцев». Смоленск, 2001:

րին համոզեն, որ նրանց ռազմավարական նպատակները կամ անհասանելի են կամ շատ ծախսատար և չեն ծածկվի ակնկալվող օգուտներով: Այլևս փորձ չի արվում հակառակորդին հաղթելու նրա զինված ուժերին պարտության մատնելու միջոցով: Փոխարենը՝ այդ ուժերը պարտիզանական մարտավարության և քաղաքացիական անհնազանդության, մշակութային, տնտեսական և սոցիալական կապերը համակցելով անկանխատեսելի քաղաքական գործունեության հետ՝ ուղղակի կերպով «հարձակվում» են հակառակորդի քաղաքական կամքի վրա և շատ հաճախ՝ հաղթում[9]:

Այսօր պետությունների զինված ուժերը մի շարք դեպքերում պայքարում են ոչ պետական դերակատարների դեմ, ինչպիսիք են Ալ Քաիդան, Հեզբոլլահը, Իսլամական Պետությունը, Բոկո Հարամը և այլն: Եվ գրեթե բոլոր տեղերում պետությունները պարտվում են կամ կրում անդառնալի ու կործանարար կորուստներ (պետությունը համարվում է ձախողված):

Այս պատերազմները բարդ են և երկարատև, ունեն խիստ ապակենտրոնացված բնույթ, վարվում են հոգեբանական պատերազմի և մեդիա ձեռնածությունների տարրերի զուգորդմամբ, սովորաբար լինում են ցածր ինտենսիվությամբ, ճնշում գործադրելու նպատակով դրանցում օգտագործվում են բոլոր հնարավոր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, ռազմական, բավական ակտիվ է ահաբեկչական գործոնը, կիրառվում է պարտիզանական պայքարի մարտավարություն և այլն:

Թեև չորրորդ սերնդի պատերազմներում բավական ակտիվ է ահաբեկչական գործոնը, սակայն ընդհանուր առմամբ այն, ինչին մեր օրերում բախվում են պետությունների զինված ուժերը, նման է պարտիզանական պատերազմի[*]: Ուստի պարտիզաններին հաղթելու համար պետության զինված ուժերը պետք է դառնան ավելի «լավը», քան իրենց գործում պարտիզաններն են, այլ կերպ ասած՝ «պարտիզանությամբ գերազանցեն» նրանց[**]:

Չորրորդ սերնդի պատերազմում հակառակորդին առավել արդյունավետ կերպով կարող է դիմակայել թեթև հետևակը: Գործողությունների ապակենտրոնացման պայմաններում թեթև հետևակը գործում է արագ տեմպով և արդյունավետորեն: Թեթև հետևակի պատրաստման համար կարևոր է զարգացնել զինվորների կարգասիրությունը (ինքնակարգապահությունը), ապա-

[9] Տես *Thomas X. Hammes.* War Evolves Into the Fourth Generation. “Contemporary Security Policy”, August 2005, Vol. 26, Issue 2:

[*] Պարտիզանական պատերազմը ներառում է մարտական գործողություններ, որոնք (հակառակորդի վերահսկած տարածքում) մեծ մասամբ ձեռնարկում են տեղի բնակչության (բնիկ) ուժերը ռազմական միջոցներով թշնամու մարտունակությունը, արդյունաբերական կարողությունները և պայքարելու կամքը ճնշելու համար: Պարտիզանական գործողությունները վարում են հիմնականում համեմատաբար փոքր խմբեր, որոնք օգտագործում են հարձակողական մարտավարություն (տես “US Army Guerilla Warfare Handbook”. Department of Army, 2009):

[**] «Перепартизанить партизан», “out-guerrillaing the guerrilla”, «out-G’ing the G»: Այս ձևակերպումն առաջին անգամ կիրառել է Վիետնամի պատերազմի մասնակից, ամերիկացի գնդապետ Դևիդ Հեկվորտը:

հովել նրանց բարձր մակարդակի ֆիզիկական պատրաստությունը, համբերատարությունը, արագաշարժությունը, գիշերային պայմաններում տեղանքում վստահ կերպով գործելու և ականային-պայթուցիկ միջոցներ օգտագործելու կարողությունը և այլն:

2004 թ. հրապարակված «Պարսատիկը և քարը. 21-րդ դարի պատերազմի մասին»[10] գրքում ամերիկացի ռազմական գործիչ գնդապետ Թոմաս Համեսը, դիտարկելով պատերազմի սերունդների դասակարգման հարցը, հղում է անում Ռ. Լինդին՝ կրկին սերունդների դասակարգումն սկսելով վեստֆալյան ժամանակաշրջանից: Սակայն, ի տարբերություն Ռ. Լինդից, Համեսը պատերազմի սերունդների դասակարգումը հասցնում է որակապես այլ մակարդակի՝ ցույց տալով, թե ինչպես են ժամանակակից պատերազմները զարգացել որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, տեխնոլոգիական փոփոխությունների արդյունք: Միևնույն ժամանակ, նա փաստում է, որ անգամ այն պարագայում, երբ պատերազմները շարունակաբար զարգանան, միևնույնն է, կլինեն պետություններ, որոնք կշարունակեն վարել նախորդ սերունդներին բնորոշ պատերազմներ, իսկ նման դեպքերում պատերազմների ելքը կլինի կանխորոշված:

Չորրորդ սերնդի պատերազմներին Ռ. Լինդի և Թ. Համեսի վերագրած բնութագրիչների մեջ, թերևս, առկա են որոշ տարբերություններ. դրանք վերաբերում են համընդհանուր ցանցեր օգտագործելու, ահաբեկչական տարրի՝ համընդհանուր գործոնի վերաճելու հարցերին (Ռ. Լինդն առաջնային էր համարում պարտիզանական մարտավարության կիրառումը), ինչպես նաև պատերազմների և զինված հակամարտությունների շարունակականությանը: Ի տարբերություն Լինդից՝ Համեսն իր աշխատությունում խոսում է նաև հինգերորդ սերնդի պատերազմների մասին՝ նշելով, որ դրանցում վճռորոշ կլինեն կենսաբանական գրոհները, իսկ տրանսպորտային և առևտրային տարածաշրջանային և համընդհանուր ցանցերը կօգտագործվեն դրանց «առաքման» նպատակով:

Դրա հետ մեկտեղ և՛ Լինդը, և՛ Համեսը իրենց աշխատություններում չեն խոսում պատերազմի սերնդափոխության հիմնական շարժիչ ուժերի մասին և ոչ էլ պատերազմի անքակտելի մաս կազմող այն տարրերի մասին (հակառակորդ, պատերազմի նպատակների փոփոխվող բնույթ, ուժերի հարաբերակցություն), որոնց վրա ազդում են շարժիչ ուժերը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՆ ԸՍՏ Վ. ՍԼԻՊՉԵՆԿՈՅԻ

Ռուս պաշտոնաթող գեներալ-մայոր, ռազմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վլադիմիր Սլիպչենկոն, ի տարբերություն Ռ. Լինդից, դիտարկում է մարդկության քաղաքակրթության ամբողջ ընթացքը և առանձնացնում է պատերազմների 6 սերունդներ[11]: Այսպես.

[10] Տես *Thomas X. Hammes.* The Sling and the Stone: On War in the 21st Century. Zenith Press, 2004:

[11] Տես *Վլադիմիր Սլիպչենկո,* Նշ. աշխ.:

- *առաջին սերունդը* բնորոշվում է սառը զենքի կիրառմամբ՝ նիզակ, նետ ու աղեղ, թուր և զրահ, այսինքն՝ հրաժարում քարից ու փայտից և անցում սառը զենքին: Այս փուլը տևել է 4000 տարի,
- *երկրորդ սերունդն* սկսվել է 17–18-րդ դարերում, երբ Չինաստանում հայտնագործվել է վառոդը և ի հայտ է եկել հրազենը, այդ թվում՝ առաջին թնդանոթները,
- *երրորդ սերունդը* ծնունդ է առել 18–19-րդ դարերում՝ հրաձգային, ակոսավոր զենքի ի հայտ գալով: Դրա շնորհիվ պատերազմները փոխել են իրենց բնույթը, դարձել ավելի զանգվածային, մասշտաբային և այլն,
- *չորրորդ սերնդին* բնորոշ են ավտոմատացված զենքի ստեղծումն ու կիրառումը, ռազմավարական մասշտաբի հարձակողական և պաշտպանողական օպերացիաները,
- *հինգերորդ սերնդի* պատերազմներն ի հայտ են եկել 1945 թ. հետո, երբ ստեղծվել են ատոմային (միջուկային), ապա քիչ ավելի ուշ՝ ջերմամիջուկային զենքերը,
- *վեցերորդ սերունդը* սկիզբ է առել 1991 թվականին: Այս սերնդին բնորոշ հատկանիշներն առանձնացնելու համար Սլիպչենկոն առաջ է քաշում «պատերազմում հաղթելու բանաձև» հասկացությունը: Ըստ նրա՝ պատերազմում հաղթելու համար անհրաժեշտ է հասնել երեք նպատակի՝ ջախջախել հակառակորդի զինված ուժերը, որպես կանոն՝ նրա տարածքում, ոչնչացնել թշնամու տնտեսական ներուժը և փոխել թշնամու քաղաքական համակարգը: Եթե այս երեք բաղադրիչները հնարավոր է լինում ապահովել, ապա հաղթանակն լիակատար է: Կլաուզևիցն իր հայտնի «Պատերազմի մասին» գրքում նշում էր, որ «Պատերազմի քաղաքական նպատակը նրա սահմաններից դուրս է, քանի որ եթե պատերազմը բռնության գործողություն է՝ ուղղված թշնամուն մեր կամքի պարտադրմանը, ապա միշտ էլ ամեն ինչ պետք է հանգեցվեր թշնամու ջախջախմանը, այսինքն՝ դիմադրելու կարողությունից նրան զրկելուն»: Այդ նպատակով պետք է «ջախջախել» հակառակորդի զինված ուժերը, տարածքը և կամքը: «Հակառակորդի զինված ուժերը պետք է ոչնչացվեն, այսինքն՝ բերվեն մի այնպիսի վիճակի, երբ այլևս չեն կարողանա շարունակել պայքարը: Տարածքը պետք է նվաճվի, քանի որ այն կարող է դառնալ նոր զինված ուժերի աղբյուր: Սակայն նույնիսկ մեկին և մյուսին հասնելուց հետո չի կարելի համարել, որ պատերազմը (թշնամական լարվածությունը և թշնամական ուժերի գործողությունը) դադարեցվել է, քանի դեռ հակառակորդի կամքը չի կոտրվել, այսինքն՝ նրա կառավարությունն ու դաշնակիցներն ստիպված չեն կնքել հաշտություն, կամ ժողովուրդը չի հնազանդեցվել»[12], և պատերազմը կարող է շարունակվել այլ ձևերով՝ նոր

[12] Տես «Հատվածներ Կառլ ֆոն Կլաուզևիցի «Պատերազմի մասին» աշխատությունից»: «ԱՏ», 2020, հմ. 3, էջ 15:

մարտավարության կիրառմամբ, ինչպես, օրինակ, եղավ Վիետնամում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին երկու տասնամյակներում ակտիվորեն քննարկվում է հինգերորդ սերնդի պատերազմների վարման հայեցակարգը, որը խիստ պայմանական է, քանի որ ժամանակակից պատերազմների բնորոշումները մեծապես համընկնում են Ու. Լինդի նկարագրած չորրորդ սերնդի պատերազմների բնորոշումների հետ: 5-րդ սերնդի պատերազմի հայեցակարգը սկսել է շրջանառել 1990-ականների վերջին[13]: Այն առավել զարգացրել է ամերիկացի ռազմական մտածող Դոնալդ Ռիդը 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո[14]:

Ըստ Ռիդի՝ հինգերորդ սերնդի պատերազմները լինելու են պարտիզանական պատերազմի զարգացած տարբերակ: Դրանց զարգացման վրա ազդում են մի շարք գործոններ՝ նոր հակամարտային ոլորտները, հակառակորդի բնույթի փոփոխությունը (պայքար ոչ պետական զինված ուժերի դեմ), նպատակի և ուժի բնույթի փոփոխությունը, իսկ առավել վճռորոշ է գերճշգրիտ զենքի և ավտոմատ կառավարման համակարգերի լայնածավալ կիրառումը: Այս սերնդի պատերազմներին հատուկ են հակառակորդի հասարակության վրա գործադրվող մեծ ազդեցությունը, տեղեկատվահոգեբանական ձեռնածությունները, որոնք ուղղված են հակառակորդի՝ պայքարելու ներուժը կոտրելուն: Բացի այդ, կարևորվում է նաև հակառակորդի հասարակության վրա գործադրվող այնպիսի բարոյահոգեբանական ներգործությունը, որը կսերմանի պառակտում, կառաջացնի ազգային ինքնության աղավաղումներ:

Հինգերորդ սերնդի պատերազմները դուրս են գալիս չորրորդ սերնդի պատերազմների պատկերացումներից՝ ընդլայնելով պատերազմների և զինված հակամարտությունների սահմանները (ֆիզիկական, տեղեկատվական, այդ թվում՝ կիբեռ, իմացական, սոցիալական)[15]:

Հինգերորդ սերնդի պատերազմների կրթական ինստիտուտը* այն բնորոշում է որպես անհամաչափ և ապստամբական պատերազմի գաղափարի ընդլայնում: Ընդսմին դրա ընթացքում հակառակորդն օգտագործում է իր տնօրինության տակ եղած բոլոր միջոցները, ավանդական և ոչ ավանդական մարտավարությունները: Այն ծագում է քաղաքական, կրոնական և սո-

[13] Տես “J6 Command, Control, Communications, & Computers/Cyber” (https://www.jcs.mil/Directorates/J6-C4-Cyber/):

[14] Տես *Դոնալդ Զ. Ռիդ,* Նշ. աշխ.:

[15] Տես նույն տեղում:

* Ինստիտուտը հիմնադրվել է 2010 թ. 5-րդ սերնդի պատերազմների հետ կապված սպառնալիքների նախնական ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Ինստիտուտի հիմնադիրը Ռիչարդ Սանոսկեն է: Ավելի հանգամանորեն տես “5th Generation Warfare Educational Institute” կայքէջը (http://www.5gwinstitute.com):

ցիալական պատճառներով, ներառում է տեղեկատվական գործողություններ, կարող է իրագործվել կազմակերպված և ոչ կազմակերպված խմբերի միջոցով, վարվել պետական կամ ոչ պետական կազմավորումների միջև՝ հակառակորդին հաղթելու կամ պայքարելու կամքը կոտրելու նպատակով:

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած հերթական ագրեսիան ուներ մի շարք ակնհայտ առանձնահատկություններ: Թուրքիան ուղղակիորեն մասնակցում էր ռազմական գործողություններին, ինչի մասին բազմիցս բարձրաձայնել են նաև տարբեր ազդեցիկ պետություններ: Ագրեսիվ գործողություններում ադրբեջանա-թուրքական կողմը կիրառում էր իր ամբողջ զինանոցը՝ ավիացիա, հարվածային և հետախուզական ԱԹԱ-ներ, ծանր հրետանի, հրթիռահրետանային համալիրներ և այլն: Ագրեսորները հրթիռակոծում էին խաղաղ բնակավայրերը, սրբավայրերը՝ կիրառելով արգելված զինատեսակներ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրավիճակի սրման հետևանքներից մեկն էլ տարածաշրջանում ահաբեկչական գործոնի ակտիվացումն էր, ընդսմին ահաբեկիչների ներգրավումը նպատակ ուներ հրահրելու տարածաշրջանային անկայունություն և այն դարձնելու միջազգային ահաբեկչության էպիկենտրոն:

Պատերազմի մեկնարկից անմիջապես հետո շրջանառության մեջ դրվեց այն թեզը, թե սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունները լիովին համընկնում են հինգերորդ սերնդի պատերազմների վարման հիմնական չափանիշների հետ: Դա հիմնավորվում էր այն հանգամանքով, որ պատերազմի ժամանակ կիրառվում էին բարձր տեխնոլոգիական միջոցներ, չկային հստակ մարտական բնագծեր, գործում էին փոքրիկ տարաշարժուն խմբեր և այլն: Սակայն նման դիտարկումը խիստ պայմանական է: 44-օրյա պատերազմի ժամանակ կիրառվել է գերճշգրիտ զենք (այդ թվում նաև արգելված զինատեսակների), ներգրավվել են ահաբեկչական խմբավորումներ, պատերազմն ունեցել է ոչ գծային բնույթ, առավել արդյունավետ կերպով գործել են տարաշարժուն խմբերը, ակներև էր տեղեկատվական և հոգեբանական պատերազմին բնորոշ տարրերի առկայությունը և այլն: Այնուամենայնիվ, նշված հատկանիշները բնորոշ են նաև Ռ. Լինդի նկարագրած չորրորդ սերնդի պատերազմներին, ինչպես նաև, ընդհանուր գծերով, Սլիպչենկոյի՝ վեցերորդ սերնդի պատերազմներին: Թերևս բացառություն է կազմում պարտիզանական մարտավարության կիրառությունը (դրա բացակայությունը), ինչը բնորոշ է ինչպես հինգերորդ սերնդի պատերազմներին (ըստ Ռիդի), այնպես էլ չորրորդ սերնդի պատերազմներին (ըստ Լինդի): Հետևաբար այս կամ այն սերնդին 44-օրյա պատերազմի համապատասխանությունը միանշանակ կերպով չի կարող փաստվել, իսկ առհասարակ որևէ սերնդի պատկանելությունը պետք է որոշվի՝ բացառապես հղում անելով այս կամ այն տեսաբանի կամ հայեցակարգի՝ համակողմանի վերլուծությունից հետո միայն:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Պատերազմների սերունդների դիտարկումը ցույց է տալիս, որ դրանց կերպափոխման, մեկ սերնդից մյուսին անցման հիմնական խթանները երկուսն են՝ տեխնոլոգիաները և գաղափարները: Յուրաքանչյուր սերնդից մյուսին անցումը պայմանավորված է կա՛մ տեխնոլոգիաների զարգացման դինամիկայով, կա՛մ գաղափարների ծագման հաճախականությամբ, սակայն երբեմն դժվար է տարանջատել դրանց գործած ազդեցությունները:

Արդի փուլում կարելի է առանձնացնել պատերազմների և զինված հակամարտությունների զարգացման մի քանի միտումներ, որոնք այս կամ այն չափով արտահայտվել են ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում և վճռորոշ կլինեն առաջիկա տասնամյակներում: Այս միտումների հաշվառումը նաև առանցքային նշանակություն ունի ՀՀ և ԱՀ անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների և հավանական պատերազմի բնույթի գնահատման տեսանկյունից:

Այսօր առավել քան երբևէ կարևորվում են *թշնամու ուժերի մասնատմանը կամ քայքայմանը նպատակաուղղված գործողությունները*, որոնք ձեռնարկվում են թշնամու ֆիզիկական ոչնչացմանն ուղղված գործողություններին զուգահեռաբար և երբեմն լինում են ավելի արդյունավետ: Այս միջոցները, թերևս, ավելի «մարդասիրական» են, քանի որ չեն ենթադրում մարդկանց կամ ենթակառուցվածքների ֆիզիկական ոչնչացում: Այդ գործողությունները, նախ, հակառակորդի հասարակության մեջ առաջացնում են բարոյալքություն, ապա, հաջողության դեպքում, կոտրում են պայքարելու նրա կամքը: Նշվածը իրագործելի է տեղեկատվահոգեբանական պայքարի միջոցով, հատկապես այն դեպքում, երբ առկա է տեղեկատվական վակուում, որը հեշտությամբ լցվում է հակառակորդի նպատակաուղղված կեղծ տեղեկատվական հոսքերի ու արշավների միջոցով: Այս ամենը ճշգրտորեն համապատասխանում է հոգեբանական պատերազմի հայեցակարգին:

Նվազել է (կշարունակի նվազել) կախվածությունը կենտրոնական թիկունքային ապահովման (լոգիստիկ) համակարգերից: Տարաբաշխվածությունը և, միևնույն ժամանակ, անհապաղ գործելու հրամայականը պահանջում են կենսագործունեության ապահովում ի հաշիվ շրջակա միջավայրի (որոշակի աշխարհագրական տարածքի) և հակառակորդի (սպառազինություն, սննդամթերք, տրանսպորտային միջոցներ և այլն): Քանի որ կա ռազմավարական նշանակության օբյեկտների խոցման մեծ հավանականություն, ապա մեկ մեծ ապահովումային կենտրոնի հավանական խոցումը կունենա անդառնալի հետևանքներ և կարող է նույնիսկ վճռել պատերազմի ելքը: Նման կենտրոնների տարաբաշխվածության ու զարգացած ապակենտրոնացված ցանցի առկայությունը հնարավորություն կտա չխաթարելու մատակարարումների անընդհատությունը:

Առավելապես կարևորվում է տարաշարժը, իսկ զանգվածային բանակներն ու կրակային հզորությունը դադարել են որոշիչ գործոն լինելուց: Ավելին. զանգվածայնությունը մեր օրերում համարվում է որոշակիորեն ոչ բարե-

նպաստ գործոն, քանի որ նորագույն գերճշգրիտ ու հեռահար զինատեսակները հնարավորություն են տալիս հասցնելու նշանառվական ու գերճշգրիտ հարվածներ: Հետևաբար առավել կենսունակ և արդյունավետ են ոչ մարդաշատ, տարաշարժուն ուժերը (օրինակ՝ թեթև հետևակը):

Նոր սերնդի պատերազմներում վարվող գործողությունները *ապակենտրոնացված* են, ինչի հետևանքով պատերազմի և խաղաղության միջև բաժանարար գիծն այնքան է ճապաղվել, որ գրեթե անհետացել է:

Պատերազմն ունի *ոչ գծային* բնույթ, երբեմն հնարավոր չէ հստակեցնել մարտադաշտն ու առաջագիծը: Ընդսմին դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պայքարն ընթանում է միաժամանակ մի քանի հարթություններում՝ ցամաք, ջուր, օդ, տիեզերք, կիբեռտարածություն, իսկ ռազմական գործողությունների հաջողությունը որոշվում է համատեղ գործողությունների արդյունավետությամբ:

Ընդհանուր առմամբ, նկատվում է մեծ ռազմական օբյեկտների թվի նվազման միտում (ռազմական օդանավակայաններ, կապի անշարժ կենտրոններ, մեծ շտաբներ):

Արդի փուլում առավել քան երբևէ կարևորվում է մարտական առաջադրանքը (mission-type order)[*]: Այս պայմաններում մեծանում է տարաբաշխման հնարավորությունը և փոքր խմբերի գործողությունների կարևորությունը, ինչն էլ իր հերթին նույնիսկ ամենափոքր մարտական ստորաբաժանումներից կպահանջի ճկուն գործողություններ՝ հիմնված գիտելիքի և բարձրագույն հրամանատարության մտադրությունների ճիշտ ըմբռնման վրա: Այս եղանակի արդյունավետությունը մեծապես աճում է հատկապես «առաջադրանքային կառավարման» *(mission command)* հայեցակարգում դրա կիրառման դեպքում, որն էլ, իր հերթին, ենթադրում է ռազմական գործողությունների ապակենտրոնացված վարում առաջադրանք բովանդակող հրամանների հիման վրա: Այս հայեցակարգը ևս նպաստում է արագ որոշումներ ընդունելուն:

Ինչպես նշվել է, նոր սերնդի պատերազմներն ունեն *պարտիզանական բնույթ,* ապակենտրոնացված են, ինչը հնարավորություն է տալիս գործելու ծածուկ, հակառակորդին հանկարծակիի բերելու, անգամ երբ հնարավոր չէ ապահովել թվային գերակշռություն: Պարտիզանական պատերազմի արդյունավետության վրա ազդող գործոններն են մարդկային ռեսուրսները (անընդմեջ համալրումը), շարժունակությունը, բնակչության աջակցությունը, առաջնորդներին (հրամանատարներին) անվերապահ աջակցությունը, տարբեր զինատեսակներ օգտագործելու կարողությունը, տեղանքի և եղանակային պայմանների լավ իմացությունը, հարձակման տարբեր մարտավարությունների կիրառումը, սպառազինության ձեռքբերման նպատակով համագործակցությունն անդրազգային հանցավոր տարրերի հետ և այլն:

[*] *Mission-type order* (անգլ. բառացի՝ առաջադրանքատիպ հրաման). զորամասին (ստորաբաժանմանը և այլն) տրվող առաջադրանքի կատարման մասին հրաման, որում չի նշվում, թե ինչպես այն կատարել:

Նոր սերնդի պատերազմներում ակնհայտ է *ահաբեկչական գործոնի ակտիվացումը:* Ժամանակակից պատերազմների «հիբրիդայնացումը» էապես ջնջել է պատերազմի և խաղաղության միջև եղած սահմանը, իսկ դրա հետևանքներից են, ինքնին, ահաբեկչական կամ դիվերսիոն-ահաբեկչական կազմավորումների ակտիվացումն ու ռազմական գործողություններում ներգրավումը, ինչը լրջագույն սպառնալիք է ստեղծում ոչ միայն պետական (կանոնավոր) զինված ուժերի, այլև խաղաղ բնակչության համար:

Միջազգային ահաբեկչության պատճառով առաջացող խնդիրները հիմնականում վերաբերում են երկու ուղղությունների: Նախ. պետություններն ու պետությունների դաշինքները ներքաշվում են լայնածավալ ռազմական գործողությունների մեջ: Օրինակ՝ Սիրիայում ահաբեկչության դեմ մղվող պայքարի հետևանքով պատերազմական գործողություններում ներգավվեցին մի շարք միջազգային դերակատարներ՝ ՌԴ-ն, ԱՄՆ-ը, Թուրքիան, որոշ եվրոպական պետություններ և այլն: Երկրորդ. ոչ պետական կազմավորումները, ինչպիսին, օրինակ, Իսլամական Պետությունն է, չլինելով պետական միավորում և միջազգային իրավունքի սուբյեկտ, հնարավորություն են ստանում ազդելու տարածաշրջանային և միջազգային գործընթացների վրա:

Այսպիսով՝ պատերազմի վարման ավանդական ձևերում տեղի են ունեցել աննախադեպ կերպափոխումներ, ավանդական մեթոդները մեծամասամբ կորցրել են իրենց կարևորությունը, իսկ նոր սերնդի պատերազմների վարման նոր ռազմավարություններն ու գործիքակազմը եկել են առաջացած բացը լրացնելու պատերազմի նոր ձևերի ու մարտավարությունների կիրառմամբ: Ուստի նոր իրողություններն առաջացնում են այդ միտումներն ամրագրելու օբյեկտիվ անհրաժեշտություն, ինչին պետք է անվերապահորեն հետևի նոր դոկտրինների, ռազմավարությունների, հայեցակարգների մշակման հրատապ գործընթացը ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին ու մարտահրավերներին արդյունավետորեն դիմակայելու համար:

ПОКОЛЕНИЯ ВОЙНЫ: РАЗВИТИЕ ВОЙНЫ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

М. А. ПЕТРОСЯН, кандидат политических наук, ученый-аналитик Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, лектор ГУ им. Брюсова

РЕЗЮМЕ

Трансформация войн, переход от одного их поколения к другому обусловлен либо динамикой развития технологий, либо частотой возникновения идей. Рассмотрение поколений войн позволяет выявить приоритетные для современного этапа основные закономерности изменения их характера. В частности, в современных войнах особое внимание уделяется действиям по расчленению или истощению сил

противника, снижению зависимости от систем централизованного тылового обеспечения (логистики), широкому использованию маневра, организации боевых действий децентрализованно. Современным войнам присущи нелинейность, партизанский характер, активность террористического фактора и т. д. Следовательно, новые реалии порождают необходимость разработки новых доктрин, стратегий, концепций для эффективного противостояния угрозам и вызовам национальной безопасности.

GENERATIONS OF WAR: DEVELOPMENT OF WAR AT THE CURRENT STAGE

M. A. PETROSYAN, PhD in Political Sciences, Research Fellow, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Lecturer, Brusov State University

SUMMARY

The transformation of wars, the transition from one generation of wars to another, happen either due to the dynamic of the technological development, or the frequency of occurrence of ideas. The study of generations of wars makes it possible to discern the main patterns of their changing character, which are preemptive for the current stage. In particular, in present-day wars a special focus is on breaking down or exhausting the enemy's forces, reducing the dependence on the systems of centralized logistics, widely using the maneuver, and organizing combat operations in decentralized manner. Present-day wars are characterized by nonlinearity, guerrilla nature, the activity of the terrorist factor, etc. Hence, new realities bear the need to develop new doctrines, strategies, concepts in order to effectively counter the national security threats and challenges.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ – ԱՈՀԻ-ի պետ, Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ գիտնական-վերլուծաբան

Յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության ապահովման համակարգի համար կարևոր նշանակություն ունի քաղաքական-իրավական (ներառյալ՝ նորմատիվային) հենքի ձևավորումը՝ փոխհամաձայնեցված և փոխկապված օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համակցությամբ: Ընդհանրապես սոցիալական հարաբերությունների կարգավորման սկզբունքով ենթադրվում է, որ ամենավերին հարթակում գտնվող իրավական ակտը՝ սահմանադրությունը, սահմանում է հարաբերությունների կարգավորման իրավաքաղաքական հիմունքները, դրանից մեկ աստիճան ցածր գտնվող ակտերը՝ օրենքները, մանրամասնելով այդ հիմունքները, կարգավորում են հարաբերությունները կոնկրետ ոլորտներում և ածանցյալ հիմքեր են ստեղծում հաջորդ մակարդակում այդ հարաբերությունների կարգավորման համար, իսկ ստորին հարթություններում գտնվող ակտերը՝ ենթաօրենսդրական ակտերը, մանրամասն և դինամիկ կարգավորման են ենթարկում կոնկրետ հարաբերությունները:

Անվտանգության երկարաժամկետ քաղաքականությունը ուրվագծվում է այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են կառավարության միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, ազգային անվտանգության ռազմավարությունները, անվտանգության յուրաքանչյուր ոլորտին վերաբերող հայեցակարգային փաստաթղթերը, այդ թվում՝ պաշտպանական ու ռազմական դոկտրինները: Դրանցում ռիսկերի գնահատման հիման վրա սահմանվում են անվտանգության ապահովման համակարգի մարմինների հեռանկարային խնդիրները և գործառական առաջնահերթությունները: Ռազմավարական փաստաթղթերը քաղաքական դաշտ են ստեղծում հետագա բարեփոխումների համար և հանդես են գալիս որպես գործադիր մարմինների ենթաօրենսդրական ակտերի մշակման ու ծրագրային միջոցառումների պլանավորման և իրականացման հիմք:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավեր-

ներն ու առաջնահերթությունները համակարգված ձևով որպես ուղեցույց ներկայացված են ինչպես ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված առաջին «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում»[1], այնպես էլ 2020 թ. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում»[2]: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը «պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով»[3]:

Ռազմավարական փաստաթղթերի մշակումը ցանկացած պետության քաղաքական ղեկավարության կարևորագույն գործառույթներից է: Ռազմավարական փաստաթղթերի մշակման մեթոդաբանությունը, դրանց բովանդակությունն ու ձևը տարբեր պետություններում ունեն իրենց առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է այդ պետություններին բնորոշ քաղաքակրթական, պատմական և քաղաքական-պետական մշակույթով[4]: Այս առումով առաջավոր կարող է համարվել որոշ արևմտյան պետություններում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա և այլն) նման փաստաթղթերի մշակման փորձը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նախ այդ պետություններում կուտակվել է համապատասխան հարուստ փորձ՝ մշակման հատուկ մեթոդաբանությամբ հանդերձ: Միևնույն ժամանակ, կիրառվում են մեթոդաբանության երկու հիմնարար ուղղություններ՝ սպառնալիքակենտրոն *(threat-based)* և նպատակակենտրոն *(goal-based)*[5]: Թեև ցանկացած դեպքում հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են վտանգը, սպառնալիքը, մարտահրավերը, ռիսկը և այլն: Ավելին. այդ պետություններում նաև մշակվել և արդիականացվել է անվտանգային հասկացությունների գնահատման և վերլուծության հարուստ մեթոդաբանական գործիքակազմ[6]:

---

[1] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրի հավելված (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189):

[2] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում», 2020 թ. հուլիս (https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf):

[3] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189):

[4] Տես *S. Lincke.* Security Planning: An Applied Approach. N.Y.-London, 2015, PP. 103–109:

[5] Տես *Brandon Downs*. The 5 Strategic Planning Models That All Executives Should Know. «Business Benefits Group», 24 November 2017 (https://www.bbgbroker.com/strategic-planning-models/):

[6] Տես *R. Kugler.* Policy Analysis in National Security Affairs: New Methods for a New Era. Washington, 2006, PP. 35–61:

Օրինակ՝ ԱՄՆ-ի պրակտիկայում կան ռիսկերի գնահատման, վտանգների կանխման և սպառնալիքների հետմղման լուրջ մեխանիզմներ: Դրանք, անշուշտ, տարբեր պետություններում տարբեր են, բայց և այնպես ուղղված են միևնույն տեսակի անվտանգային խնդիրների լուծմանը[7]:

Ազգային անվտանգության ռազմավարության (ԱԱՌ) մշակումը բարդ և տևական գործընթաց է, որում էական է բոլոր նրբությունների և փոխադարձ կապերի ու փոխազդեցությունների հաշվառումը: Դրա հետ մեկտեղ ԱԱՌ-ի մշակման հիմքը ներկայի և ապագայի փոխկապակցումն ու իմաստավորումն են՝ միտված առկա վիճակից դեպի ավելի ցանկալի, բարենպաստ իրադրության անցմանը: Այդ նոր իրադրությունը ազգային անվտանգության քաղաքական նպատակն է, որի հասնելու համար նախատեսվում է ռեալ կարողությունների հաշվառմամբ (*capability-based*) իրագործելի ջանքերի կենտրոնացում: Ուստի ազգային անվտանգության ռազմավարության մշակման գործում կարևորվում են մրցակցային առավելությունները, որոնք կարող են ի հայտ գալ տարբեր բնույթի, մրցակցություններում, օրինակ՝ ազգ-պետությունների, էթնիկ միավորների, ոչ կառավարական և այլ դերակատարների միջև[8]:

Վերը շարադրվածից կարելի է հանգել այն եզրակացության, որ ԱԱՌ-ի մշակման հույժ կարևոր հարցերից է կոնկրետ մեթոդաբանության ընտրությունը[9]: Որպես հիմնական ուղղություններ առանձնացվում են նաև հետևյալ երկու եղանակները. ազգային անվտանգության մշակում ու դրա հիման վրա ոլորտային ռազմավարությունների ստեղծում և առանձին ոլորտային ռազմավարությունների մշակում ու դրանց միաբերմամբ մեկ ընդհանուր փաստաթղթի ստեղծում: Հայաստանում կիրառվել է առաջին եղանակը: Առհասարակ ԱԱՌ-ի մշակումն ու իրագործումը պահանջում են ռազմավարական մտածողություն, այնպիսի մի հասկացություն, որը բոլորը այս կամ այն չափով ըմբռնում են, բայց որը շատ դժվար է բավարար ձևով սահմանել: Այսպես. հայտնի անգլիացի մասնագետ Ձ. Ք. Սպենդերը «ռազմավարական մտածողությունը» սահմանել է որպես անորոշության հետ աշխատելու, այն հաղթահարելու հմտություն, եղանակ, գործընթաց, սոցիալական գործառույթ[10]: ԱԱՌ-ի առնչությամբ մասնագետները այն կարծիքին են, որ ռազմավարական մտածողությունը մեթոդաբանորեն ներառում է.

– ռազմավարական իրավիճակի վերլուծություն՝ դրան ուղղված մարտահրավերների և սպառնալիքների բացահայտմամբ,

[7] Տես *Ս. Լինկ,* Նշ. աշխ., էջ 61–81:

[8] Տես *L. Freedman.* Strategy: A History. N.Y., 2013, PP. 491–504, նաև՝ «Հատվածներ Լ. Ֆրիդմանի «Ռազմավարություն. պատմություն» աշխատությունից», հ. 1, 2: «ԱՏ», 2020, հմ. 1, 2:

[9] Տես “A National Security Strategy Primer”. Ed. by S. Heffington, A. Oler, A. Tretler. Washington, 2019, PP. 1–2:

[10] Տես *J.-C. Spender.* Business Strategy: Managing Uncertainty, Opportunity and Enterprise. OUP, Oxford, 2014, P. 24:

- վերջնանպատակի սահմանում ըստ ընդհանուր քաղաքական նպատակի՝ դրա անհրաժեշտության ձևակերպմամբ,
- անհրաժեշտ միջոցների (ռեսուրսների) պարզորոշում, ինչը հնարավորություն կտա խուսափելու անհարկի ծախսերից և ջանքերի վատնումից,
- վերջնանպատակին հասնելու օպտիմալ եղանակների և միջոցների որոշում,
- ռազմավարության իրագործման հետ կապված ծախսերի ու ռիսկերի վերլուծություն և գնահատում[11]:

Ազգային անվտանգության ռազմավարության մշակման կարևոր մեթոդաբանական փուլերից է ԱԱՌ-ի մշակման ընթացքի վերլուծությունն ու գնահատումը: Առհասարակ, ցանկացած գործընթացի պարբերական վերլուծությունն ու գնահատումը հնարավորություն են տալիս անընդհատ գործունեության մեջ ճշգրտումներ մտցնելու և չշեղվելու այն հիմնական ուղեգծից, որը ծրագրվել է և պետք է հասցնի նախանշված վերջնանպատակի: Բնականաբար այս գործընթացին մասնակցելու, դրա վրա ազդելու և որոշումներ կայացնելու տեսանկյունից շատ կարևոր է ռազմավարների դերը: Ի դեպ, լայն տարածում ստացած «մարտավար-ռազմավար» տարբերությունների առնչությամբ կարելի է ասել, որ «մարտավարը այն անձն է, որը պետք է իմանա, թե ինչ անել, երբ անելու բան կա, իսկ ռազմավարը հակառակը՝ պետք է իմանա, թե ինչ անել, երբ անելու բան չկա»[12]: Նման խոսքը շեշտում է ռազմավարի (ռազմավարություն մշակողի) ստեղծագործական մոտեցումներ դրսևորելու կարևորությունը, քանի որ ցանկացած, հատկապես՝ ճգնաժամային, իրավիճակների համար նրա առաջարկած լուծումներից է կախված ծառացած հիմնախնդիրների կարգավորումը:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ռազմավարի բազմաթիվ կարողություններին և հմտություններին ներկայացվող մեծ թվով պահանջներ, քանի որ նա դրանց շնորհիվ կկարողանա հնարավորինս անվնաս և շահավետ կերպով կազմակերպել ԱԱՌ-ի մշակման մեթոդական գործընթացը: 19-րդ դարում գերմանացի ռազմական տեսաբան Կառլ ֆոն Կլաուզևիցը ռազմական հանճարի մասին գրել է. «Որպեսզի միտքը անվնաս դուրս գա անկանխատեսելիության հետ անողոք պայքարից, անհրաժեշտ է երկու հատկանիշ. նախ՝ ինտելեկտ, որը, նույնիսկ ամենախավար ժամանակում ներքին լույսից փայլեր արձակելով, տանում է դեպի ճշմարտություն, և երկրորդ՝ քաջություն, որպեսզի հետևես այդ լույսին, ուր որ կուղղորդի քեզ»[13]: Ռազմավարին ներկայացվող պահանջներից ներկայացնենք մեր կարծիքով առավել կարևորները.

[11] Տես “Security Planning and Design: A Guide for Architects and Building Design Professionals”. Ed. by Joseph A. Demkin. The American Institute of Architects. Chicago, 2004, PP. 37–49:

[12] Տես *L. Paquette.* Political Strategy and Tactics: A Practical Guide. N.Y., 2002, PP. 102–103:

[13] *Carl von Clausewitz.* On War. Oxford University Press, 2006, PP. 183–184:

- կանխատեսել իրավիճակը մի քանի տարվա կտրվածքով (օրինակ՝ 3-5 տարի):
- իրավիճակը վերլուծելիս գտնել պատճառահետևանքային կապերը, այսինքն՝ թե ինչ է տեղի ունենում, կարողանալ տեսնել և իմանալ ավելին, քան հակառակորդը,
- ի հայտ բերել և ձևակերպել երկարաժամկետ նպատակները, որոնք, որոշակի պատճառներով չեն փոխվում կամ շատ քիչ են փոխվում,
- դրսևորել կարճաժամկետ խնդիրներ (ծրագրեր) իրագործելու ճկունություն, քանի որ դրանք կազմում են դեպի վերջնանպատակ տանող միջանկյալ նպատակների հաջորդականություն,
- նախագծել և պատրաստի ունենալ սցենարներ (կամ ծրագրեր)՝ ոչ միայն դրական, այլև բացասական արդյունքների դեպքերի համար,
- նախագծել և իրագործել նպատակին հասնելու բազմամակարդակ եղանակներ,
- կենտրոնանալ գործընթացի արդյունավետության վրա. պարբերաբար վերանայել մարտավարական որոշումները և գործողությունները ավելի արդյունավետ մոտեցումներ գտնելու համար:

Հարկ է, որ ԱԱՌ-ի մշակմանը մասնակցող պետական գերատեսչությունների աշխատողները և փորձագետները ունենան համապատասխան որակավորում: ՀՀ ներկայիս ԱԱՌ-ում առկա մի շարք պրոբլեմների պատճառը հենց այս բացն է, ինչը ՀՀ-ում ռազմավարների ինստիտուտի և ըստ այդմ՝ ռազմավարական մտածողության չձևավորվածության հետևանք է:

Ազգային անվտանգության ռազմավարության և առհասարակ բոլոր տեսակի ռազմավարությունների մշակման գործը հենվում է երեք բաղադրիչների, կամ տարրերի, համադրություն վրա. դրանք են միջոցները *(means)*, եղանակը *(way)*, և պահանջվող արդյունքը վերջնանպատակ *(desired ends)*: Ավելին, ԱԱՌ-ի դեպքում առավել կարևոր են համարվում երկու բաղադրիչը՝ ընդհանուր (քաղաքական) նպատակները և հատուկ (կոնկրետացված) նպատակները:

Քաղաքական նպատակները այն ակնկալվող արդյունքներն են, որոնք սահմանում է պետության քաղաքական վերնախավը և որոնց ձեռքբերմանն է միտված տվյալ ռազմավարությունը[14]: Քաղաքական նպատակները պետք է լինեն տրամաբանորեն հստակ կերպով շաղկապված և իրատեսական, քանի որ ԱԱՌ-ն է այն հիմնական գործիքը, որը կամրջում է առկա իրավիճակը և պետության քաղաքական նպատակները: Հենց քաղաքական նպատակի ընտրությամբ են ձևավորվում բուն ԱԱՌ-ի մեթոդաբանական առանձնահատկությունները, և նախագծվում է պահանջվող արդյունքը: Օրինակ՝ երկրորդ աշխարհամարտի տարիներին դաշնակից պետությունների ռազմավարական նպատակն էր առանցքի պետությունների (Գերմանիա, Իտա-

[14] Տես *R. Dahl.* Polyarchy: Participation and Opposition. New Haven, 1971, PP. 202–207:

լիա և Ճապոնիա) անվերապահ կապիտուլացումը: Երբ դա տեղի ունեցավ, և պատերազմն ավարտվեց, նաև ավարտվեց այդ քաղաքական նպատակին հասնելու ռազմավարությունը: Քաղաքական նպատակը սահմանելիս ռազմավարը պետք է հաշվի առնի դրան հասնելու հետ կապված ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր-գաղափարական ծախսերը, ռիսկերը և սահմանափակումները:

Վերոնշյալից ակնհայտորեն բխում է, թե ազգային անվտանգության ռազմավարության մշակման համար որքա՛ն կարևոր են ազգային շահերի ճիշտ որոշումն ու գնահատումը: Շահերը պետք է ծառայեն որպես կշռաքար տվյալ պետության դեմ ուղղված սպառնալիքները գնահատելու համար: Միևնույն ժամանակ, շահերի իրատեսական դասակարգումն ըստ գերակայությունների հնարավորություն կտա ԱԱՌ-ում սահմանելու անհատի, հասարակության և պետության բարեկեցության ապահովման օպտիմալ ուղիները: Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ազգային շահերի դասակարգման տարբեր չափանիշներ: Ընդհանրացնելով դրանք՝ նշենք հետևյալները. կենսական, կարևոր և նվազ կարևոր շահեր: ՀՀ ԱԱՌ-ում (2020 թ. փաստաթղթում) կիրառվում է «հիմնարար» տերմինը՝ առաջացնելով երկու խնդիր: Նախ. մասնագիտական գրականության մեջ շահերի առնչությամբ չի գործածվում, ուստի հասկանալի չէ, թե դրանք ո՛ր շահերն են: Երկրորդ. որպես հիմնարար շահեր են ներկայացվում ըստ էության համամարդկային արժեքները և պարզ ճշմարտությունները, ինչպես, օրինակ, մարդու իրավունքները, խաղաղությունը, ժողովրդավարությունը և այլն:

ԱԱՌ-ի մշակման մեթոդական բաղադրիչների համատեքստում կարևոր են նաև միջոց-եղանակ բաղադրիչների բաղդատումը և առադրումը: Ռազմավարական մակարդակում ԱԱՌ-ի մշակման միջոցներն ունեն երեք բաղադրիչ՝

- իշխանության տարրեր,
- հաստատություններ և դերակատարներ,
- իշխանության գործիքներ:

Իշխանության տարրերը պետության հզորության ստեղծման և պահպանման հիմքն են: Միևնույն ժամանակ, հարկ է նաև նկատել, որ գոյություն չունի իշխանության տարրերի համընդունելի համաձայնեցված ցանկ, թեև արևմտյան պետությունների ԱԱՌ-ների մշակման փորձի հաշվառմամբ, կարող ենք առանձնացնել հետևյալները. բնական ռեսուրսներ, մարդկային կապիտալ, մշակույթ, աշխարհագրություն, կառավարում, ազգային կամք, տնտեսություն և այլն: Կախված իրավիճակից՝ որպես իշխանության գործիքներ կարող են օգտագործվել միջոցների բաղադրիչներից հաստատություններն ու դերակատարները: Հաստատություններ և դերակատարներ կարող են լինել, օրինակ, ՀՀ ԱԳՆ-ն, ՊՆ-ն, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները և հեղինակավոր անձինք (օրինակ՝ Շառլ Ազնավուրը, օգտագործելով բազմաթիվ իշխանության գործիքներ, տասնյակ տարիներ շարունակ օժանդակել է ՀՀ պետութենաշինությանը): Այս տեսանկյունից հիշատակության է արժանի ՁԼՄ-ների, ՀԿ-ների և ան-

հատ գործարարների ու լրագրողների դերը որոշումների կայացման վրա նրանց ունեցած ազդեցության առումով: Այս համատեքստում շեշտված է նաև քաղաքացիական հասարակության հաստատությունների դերը:

Հաստատություններն ու դերակատարները հետապնդում են ռազմավարական բնույթի ծրագրերի նախագծման և իրականացման համար «ուժ ու հզորություն»* ցուցադրելու նպատակներ, որոնք իրականացվում են չորս հիմնական՝ դիվանագիտական, տեղեկատվական, ռազմական և տնտեսական, *գործիքների* կիրառմամբ (ԴՏՌՏ/DIME): ԴՏՌՏ յուրաքանչյուր գործիք օժտված է մի շարք հիմնարար կարողություններով: Ռազմավարի խնդիրն է ստեղծված իրավիճակում որոշել, թե այդ հնարավորությունների ո՞ր համադրությունն է առավել հարմար առկա իրավիճակը կարգավորելու համար: Ուստի այդ ջանքերը պահանջում են վերջնանպատակին հասնելու համար յուրաքանչյուր գործիքի օգտակարության գնահատում: ԱԱՌ-ի մշակման մեթոդաբանության շրջանակներում եղանակների ընտրության գործում կարևոր է դրանց՝ որպես փոխհամաձայնեցված բաղադրիչների ներդաշնակ համադրումը:

ԱԱՌ-ի մշակման ժամանակ հարկ է լինում տեղեկությունների անորոշությունների պայմաններում դիմել ենթադրությունների օգնությանը: Եթե ենթադրությունը ճշգրտելու կարիք չկա, ապա ճշմարիտ է և պետք է ռազմավարության մշակման ամբողջ ընթացքում ընդունվի որպես ճշգրիտ ու գնահատվի: Ենթադրություններն օգնում են գնահատելու պահանջմունքների գերակայությունը և սահմանելու շահերը, ինչպես նաև պարզելու և վերլուծելու դրանց դեմ ուղղված սպառնալիքները: Մրցակիցների շահերի և մտադրությունների մասին ենթադրությունները նույնպես կարևոր են, որպեսզի ըմբռնելի դառնան նրանց ներուժը, շարժառիթները, ինչպես նաև գնահատվեն նրանցից բխող վտանգներն ու ռիսկերը:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ***սպառնալիքների գնահատմանը և վերլուծությանը***: Ինչպես և շահերի դեպքում, ռազմավարը իրական առավելություն է ստանում՝ առաջնություն տալով այն սպառնալիքներին, որոնք առավել վտանգավոր կամ հավանական են[15]: Այդպիսով՝ հնարավոր է դառնում ռազմավարությունը կենտրոնացնել ամենակարևոր հանգամանքների վրա: Կենսական նշանակության պետական շահի դեմ ուղղված լուրջ սպառնալիքը կպահանջի մի պատասխան, երկրորդական ազգային շահի դեմ ուղղված չնչին սպառնալիքը՝ այլ:

Մյուս կարևոր հարցը ***հնարավորությունների գնահատումն ու վերլուծությունն*** է: Ազգային անվտանգության մշակողները պետք է կարողանան

* Ուժը օբյեկտի և դրա շրջապատի վրա սուբյեկտի գործած ֆիզիկական ազդեցություն է և նպատակաուղղված է օբյեկտին իրեն ենթարկելու: Միևնույն ժամանակ, ուժը միայն ֆիզիկական հասկացություն չէ, այն ենթադրում է նաև հոգեբանական ներգործություն: Քաղաքական հզորությունը հոգեբանական հարաբերություն է (դրա իրականացնողի սուբյեկտի) և օբյեկտի միջև:

[15] Տես “Security Planning and Design: A Guide for Architects and Building Design Professionals”, PP. 21–34:

կողմնորոշվել, թե երբ է ռազմավարական իրավիճակը հնարավորություն տալիս առաջ մղելու տվյալ ազգային շահը: Կարևոր է հնարավորությունները չշփոթել այն առավելությունների հետ, որոնք ստեղծվում են սպառնալիքը հաջողությամբ չեզոքացնելու դեպքում:

ԱԱՌ-ի մշակման ընթացքում հույժ կարևոր են ծախսերի և ռիսկերի հստակեցումը և ճշգրիտ հաշվարկումը: Դրանցից առաջինը քաղաքական նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոցների ծախսն է: Ներառում է այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ռազմավարական արժեք ունեցող որևէ բան ձեռք բերելու, կառուցելու, գործարկելու, պաշտպանելու, փոխակերպելու, ինչ-որ բանի հասնելու համար՝ լինի դա նյութական, թե հոգևոր: Ռազմավարները պետք է հաշվի առնեն առնվազն երեք կարգախմբի ծախսեր՝ ռեսուրսների (կյանք, գումար, պայմաններ, ժամանակ), քաղաքական և այլընտրանքային: Բացի այդ, ռազմավարները պետք է հաշվի առնեն անգործությամբ պայմանավորված ծախսերը:

Ռիսկերի դեպքում գնահատվում է վտանգների հետ կապված կորուստների հավանականությունը: Ռիսկի լրջությունը պայմանավորված է ինչպես դրա առաջացման հավանականությամբ, այնպես էլ դրանով պատճառվելիք վնասի չափով: Ռիսկի հաշվարկման ճշգրիտ բանաձև չկա: Ռիսկն ակներև է դառնում, եթե ռազմավարն ի վիճակի է լինում խորաթափանց ու անաչառ կերպով վերլուծելու խնդիրը՝ կանխատեսելով դրանով պայմանավորվող վտանգների ու բարդությունների ծագման հավանականությունը: Ռազմավարները պետք է գնահատեն ինչպես ռազմավարությանն ուղղված, այնպես էլ ռազմավարությունից բխող ռիսկերը:

Եվ, վերջապես, ԱԱՌ-ի մշակման, գնահատման և վերլուծության փուլի եզրափակումն ու արդյունավետությունը պայմանավորում են երկու հանգամանք՝ ***ռազմավարության կենսունակության պարբերաբար կատարվող գնահատումները և ճշգրտումները***[16]: Տվյալ աշխատանքը պետք է սկսել համապատասխանության հաշվառումից՝ թե արդյոք ԱԱՌ-ը կպաշտպանի կարևոր ազգային շահերը և չի գործի ազգային մակարդակի այլ ռազմավարական փաստաթղթերի, որդեգրած քաղաքականության և հռչակված նպատակների դեմ: Մշակողներն ու փորձագետները պետք է ստուգեն ռազմավարության իրագործելիությունը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի պարզել, թե արդյոք ռազմավարությունը կարող է հասանելի դարձնել քաղաքական նպատակը: Ընդունելիության փորձարկման ժամանակ որոշվում է, թե գործողության պլանը, արդյոք, համահունչ է պետության որդեգրած արժեքներին, հասարակական տրամադրություններին, ներքին մտահոգություններին, դաշնակիցների և գործընկերների հետաքրքրություններին: Հարկ է նաև պարզել, թե արդյոք քաղաքական նպատակին հասնելու համար ռեսուրսները, քաղաքական կամքն ու բնակչության աջակցությունը երկարաժամկետ հեռանկարում կլինեն բավարար և կայուն: Ինչ վերաբերում է ԱԱՌ-ի մշակման պար-

[16] Տես *Ռ. Կագլեր,* Նշ. աշխ., էջ 35–61:

բերական ճշգրտումներին, ապա ոչ մի ռազմավարություն զերծ չէ սխալներից: Որոշ ենթադրություններ միմիայն դատողություններ են, թե ինչպես հակառակորդը կարող է արձագանքել ռազմավարության այս կամ այն դրույթին: Երբ պարզվում է, որ ենթադրությունները սխալ են եղել, մշակողը պետք է ռազմավարության նպատակները, միջոցները և եղանակները համապատասխանեցնի նոր իրողությանը: Պետք է նկատի ունենալ, որ հակառակորդները պասիվ թիրախներ չեն, այլ կանեն ամեն հնարավորը տվյալ ծրագրի իրագործումը խափանելու կամ կանխելու և իրենց շահերը հնարավորինս առաջ մղելու համար:

Ցանկացած ռազմավարության հաջող իրականացումը ենթադրում է հակառակորդի քայլերի մշտազննում, որպեսզի պատեհաժամորեն կատարվեն համապատասխան «թարմացումներ»: Մինչդեռ ՀՀ 2020 թ. ԱԱՌ-ի եզրափակիչ դրույթներում նշված է, որ այն պետք է վերանայվի ոչ ուշ, քան հինգ տարին մեկ[17]: Իհարկե, միջազգային փորձից դժվար է ճշգրտորեն որոշել, թե որքան ժամանակ հետո ԱԱՌ-ը պետք է վերանայվի, սակայն կարծիք կա, որ դա պետք է պայմանավորել ոչ թե արհեստականորեն սահմանված ինչ-որ կոնկրետ տարիներով, այլ փոփոխման օբյեկտիվ անհրաժեշտությամբ: ՀՀ-ում ԱԱՌ-ն ընդունվել է լայնամասշտաբ պատերազմից 2 ամիս առաջ, ուստի առնվազն անհրաժեշտ է պատերազմի արդյունքների հաշվառմամբ կատարել հիմնովին փոփոխություններ:

ՀՀ անվտանգային քաղաքականության մշակման, արդիականացման և արդյունավետության մեծացման հարցերը միշտ քննում են պետության քաղաքական-հասարակական շրջանակները: Տարիներ շարունակ ընդունվել են տարբեր անվտանգային փաստաթղթեր, որոնք, նպատակաուղղված լինելով անվտանգության ապահովմանը, կատարողականության առումով չեն ապահովել դրանցով նախանշված խնդիրների բավարար կարգավորումը: Այդպիսի անվտանգային փաստաթղթերի շարքում առաջին հերթին առանձնանում է Ազգային անվտանգության ռազմավարությունը: Մինչդեռ հենց դրա մշակման փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում չի ձևավորվել նման մակարդակի փաստաթղթերի կազմման մշակույթը, այլ հակառակը՝ առաջին ռազմավարության մշակման մեթոդաբանությունը ոչ միայն չզարգացվեց և տեղայնացվեց, այլև ի սպառ մերժվեց: Այնինչ արդի քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է, որպեսզի պատշաճ մակարդակով կատարվի անվտանգային հարցերի փաստաթղթավորում, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար ձևավորելու անվտանգային ռազմավարական փաստաթղթերի մշակման մեր իսկ մշակույթը:

ՀՀ ԱԱՌ-ի առաջին մշակումը կատարվել է 2007 թ. և մոտ 14 տարի դրանում որևէ բովանդակային թարմացում չի եղել: Ավելին. «ՀՀ ազգային

[17] Տես «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում», կետ 8.4, էջ 40 (https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf):

անվտանգություն» հասկացության սահմանումը տրված է եղել ոչ թե ռազմավարական փաստաթղթի, այլ ծառայողական նշանակության «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում, որտեղ նշվում է, որ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից»[18]:

Որպես էական մեթոդաբանական սխալ կարող ենք նշել նաև այն փաստը, որ, օրինակ, ՀՀ 2020 թ. ԱԱՌ-ում լուրջ վերլուծության չի ենթարկվել սպառնալիքների աղբյուրի (այսինքն՝ այն ստեղծող ուժի, երևույթի, գործընթացի, հանգամանքի) հարցը: Այսպես. որպես հիմնական սպառնալիքներ են դիտարկվում Ադրբեջանի գործողությունները, սակայն որևէ էական դրույթ չի արծարծում Թուրքիայի դերը: Կարծում ենք, որ այս փաստը վերջին 44-օրյա պատերազմից հետո պետք է վերանայվի, թեև հայության համար Թուրքիայից բխող սպառնալիքը երբեք էլ չի եղել գաղտնիք: Միևնույն ժամանակ, տվյալ հարցում կարևոր մեթոդաբանական խնդիր պետք էր համարել արտահայտությունների որոշակի դիվանագիտական զգուշավորությունը, որպեսզի դա առիթ չտար Թուրքիային շահարկելու տվյալ հանգամանքը[*]: Այդուհանդերձ, հարց է առաջանում, թե ինչու մինչև վերջին պատերազմը ռազմավարական մակարդակով պատշաճ կերպով չէր գնահատվել ու վերլուծվել թուրքական ռազմաքաղաքական սպառնալիքի գործոնը:

Ամփոփելով՝ նշենք, որ ԱԱՌ-ի մշակման համատեքստում, մեթոդաբանության հետ մեկտեղ, հույժ կարևոր են բովանդակության, ձևի և կիրարկման խնդիրները: Մասնավորապես՝ մի շարք պետություններում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, ՌԴ) տվյալ փաստաթուղթը հստակորեն ձևակերպված անվտանգային խնդիրների և դրանց լուծմանն ուղղված համահավաք ջանքերի համախումբ է: Այսինքն՝ ԱԱՌ-ները, ըստ էության բխելով ներկա իրողություններից և գործընթացներից, պետք է մատնանշեն այն ցանկալի արդյունքը–տեսլականը, որին պետք է ձգտի պետությունը տվյալ ռազմավարությամբ ուրվագծվող գործողություններով: Իրականում նման փաստաթղթերի կազմման հիմքը՝ «ձևը հաջորդում է բովանդակությանը» կամ «ձևը լրացնում է բովանդակությանը», գաղափարն է: Սա ասելով բնավ նկատի չունենք, որ ՀՀ ԱԱՌ-ի մշակման գործում ձևը էական չէ: Խնդիրն այն է, որ ԱԱՌ-ի բովանդակության մեջ տեղ գտած առաջնահերթությունները լիովին ներկայացված լինեն յուրատիպ ոճական և տեխնիկական մոտեցումներով, ինչը հնարավո-

[18] ՀՀ 2001 թ. դեկտեմբերի 28-ի «Ազգային անվտանգության մարմինների մասին» հմ. ՀՕ-294 օրենքը (https://www.arlis.am/documentview.aspx?docID=90824):

[*] Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ Թուրքիային նման պատրվակ ամենևին էլ պետք չէր:

րություն կտա ավելի գրավիչ և ընկալելի դարձնելու մատուցվող նյութը: Մինչդեռ ՀՀ-ի նման պետություններում, ի տարբերություն, օրինակ, առաջատար արևմտյան պետություններից, ԱԱՌ-ները իրենց բովանդակային նշանակության իմաստով հաճախ կրում են ձևական բնույթ՝ արտահայտելով այդ պետությունների ռազմաքաղաքական ղեկավարության՝ զուտ ռազմավարական փաստաթուղթ ունենալու ձգտումը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВРЕМЕННОЙ МЕТОДОЛОГИИ РАЗРАБОТКИ СТРАТЕГИЙ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ (НА ПРИМЕРЕ РА)

Т. Т. КОЧАРЯН, полковник, доктор политических наук, профессор, заместитель Начальника НИУО МО РА по образованию и науке – Начальник ИНСИ,
Н. Г. ГРИГОРЯН, кандидат политических наук, старший ученый-аналитик НИУО МО РА

РЕЗЮМЕ

Разработка стратегических документов – одна из важнейших функций политического руководства любого государства. Методология разработки стратегических документов, их содержание и форма в различных государствах имеют свои особенности, что обусловлено характерной для них цивилизационной, исторической, политико-государственной культурой.

Разработка Стратегии национальной безопасности (СНБ) – сложный и длительный процесс, в котором важно учитывать все тонкости, взаимосвязи и взаимодействия. Вместе с тем в основе разработки СНБ лежат взаимосвязь между настоящим и будущим и их осмысление, нацеленные на переход из существующего состояния в более желательную, благоприятную обстановку.

В контексте разработки СНБ, наряду с методологией, очень важны вопросы содержания, формы и приложения. В частности, в ряде государств (США, Великобритания, РФ) данный документ представляет собой комплекс четко сформулированных безопасностных задач и совместных усилий по их решению.

SOME ISSUES OF MODERN METHODOLOGY OF THE DEVELOPMENT OF THE NATIONAL SECURITY STRATEGIES (THE CASE OF THE RA)

T. T. KOCHARYAN, Colonel, Doctor of Political Sciences, Professor,
Deputy Head in Education and Research, NDRU, MOD, RA – Head of INSS,
N. H. GRIGORYAN, PhD in Political Sciences, Senior Research Fellow,
NDRU, MOD, RA

SUMMARY

The development of strategic documents is one of the most important functions of the political leadership of any state. The methodology of the development of strategic documents, their content and form have their peculiarities in each state – this being determined by the civilizational, historical, political and state culture typical of them.

National Security Strategy (NSS) development is a complicated and lengthy process, in which all the nuances, interconnections and interrelations should be taken into consideration. With that, the correlation between the present and the future and their perception, aiming at the transfer from the current situation into more preferable, favourable circumstances, underlie the NSS development.

Within the scope of the development of NSS, along with the methodology, the issues of content, form and application are of utmost importance. In particular, in a number of states (USA, Great Britain, RF) this document represents a complex of articulated security issues and joint efforts of addressing them.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գ. Վ. ՏԱՎԱՐԱԾՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ

Ինչպես ցույց է տալիս վերջին շրջանի պատերազմների ու զինված հակամարտությունների փորձը, տեղի է ունենում պատերազմների ընդհանուր բնույթի, հատկապես՝ սպառնալից շրջանի և սկզբնական փուլի բովանդակության էական փոփոխություն: Մասնավորապես՝ պատերազմը կարող է սկսվել առանց հարձակվող կողմի ԶՈՒ-ի լրիվ կամ մասնակի զորահավաքի, միայն ՈԳԹ-ում գտնվող խմբավորումների ուժերով, ընդսմին սպառնալից շրջան ևս կարող է չլինել[1]: Այն կարող է սկսվել և ավարտվել միայն մեկ հարձակողական օդային (օդատիեզերական) օպերացիայի իրագործմամբ: Այդ օպերացիայի առաջին փուլում պատերազմում նախաձեռնությանը տիրելու համար զանգվածեղ հարվածներ են հասցվում հակառակորդի պատասխան հարվածի միջոցներին, առավել կարևոր ռազմական ու ռազմատնտեսական օբյեկտներին, պետության ու ԶՈՒ-ի կառավարման մարմիններին և ՀՕՊ-ի համակարգերին: Երկրորդ փուլում հակառակորդի տնտեսական ներուժի և պետության ու ԶՈՒ-ի կառավարման համակարգի քայքայումը ավարտին հասցնելու և ռազմարշավի ռազմավարական ու քաղաքական նպատակներին հասնելու համար տիեզերական, օդային ու ծովային բազավորմամբ գերճշգրիտ միջոցներով զանգվածեղ հարվածներ են հասցվում նրա թիկունքային օբյեկտներին[2]:

Վերը շարադրվածից միանշանակ կերպով հետևում է, որ պետք է վերանայվեն նաև պաշտպանական ոլորտում ռազմավարական պլանավորման[3] և ռազմավարական որոշումների կայացման համակարգաստեղծ սկզբունքներն ու մեթոդաբանությունը:

---

[1] Տես «Угрожаемый период». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под ред. Д. А. Рогозина (https://war_peace_terms.academic.ru/814/УГРОЖАЕМЫЙ_ПЕРИОД):

[2] Տես *В. П. Малышев, Э. Я. Богатырев.* Анализ военных угроз национальной безопасности России и их влияние на планирование мероприятий гражданской обороны. «Стратегия гражданской защиты: проблемы и исследования», 2014, т. 4, № 2:

[3] Ռազմավարական պլանավորման մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Վ. Տավարածյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական պլանավորումը որպես պաշտպանական համակարգի հետևողական զարգացման անհրաժեշտ գործիք: «ՀԲ», 2018, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2018/08/hb-2018-n-1-2.pdf):

Ռազմավարական պլանավորման համընդգրկուն և համալիր էության, մոդելների, յուրահատկությունների հաշվառմամբ առանձնացնենք երկու ուղղություն՝ ըստ լայն և նեղ իմաստների ու ոլորտների: Դրանք են՝ «ռազմավարական պլանավորումը պաշտպանական ոլորտում» (լայն իմաստով) և «ռազմավարական պլանավորումը ռազմական ոլորտում» (նեղ իմաստով):

«Պետության ռազմավարական պլանավորումը պաշտպանական ոլորտում» *(«Стратегическое планирование в сфере обороны»; "Strategic Defense Planning"),* կամ այլ կերպ ասած՝ **«Պաշտպանության ռազմավարական պլանավորումը»,** 2017 թ. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում սահմանվում է որպես. «**ռազմական անվտանգության համակարգի կարողությունների և կառուցվածքի պլանավորմանն ու զարգացմանն ուղղված համընդգրկուն, աստիճանակարգված, հեռանկարին միտված և շարունակական գործընթաց»**[4]:

Ռուսաստանյան ռազմական մշակույթում «ռազմավարական պլանավորում» հասկացությունը սահմանվում է որպես «զինված ուժերի և մյուս զորքերի պատրաստման, պատերազմում կիրառման և համակողմանի ապահովման կարգի, եղանակների որոշում»[5], կամ՝ «ռազմաքաղաքական ու ռազմավարական իրադրության վերլուծության և զինված պայքարի վարման, կազմակերպման ու ապահովման նպատակների, ուժերի, միջոցների ու եղանակների որոշման գործընթաց»[6]: Դա պաշտպանությանը պետության ու զինված ուժերի պատրաստման, ինչպես նաև տարբեր ձևերի ռազմավարական գործողությունների նախապատրաստման կարևոր բաղկացուցիչ մասն է: Այն ներառում է օպերատիվ-ռազմավարական հաշվարկումներ, կանխատեսումների կատարում և ռազմավարական պլանավորման համապատասխան փաստաթղթերի մշակում[7]:

Տվյալ գործընթացը կազմակերպվում է երկու մակարդակով՝ համապետական և ՌԳԹ:

Առաջին մակարդակը (ԶՈՒ-ի կիրառում պատերազմում) ներառում է պատերազմի վարման, ԶՈՒ-ի ռազմավարական կիրառման ու ռազմավարական ծավալման պլանների, զորահավաքային պլանի, ռազմավարական պաշտպանական ուժերի օպերացիաների, ռազմավարական, օպերատիվ, հատուկ տեխնիկական և թիկունքային ապահովման, կառավարման կազմակերպման պլանի և այլ պլանների մշակում:

Երկրորդ մակարդակը (ռազմավարական օպերացիաների վարում ՌԳԹ-ներում) ներառում է մայրցամաքային և օվկիանոսային ՌԳԹ-ներում

[4] Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Պաշտպանության մասին» հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 3. «Օրենքի հիմնական հասկացությունները» (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117631):

[5] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 1450:

[6] Տես «Стратегическое планирование». «Война и мир в терминах и определениях» (https://war_peace_terms.academic.ru/719/СТРАТЕГИЧЕСКОЕ_ПЛАНИРОВАНИЕ):

[7] Տես նույն տեղում:

ռազմավարական օպերացիաների պլանների, ինչպես նաև օդային, հակաօդային, դեսանտային, հակադեսանտային, շարժունակ ուժերի, խաղաղապահական ուժերի, ՁՈՒ-ի տեսակների օպերացիաների պլանների մշակում:

Ռազմավարական պլանավորման կարևոր ուղղություններից են պետությունը խաղաղ ժամանակի դրությունից պատերազմական ժամանակի դրության փոխադրելու, պատերազմի, տնտեսական, գաղափարախոսական, դիվանագիտական ապահովումը կազմակերպելու և այլ պլանների մշակումները:

Խաղաղ ժամանակ ռազմավարական պլանավորման փաստաթղթերը համակարգված կերպով ճշգրտվում են իրադրության փոփոխության հաշվառմամբ:

Պատերազմական ժամանակ ռազմավարական պլանավորման փաստաթղթերը ճշգրտվում են պատերազմի իրական պայմաններին, ինչպես նաև ռազմաքաղաքական և ռազմավարական բնույթի նոր խնդիրներին համապատասխան[8]:

Արևմտյան ռազմաքաղաքական մշակույթում գոյություն ունեն ռազմավարական պլանավորման, ինչպես նաև բուն ռազմավարության բազմաթիվ սահմանումներ: Այսպես. ռազմավարական պլանավորումը (*Strategic Planning*, կամ *Strategic Planning Process*) «կազմակերպական կառավարման գործունեություն է, որն օգտագործվում է գերակայություններ սահմանելու, էներգիան ու ռեսուրսները կենտրոնացնելու, գործունեությունն ակտիվացնելու, ընդհանուր նպատակներին հասնելու համար ծառայողների ու բաժնետերերի գործունեությունն ապահովելու, նախատեսվող հետևանքների (արդյունքների) վերաբերյալ համաձայնության գալու, ինչպես նաև կազմակերպության ուղղվածությունը գնահատելու և փոփոխվող միջավայրին համապատասխան ճշգրտելու նպատակով: Դա կանոնակարգված ջանք է, որն առաջ է բերում այնպիսի հիմնարար որոշումներ ու գործողություններ, որոնք, լինելով ապագային միտված, ուրվագծում և ուղենշում են այն, թե *ինչ* է ներկայացնում տվյալ կազմակերպությունը, *ում* է ծառայում, *ինչ* է անում և *ինչու* է դա անում: Արդյունավետ ռազմավարական պլանավորումը ոչ միայն հստակ կերպով ձևակերպում է, թե *ուր* է գնում կազմակերպությունը, թե *ինչ* (ընդգծումը մերն է – *Գ. Տ.*) քայլեր է պետք ձեռնարկել, այլև այն, թե ինչպես որոշել, հաջողակ է նա, թե ոչ»[9]:

Ըստ արևմտյան մոտեցումների՝ գոյություն ունեն ռազմավարական պլանավորման 5 հիմնական մոդելներ. հիմքային, նպատակակենտրոն, կամ խնդրակենտրոն, համաձայնեցված ռազմավարական, սցենարային, օրգանական:

Ռազմավարական պլանավորման հիմքային մոդելը *(Basic Strategic Planning Model)* ներառում է նպատակը, մոտեցումները, ռազմավարությունները, ռազմավարությունների իրականացման գործողությունների պլանները, որոնք վերահսկվում ու պարբերաբար թարմացվում են:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես “Strategic Planning Basics” (https://balancedscorecard.org/strategic-planning-basics/):

Նպատակակենտրոն, խնդրակենտրոն, կամ ռազմավարական պլանավորման մոդելը *(Issue- or Goal-Based Strategic Planning Model)* ներառում է «ՈՒԹՀՍ» (SWOT*) վերլուծություն, գլխավոր նպատակների և խնդիրների առաջադրում, գործողությունների պլանի մշակում, բյուջեի հաստատում, կատարում և վերահսկողություն:

Համաձայնեցված ռազմավարական պլանավորման մոդելը *(Alignment Strategic Planning Model)* ուրվագծում է առաքելությունը, ռեսուրսները և գործողությունները, հուշում է, թե ինչն է անհրաժեշտ փոփոխել, ինչպես իրագործել փոփոխությունները, որոնք կատարվում են ռազմավարական պլանավորման մեջ:

Սցենարային ռազմավարական պլանավորման մոդելը *(Scenario Strategic Planning Model)* նախատեսում է տարբեր սցենարների մշակում (ընդսմին յուրաքանչյուր սցենարի համար քննարկվում են երեք հնարավորություններ՝ վատագույն, լավագույն, խելամիտ), մտային գրոհ *(brainstorming)*, թե ինչպես է պետք արձագանքել սցենարներից յուրաքանչյուրին կամ թե ինչպես կարելի է հզորացնել կազմակերպությունը:

Օրգանական ռազմավարական պլանավորման մոդելը *(Organic Strategic Planning Model)* հստակեցնում է արժեքները, ձևակերպում տեսլականը, ընդսմին քննարկվում են տեսլականի իրականացման ուղիները, ստեղծում է ռազմավարական պլանավորման տվյալ մոդելի իրականացման մշակույթ, կենտրոնանում է կրթության և ուսումնառության վրա[10]:

Ընդսմին արևմտյան մոտեցմամբ (ԱՄՆ, ՆԱՏՕ) ռազմավարական պլանավորումը, ռազմավարությունը և ռազմավարական որոշումների կայացումը հաճախ դիտվում են որպես եթե ոչ հոմանիշներ, այլ առնվազն որպես շատ սերտ կերպով հարաբերվող հասկացություններ: Այսպես. «ՌԷՆԴ» կորպորացիայում կատարված հիմնարար հետազոտություններից մեկում «ռազմավարությունը» դիտարկվում է հենց «ռազմավարական պլանավորման գործընթացում». «ռազմավարական պլանավորման շրջանակում ռազմավարությունը մի հայեցակարգ է, որը ռազմական հնարավորությունների (միջոցների) տարատեսակի ընտրությունը համապատասխանեցում է այն նպատակների (արդյունքների) մասին որոշումներին, որոնց ձեռքբերմանը պետք է ծառայեն այդ ռազմական հնարավորությունները»[11]: Եվ ավելի մանրա-

* **SWOT** (անգլ.) – *strengths* (ուժեղ կողմեր), *weaknesses* (թույլ կողմեր), *opportunities* (հնարավորություններ), *threats* (սպառնալիքներ), քաղաքագիտության, տնտեսագիտության և այլ ոլորտներում կիրառվող վերլուծության եղանակ, որում հաշվի են առնվում տվյալ օբյեկտին հատուկ այս չորս տեսակի գործոնները:

[10] Տես *Brandon Downs.* The 5 Strategic Planning Models That All Executives Should Know, 24.11.2017 (https://www.bbgbroker.com/strategic-planning-models/); նաև՝ "The Basic of Strategic Planning, Strategic Management and Strategy Execution" (www.balancedscorecard.org/BSC-Basics/Strategic-Planning-Basics); "Strategic Planning Basics" (https://balancedscorecard.org/strategic-planning-basics/):

[11] Տես *Carl H. Builder.* The Army in the Strategic Planning Process: Who Shall Bell the Cat. Prepared for the US Army. RAND, April 1987, P. 7:

մասնելով այդ միտքը՝ հեղինակը գրում է. «…ռազմավարությունը սահմանվում է որպես մի հայեցակարգ, որով կապակցվում են միջոցներն ու արդյունքը. ռազմավարության տեսակները՝ մեծ, պաշտպանական, տարածաշրջանային, զինված ուժերի տեսակի, կարող են արտածվել միջոցների և արդյունքների բնույթից: Ռազմավարության նշանակալիությունը կարող է մեծապես պայմանավորված լինել այն ձևակերպողի անձնավորությամբ ու շահերով. ռազմավարության *ով-ը* և *ինչու-ն* հավանաբար ավելի տեղեկունակ են, քան *ինչ-ը* և *ինչպես-ը* (ընդգծումները մերն են – *Գ. Տ.*): Այդուհանդերձ, ռազմավարական պլանավորմանը Բանակի մասնակցությունը հասկանալու համար անհրաժեշտ է, որպեսզի նախ, *ըստ արժանվույն գնահատվեն բանակը և նրա շահերը. ով է նա և ինչի է նա պատրաստ* (ընդգծումը մերն է – *Գ. Տ.*)»[12]:

Հարկ է նշել, որ ռազմավարական պլանավորումը բարդ և աշխատատար գործ է: Հիմնական դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ մեծ թիվ են կազմում բավարարվելիք կողմերն ու պայմանները, և որ մի շարք հանգուցային խնդիրներին հատուկ է մեծ չափով անորոշություն[13]: Ընդսմին ռազմաքաղաքական առաջավարները պետք է որոշեն, թե տվյալ գործընթացի համար որ եղանակն է գերադասելի՝ թեմատիկ քննարկումներն ու բաժանմունքային նիստերը *(breakout sessions)*, մտային գրոհը *(brainstorming)*, թիմակազմումը *(team-building)*, արտաքին ռեսուրսների ներգրավումը *(external input)* և այլն: Առավել կարևոր է, որ այդ գործում ներգրավված լինի յուրաքանչյուր մասնակից, քանի որ բոլոր մասնակիցների հաշվառումը միանշանակ կերպով գործին օգտակար է:

Պաշտպանության ոլորտում համապետական մակարդակով ռազմավարական պլանավորումը ամրագրվում է Ռազմական դոկտրինով (կամ, օրինակ, ինչպես ԱՄՆ-ում՝ Ազգային ռազմական ռազմավարությամբ): Սովորաբար այն ներառում է մի շարք փաստաթղթերի փաթեթ:

ՌԴ-ի դեպքում այդ փաստաթղթերի փաթեթը պետության պաշտպանության պլանն է, որը ներառում է ԶՈՒ-ի զարգացման և կիրառման պլանները, ԶՈՒ-ի զորահավաքային պլանը, ԶՈՒ-ի շինարարության պլանը, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը, պաշտպանության նպատակով պետության տարածքի օպերատիվ սարքավորման պլանը, տնտեսության մոբիլիզացիոն պլանը, սպառնալից շրջանում ԶՈՒ-ին ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարման պլանը և այլն:

ԱՄՆ-ի ռազմավարական պլանավորման փաստաթղթերի փաթեթի մեջ մտնում են՝ «Ազգային անվտանգության ռազմավարությունը» (ճշգրտվում է ամեն տարի), «Ազգային պաշտպանության ռազմավարությունը», «Ազգային ռազմական ռազմավարությունը» (ճշգրտվում է 2–3 տարին մեկ անգամ),

[12] Տես նույն տեղում, էջ V:

[13] Տես, օրինակ, *C. V. Christianson and George Topic.* Strategic Planning: A “How-to” Guide. “Joint Force Quarterly”, 3rd Quarter 2014, N 74 (https://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/jfq/jfq-74/jfq-74_80-83_Christianson-Topic.pdf):

«ԱՄՆ-ի միջուկային ուժերի վիճակի և զարգացման հեռանկարների վերանայում» փաստաթուղթը, կամ «ԱՄՆ-ի միջուկային ռազմավարությունը» (ճշգրտվում է ըստ անհրաժեշտության), «ԱՄՆ-ի Զինված ուժերի վիճակի և զարգացման հեռանկարների համապարփակ վերանայում» փաստաթուղթը (ճշգրտվում է 4 տարին մեկ անգամ), ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարի զեկույցը Նախագահին և Կոնգրեսին (տարին մեկ անգամ), «Միասնական հեռանկար» փաստաթուղթը, «Միավորված հրամանատարությունների պլանը» և այլ փաստաթղթեր:

Պատմության մեջ քիչ չեն պաշտպանական ոլորտում նպատակային ռազմավարական պլանավորման հաջող օրինակներ, որոնք վերաբերում են ինչպես պաշտպանությանը, այնպես էլ պատերազմին պետության պատրաստմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներից և տնտեսական ճգնաժամից չափազանց դժգոհ գերմանացիները 1933 թվականի հունվարի 30-ին կայացած ընտրությունների արդյունքներով իշխանության գլուխ կանգնեցրին Ազգային-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցությունը (նացիստներ)՝ Ադոլֆ Հիտլերի ղեկավարությամբ: Գերմանիան ձգտում էր նվաճելու Եվրոպան, հաստատելու համաշխարհային գերիշխանություն: Դա արտացոլվում էր Հիտլերի հեղինակած «Իմ պայքարը» աշխատության մեջ, որում, ըստ էության, ամրագրված էին Գերմանիայի քաղաքական նպատակները և զարգացման տեսլականը: Ելնելով քաղաքական նշանակություն ունեցող այդ հիմնարար աշխատությունից՝ ապագա պատերազմի բնույթի, դրա նախապատրաստման ու վարման մեթոդների, Զինված ուժերի շինարարության մասին Գերմանիայի քաղաքական և ռազմական ղեկավարության հայացքների հիմքում դրվեց «համընդհանուր (տոտալ)», այսինքն՝ լիամասշտաբ, պատերազմի տեսությունը, որի հեղինակը գերմանացի հետևակային գեներալ Էրիխ Ֆրիդրիխ Վիլհելմ Լյուդենդորֆն է: Նա իր մտքերը շարադրել է «Համընդհանուր պատերազմ» գրքում: Նացիստական տեսաբանների կարծիքով՝ այդպիսի պատերազմ վարելու համար անհրաժեշտ էին. 1) պատերազմին բնակչության բոլոր խավերի մասնակցությունը, 2) հասարակական կյանքի բոլոր ոլորտների ներառումը, 3) զինված պայքարի բոլոր միջոցների օգտագործումը: «Համընդհանուր պատերազմի» տեսությունը պահանջում էր խաղաղ ժամանակ պետության և հասարակության կյանքի բոլոր կողմերը ստորադասել պատերազմին պատրաստման շահերին: Այս ամենը ենթադրում էր լիարժեք նախապատրաստում և պլանավորում: Հարկ է նշել, որ «համընդհանուր պատերազմի» տեսությունը, ունենալով ռազմաքաղաքական և ռազմական-ռազմավարական նշանակություն, ըստ էության, քաղաքականությունը ստորադասում էր ռազմավարությանը, մինչդեռ ռազմավարությունն է բխում քաղաքականությունից: Հետևապես նշված տեսությունը, իր դրական կողմերով հանդերձ, ակնհայտորեն արտացոլում էր նաև այդ ժամանակի ռազմավարական պլանավորման թերությունները:

Միևնույն ժամանակ, Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարութ-

յունը, ռազմական տեսաբանները, հաշվի առնելով առաջին համաշխարհային պատերազմում երկու ճակատով երկարատև պայքար մղելու տխուր փորձը*, հասկանում էին, որ համընդհանուր, սակայն՝ հնարավոր ձգձգվող պատերազմը Գերմանիայի համար կարող է լինել կործանարար: Այդ պատճառով էլ առաջ եկավ «Կայծակնային պատերազմ» վարելու ռազմավարական հայեցակարգը, որն ուներ ռազմավարական և ռազմավարական-օպերատիվ նշանակություն: «Կայծակնային պատերազմ (բլիցկրիգ)» հասկացությունը 20-րդ դարի սկզբին առաջ է քաշել գեներալ-ֆելդմարշալ Ալֆրեդ ֆոն Շլիֆենը, իսկ հետագայում այդ գաղափարը զարգացրել է առաջին աշխարհամարտի մասնակից, Ռայխսվերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-գնդապետ Հանս (Իոհաննես) ֆոն Սեկտը: Վերջինս ապագա պատերազմի մասին գրել է, որ այն լինելու է պրոֆեսիոնալ, ոչ մեծ թվաքանակով բանակների կիրառմամբ, ընդսմին դրանց կազմի մեջ մտնելու է ազգային զինված ուժերի ընտրանին, խոյահարող ռմբակոծիչներ, տանկային զորամասեր, օդադեսանտային զորքեր:

Բլիցկրիգի հայեցակարգի էությունն էր առանց պատերազմ հայտարարելու, մեկ արագ արշավանքի ընթացքում հասցվող հանկարծակի և հզոր հարվածով հակառակորդի զինված ուժերի ջախջախումը: Այդպիսի «համընդհանուր» և «կայծակնային» պատերազմին նախապատրաստումը պահանջում էր համապատասխան ռազմավարության մշակում, այդ թվում՝ արդյունավետ ռազմավարական պլանավորում: Պատերազմի վարման հիմնական եղանակը ռազմավարական հարձակումն էր, որի համար անհրաժեշտ էր վաղօրոք ձեռնարկել մի շարք քայլեր. որոշել ռազմարշավի նպատակները, ընտրել գլխավոր հարվածի ուղղությունը, ընտրել պատերազմի վարման ձևն ու միջոցները, նախորոշել հարձակման ժամանակ ԶՈՒ-ի տեսակների և ռազմավարական ռեզերվի կիրառման ձևերը, տիրել ռազմավարական նախաձեռնությանը, ապահովել ԶՈՒ-ի ռազմավարական ծավալումը, մշակել առաջին օպերացիաների և արշավանքի պլանը:

«Համընդհանուր» պատերազմի տեսությունը և «կայծակնային պատերազմի» հայեցակարգը դրված էին պատերազմին Գերմանիայի և նրա ԶՈՒ-ի պատրաստման հիմքում: Ըստ այդմ անհրաժեշտ էին. պետության տնտեսության վերակառուցում, ռազմական գործողությունների թատերաբեմի նախապատրաստում, բնակչության գաղափարական մշակում, զինված ուժերի ստեղծում և զարգացում՝ «կայծակնային» պատերազմի վարման պահանջների հաշվառմամբ, առաջին օպերացիաների և գործողությունների պլանների մանրազնին մշակում:

Նշված միջոցառումների իրականացումը հնարավոր էր ռազմավարական պլանավորմանը նպատակաուղղված միջոցառումների մի ամբողջ համալիրի իրականացմամբ, այդ թվում՝ ռազմահումքային բազայի ընդլայնմամբ, կարևորագույն հումքերի ռազմավարական պաշարների ստեղծմամբ,

* Գերմանիան առաջին աշխարհամարտում (1914 թ. հուլիսի 28 - 1918 թ. նոյեմբերի 11) միաժամանակ պատերազմել է երկու ճակատով՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ:

ռազմական արտադրության ծավալների մեծացմամբ (առաջին հերթին՝ ռմբակոծիչ ինքնաթիռների և տանկերի արտադրություն), խճուղային ճանապարհների և երկաթուղիների ցանցի ընդլայնմամբ ու դրանց թողունակության մեծացմամբ, նոր օդանավակայանների, նստեցման հրապարակների, կապուղիների կառուցմամբ բնակչության շրջանում քարոզչական աշխատանքների ակտիվացմամբ (բնակչության գաղափարական «մշակում»):

Ըստ էության, կայացվել էր աշխարհում գերիշխանություն հաստատելու ռազմավարական որոշում, որի իրականացման նպատակով ծավալվել էր ռազմավարական լայնամասշտաբ և նպատակային պլանավորում:

Ինչպես վերը նշվեց, արևմտյան ռազմաքաղաքական մշակույթում պաշտպանական ոլորտում իրագործվող ռազմավարական պլանավորման հետ սերտորեն կապված է ռազմավարական որոշման ընդունումը:

Ռազմավարական որոշումը պետության կայուն և հեռանկարային զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ազգային, այդ թվում՝ պաշտպանական, անվտանգության ապահովմանը և ազգային շահերի առաջմղմանը նպատակաուղղված ռազմավարության ընտրությունն է: Պետության համար այն կարող է ունենալ երկարատև հետևանքներ: Ռազմավարական որոշումը մշակվում և դրա կատարումը վերահսկվում է կառավարման ամենավերին մակարդակում: Ըստ էության, դա գործունեության նոր նպատակների, խնդիրների, ուղղությունների, կառուցվածքի, ծավալի, գլխավոր ժամկետների և ընդհանուր մեթոդների, ինչպես նաև ուժերի հիմնական դասավորության, մասնակիցների պատասխանատվության ու փոխհարաբերությունների սահմանումն է, որը կատարում է ամենաբարձր կառավարային օղակը նպատակների իրագործման մշակված ռազմավարությունների իրացման համար (որոշվում են նպատակներին հասնելու եղանակները և դրա համար պահանջվող ռեսուրսները)[14]:

Պաշտպանական ոլորտում (պատերազմի առնչությամբ) ռազմավարական որոշումը պետության բարձրագույն ղեկավարության ընդհանուր մտահղացմամբ և պետական կառույցների ուժերով համակողմանի ապահովմամբ իրականացվող այն նպատակային միջոցառումների համալիրն է, որոնք ուղղված են պաշտպանությանը պետության և ԶՈՒ-ի պատրաստմանը, պատերազմի նախապատրաստմանն ու վարմանը:

Ռազմաքաղաքական անվտանգության ոլորտի հայտնի ռուս մասնագետ ակադեմիկոս Անդրեյ Կոկոշինը գրում է. «Ցանկացած որոշում առաջին հերթին գործողության և անգործության միջև ընտրություն է, որից հետո՝ ընտրություն երկու և ավելի գործողությունների միջև: Պատերազմում որոշումների կայացումը բարդ մտավոր և հուզական գործընթաց է, որը կարող է խախտել ձևավորված հստակ տրամաբանությունը»[15]:

---

[14] Տես, օրինակ, «Стратегическое решение». «Большая энциклопедия нефти и газа» (https://www.ngpedia.ru/id400974p1.html):

[15] Տես *А. А. Кокошин.* Стратегическое управление: Теория, исторический опыт, сравнительный анализ, задачи для России. М., 2003, с. 13:

Հարկ է նշել, որ 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ում ծնունդ առած քաղաքական որոշումների ընդունման ընթացքն ուսումնասիրող գիտությունը հետագայում վերաճեց քաղաքական-կառավարային գիտաճյուղերի մի ամբողջ համալիրի *(policy sciences)*: Այն ձևավորվել էր 3 խումբ սոցիալ-հումանիտար գիտությունների ուսումնասիրությունների առարկայական դաշտերի կցագծերում՝ սոցիալ-քաղաքական (քաղաքական, սոցիոլոգիական ու տնտեսական գիտությունների), ճանաչողական – իմացաբանական (փիլիսոփայություն, հոգեբանություն ու տեղեկութահաղորդակցական հետազոտություններ) և կառավարային (պետական վարչարարություն, կազմակերպական տեսություն, ընդհանուր կառավարում, ռազմական գիտություն)[16]:

Որոշումների ընդունման բազմաթիվ մոդելներից Արևմուտքում առավել լայն տարածում են ստացել ռացիոնալ, սահմանափակ ռացիոնալության, սակարկային, մասնակցային, աստիճանական հանգման, ընդհատուն հավասարակշռության, ինքնապահովումային, «խորդանոցային» մոդելները[17]:

Ռացիոնալ մոդելը *(Rational Model)* նորմատիվային բնույթի է և, լինելով համատեղելի ռազմական որոշումների կայացման հետ, հաճախ նկարագրվում է որպես 6 քայլանի գործընթաց. նպատակների որոշում, այլընտրանքների որոշարկում, արդյունքների հաշվարկում, օգուտների և ծախսերի հաշվարկված հարաբերության հիման վրա օպտիմալ արդյունքի որոշում, իրագործման վերահսկում, քայլերի կրկնություն:

Սահմանափակ ռացիոնալության, կամ վարքային, մոդելը *(Bounded Rationality, or Behavioral Model)* ևս նորմատիվային բնույթի է և խարսխվում է հետևյալ դրույթների վրա.

– մարդիկ չունեն բավարար գիտելիքներ, որպեսզի կարողանան կայացնել իմացաբանորեն ռացիոնալ որոշումներ, քանի որ ունակ են միաժամանակ մշակելու միայն մի քանի տվյալ,
– համընդգրկուն վերլուծությունն անհնար է տեղեկույթի, ժամանակի և փորձառության սահմանափակության պատճառով,
– մարդն անկարող է մտքով ըմբռնել խնդրի բոլոր հնարավոր լուծումները, ուստի ոչ բոլոր այլընտրանքներն են դիտարկվում կամ վերլուծվում:

Սակարկային մոդելը *(Bargaining Model)* արտացոլում է որոշումների կայացման գործընթացը ինչպես մի կազմակերպության անդամների, այնպես էլ կազմակերպությունների մակարդակով: Բարձրաստիճան ղեկավարները կարող են ընտրել այս մոտեցումը, որի դեպքում խմբերը որոշումներ են կայացնում մրցակցային շահեր և օրակարգեր ունեցող մասնակիցների փոխզիջումների հիման վրա:

Մասնակցային մոդելը *(Participative Model),* որպես նորմատիվային

[16] Տես *А. А. Дегтярев*. Принятие политических решений. Уч. пособие для вузов. М., 2004, сс. 53–54:

[17] Տես *Charles D. Allen, Breena E. Coates, George I. Woods (III)*. Strategic Decision Making Paradigm: A Primer for Senior Leaders. Army War College Press, 8 August 2012 (https://ssl.armywarcollege.edu/dclm/pubs/Strategic%20Decision%20Making%20paradigms%20(Allen%20Woods%208%20August%202012)%20final.pdf):

մոդել, որոշումների ընդունման ամենաժողովրդավարական ձևն է, քանի որ ապահովում է մուտքային ներգործություն և ազդեցություն գործելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, դրանում կա խիստ կարևոր տարբերակում «խորհրդարկման» և «որոշումների ընդունման ժամանակ ձայնի կոլեկտիվ իրավունքի» միջև:

Աստիճանական հանգման մոդելը *(Incremental Model)* ունի հետևյալ բնութագրիչները. դիտարկվում են սահմանափակ թվով տարբերակներ ու միջոցներ, որոշումները բանակցային կարգավորումների արդյունք են, փոփոխությունները կատարվում են աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում, որոշումները, որպես կանոն, ընդունվում են ի պատասխան զարգացումների, արդյունքները սահմանելիս կարևոր դեր են խաղում քաղաքական նկատառումները:

Ընդհատուն հավասարակշռության մոդելը, կամ տեսությունը *(Punctuated Equilibrium Theory)* հիմնված է հետևյալ երեք հիմնական եզրակացությունների վրա.

– քաղաքականության մշակմանը հատուկ են հարցերի ծագման և օրակարգից անհետացման թռիչքային ու լճացման շրջաններ,
– ընդհատուն հավասարակշռության տվյալ միտումը հարուցում են ամերիկյան քաղաքական հաստատությունները,
– մասնագետների վերահսկողության ասպարեզից և նրանց անվանած «քաղաքական մենաշնորհում» ներկայացված հատուկ շահերի տիրույթից հարցերի դուրսբերման գործում մեծ դեր են խաղում քաղաքական պատկերացումները:

Ինքնապահովումային մոդելը *(Polis Model)* հիմնվում է հետևյալ հիմնադրույթների վրա. նպատակները սահմանել ճապաղ կերպով և ապահովել որոշակի գաղտնիություն, նպատակները փոփոխել ու վերաձևակերպել ըստ քաղաքական իրավիճակի թելադրանքի, օրակարգ չմտցնել անցանկալի այլընտրանքներ՝ անգամ խուսափելով դրանց հիշատակումից, նախընտրած տարբերակը ներկայացնել որպես միակ նպատակահարմարը, կենտրոնանալ պատճառահետևանքային շղթայի միայն մի հատվածի վրա և անտեսել քաղաքական առումով բարդ հատվածները, կիրառել հռետորական հնարներ՝ կտրուկ հակադրումներից խուսափելու նպատակով այլընտրանքները միախառնելու համար, ներկայացնել որոշումների այն հետևանքները, որոնք լավագույնս հիմնավորում են դրա անհրաժեշտությունը, ընտրել այնպիսի քայլեր, որոնք նվազագույնս կվնասեն հզոր շահառուներին, բայց դրանք ներկայացնել որպես հասարակության շահերից բխող:

«Խորդանոցային» մոդելը *(Garbage Can Model),* հիմնված լինելով կազմակերպական անտերնչության վրա, առաջ է քաշում այն վարկածը, թե կազմակերպությունները՝

– ունեն փոփոխական ու վատ ձևակերպված գերակայություններ և գործում են փորձի ու սխալի սկզբունքով,
– դրա բաժնետերերը միայն մասամբ են հասկանում կազմակերպությունում տեղի ունեցող գործընթացները,
– որոշում ընդունողները հաճախ գործում են քմահաճորեն ու բնազդաբար:

Սա է պատճառը, որ հաճախ ընդունվում են որոշումներ, որոնք շարժառիթավորված չեն իրավիճակով, ուստի և պահվում են «խորդանոցում» մինչև ստեղծվի դրա գործարկման անհրաժեշտություն[18]:

Ռազմավարական որոշման պատրաստման ու կայացման ընթացքում կիրառվում է լայն գործիքակազմ, այդ թվում՝ «SWOT» վերլուծություն, խաղերի տեսություն, ծախսերի ու շահույթի վերլուծություն և այլն[19]:

Մեր կարծիքով՝ նպատակահարմար է, որ ռազմավարական որոշումը կառուցվածքային առումով բովանդակի **պաշտպանությանը և պատերազմին պետության պատրաստվելու վերաբերյալ մտահղացումը**, դրանից բխող **խնդիրները**՝ ուղղված պետական ու ռազմական կառավարման *(քաղաքական, տնտեսական, պաշտպանական, ֆինանսական և այլ ոլորտների)* համակարգի մարմիններին, **ռազմավարական փոխգործության և կառավարման կազմակերպումը**, ինչպես նաև **համակողմանի ապահովման հիմնական միջոցառումները**:

Ռազմավարական որոշումը կայացվում է աշխարհառազմավարական, ռազմաքաղաքական և ռազմական-ռազմավարական իրադրությունների համակողմանի ու մանրակրկիտ գնահատման արդյունքների հիման վրա՝ գնահատականների անընդհատ ճշգրտմամբ:

Ընդ որում, իրադրության գնահատումների ճշգրտումները, եզրակացություններն ու վերլուծությունները պետք է նպատակաուղղված լինեն հակառակորդի և յուրային հնարավորությունների որոշմանը, ռազմավարական իրադրության զարգացման կանխատեսմանը:

Ամփոփելով ռազմավարական որոշումների կայացման վերաբերյալ մի շարք տեսական ուսումնասիրություններ[20] և գործնական փորձը՝ կարող ենք

[18] Տես նույն տեղում:

[19] Տես «Принятие стратегических решений. Стратегический подход к управлению при принятии решений» (http://www.stplan.ru/articles/theory/prinjatie-strategicheskih-reshenij.htm):

[20] Տես, օրինակ, *Ա. Ա. Կոկոշին,* Նշ. աշխ., *И. В. Осиновская, О. В. Ленкова, А. В. Шалахметова*. Теория принятия стратегических решений (уч. пособ.). «Международный журнал прикладных и фундаментальных исследований». 2010, № 6; *Ю. Н. Лапыгин*. Стратегические управленческие решения (https://marketing.wikireading.ru/16751); *А. В. Тебекин.* Методы принятия управленческих решений на основе теории игр как группа методов класса принятия стратегических решений на основе оптимизации показателей эффективности. «Стратегии бизнеса», 2018, № 10; *Т. К. Кравченко, Д. В. Исаев*. Принятие стратегических решений в условиях риска и неопределенности. «Финансы: теория и практика», 2016, т. 20, № 4 (https://doi.org/ 10.26794/2587-5671-2016-20-4-22-31); *Anwar Ahmed, Henry M. Bwisa, Romanus Odhiambo Otieno, Kabare Karanja*. Strategic Decision Making: Process, Models, and Theories. “Business Management and Strategy”, June 2014, Vol. 5, N 1 (https://www.researchgate.net/publication/312187946_Strategic_Decision_Making_Process_Models_and_Theories); *Maryam Temitayo Ahmed, Habeeb Omotunde*. Theories and Strategies of Good Decision Making. “International Journal of Scientific and Technology Research”, November 2012, Vol. 1, Issue 10; *Օ. Գ. Սաստրյան, Հ. Շ. Մաթևոսյան*, Կառավարչական որոշումների ընդունում (ուս. ձեռնարկ): Ե., 2008 (http://library.cmsa.am/media/docs/Կառավարչական_որոշումների_ընդունում1.pdf), և այլն:

առաջարկել այդ գործընթացի հետևյալ ալգորիթմը (քայլերի հաջորդականությունը).

1) հավաքված տվյալների ճշգրտում և վերլուծություն՝ աշխարհառազմավարական (այդ թվում՝ ռազմաքաղաքական) և ռազմական-ռազմավարական իրադրությունների գնահատումներ և վերլուծություններ,

2) եզրակացություններ՝ ըստ աշխարհառազմավարական (այդ թվում՝ ռազմաքաղաքական) և ռազմական-ռազմավարական իրադրությունների գնահատումների ճշգրտման և վերլուծության,

3) ընդհանուր եզրակացություններ,

4) ռազմավարական որոշման մտահղացման հստակեցում՝ 1-ին 3 կետերի հիման վրա,

5) որոշման հնարավոր տարբերակների քննարկում, մոդելավորում, տարբերակներից մեկի ընտրություն և հաստատում,

6) պետական և ռազմական կառավարման մարմինների խնդիրների սահմանում,

7) ռազմատնտեսական ապահովման և կառավարման հարցերի լուծում:

Նշենք, որ իրադրությունների գնահատման տարրերը և դրանց հիման վրա արվող եզրահանգումները ներառում են ԱԱՌ մշակման ժամանակ գնահատվող այն հիմնական կետերը, որոնք, ըստ մեզ, կարևոր են նաև ռազմավարական որոշման կայացման համար:

Պարզաբանենք սույն ալգորիթմում նշված որոշ կետեր:

Աշխարհառազմավարական իրադրության գնահատում, վերլուծություն և եզրակացություններ (լայն ընդգրկմամբ): Տվյալ գործողությունների ժամանակ վերլուծվում են աշխարհաքաղաքական իրավիճակն ու միջավայրը, տարածաշրջանի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները, ֆիզիկա-աշխարհագրական (բնական) պայմանները, ռազմաքաղաքական իրադրությունը, տարածաշրջանի պետությունների տնտեսական հնարավորությունները, պետությունների ԶՈՒ-երի և զորահավաքային հնարավորությունները, տարածաշրջանի տարածքի օպերատիվ սարքավորվածությունը:

Այս գնահատումների, վերլուծությունների հիման վրա արվում են հետևյալ **եզրակացությունները**. տարածաշրջանի ռազմավարական և աշխարհագրական դերն ու նշանակությունը, այլ տարածաշրջանների հետ փոխկապվածությունը, առաջիկա տարիներին ռազմաքաղաքական իրադրության հավանական զարգացումը, պետության տնտեսության առկա վիճակն ու հնարավորություններն իր արտաքին քաղաքական ուղեգծի ապահովման նպատակով:

Աշխարհառազմավարական իրադրության գնահատում, վերլուծություն և եզրակացություններ (նեղ ընդգրկմամբ. սահմանակից պետություններ): Տվյալ գնահատման ժամանակ վերլուծվում են հավանական հակառակորդների հնարավորությունները, նրանց վարելիք ռազմական գործողությունների հնարավոր բնույթը և մասշտաբները, ԶՈՒ-ի և տնտեսության՝ ռազմական դրութ-

յան անցնելու ժամկետները և կարգը, տարածաշրջանի տարածքի օպերատիվ սարքավորվածությունը:

Ռազմական-ռազմավարական իրադրության գնահատում, վերլուծություն և եզրակացություններ: Տվյալ դեպքում կատարվում են հակառակորդի սահմանակից պետությունների և հատկապես նրա ռազմական դաշնադրությունների գնահատում և հնարավոր վարքի որոշում (խաղաղ և պատերազմական ժամանակ), յուրային պետության և հնարավոր դաշնակից պետությունների ՁՈՒ-երի գնահատում, կողմերի ռազմավարական դիրքի և հնարավորությունների հարաբերակցության գնահատում, ռազմավարական և օպերատիվ ուղղություններով ՈԳԹ առանձնահատկությունների պարզում, հնարավոր պատերազմի բնույթ:

Այս ամենի հիման վրա որոշվում են մեր և հակառակորդի հնարավոր նպատակներն ու ռազմավարական խնդիրները, այն պայմանները, որոնց դեպքում հակառակորդը կարող է սկսել պատերազմ, և դրա հնարավոր ժամկետները, հակառակորդի զինված ուժերի կազմը և գործողությունների հավանական բնույթը, հակառակորդի և յուրային պետության ու զինված ուժերի «ծանրության կենտրոնները», հակառակորդի կողմից պատերազմի սանձազերծման և վարման հավանական եղանակները, այդ թվում՝ անհամաչափ կամ հիբրիդային պատերազմների վարման հնարավորությունները: Արվում են համապատասխան եզրահանգումներ նաև այն մասին, թե ինչն է հակառակորդի և մեզ համար «անընդունելի վնաս», որն է պատերազմի ակնկալվելիք արդյունքը (ինչն է հակառակորդի և մեզ համար համարվում հաղթանակ), որն է հակառակորդի և մեր «ծայրահեղ կետը» («կարմիր գիծը»):

Ըստ արված եզրակացությունների որոշվում են նաև՝

- տեղեկատվական քաղաքականության բովանդակությունը, դրանում ներգրավվող ուժերն ու միջոցները,
- ռազմավարական զսպման համակարգի հնարավորությունները և զարգացման հիմնական ուղղությունները և միջոցները,
- ուժերի և միջոցների անհրաժեշտ հավասարակշռության պահպանմանն ուղղված քայլերը՝ ինչպես ռազմական, այնպես էլ համապետական մակարդակով,
- պատերազմ վարելու մեր կարողության մեծացման եղանակներն ու միջոցները:

Կարևոր է նշել, որ ռազմաքաղաքական ղեկավարությունը (պետության Նախագահը, Վարչապետը) պատերազմի առնչությամբ ռազմավարական որոշումը պետք է ընդունեն վաղօրոք՝ խաղաղ ժամանակ, և այն նպատակաուղղեն բոլոր ոլորտներում պետության զարգացման միջոցով նրա պաշտպանական կարողությունների մեծացմանը, այդ թվում՝ միջազգային համագործակցությամբ:

Վերը մենք նշել էինք, որ նպատակին հասնելու ռազմավարությունը համապատասխանություն է հաստատում արդյունքի *(ends)*, եղանակների *(ways)*, և միջոցների *(means)* միջև: Տվյալ գաղափարը լուսաբանենք «Փոթո-

րիկ անապատում» օպերացիայի օրինակով: Այստեղ որպես արդյունք նախանշվել էր հակառակորդի լիակատար ջախջախումը (հնարավորինս՝ արագ), որպես եղանակ ընտրվել էր օդային հարձակողական օպերացիան, իսկ միջոց՝ օդային հարձակման միջոցները (ավիացիա և հրթիռներ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտպանության ոլորտում ռազմավարական պլանավորման ու ռազմավարական որոշումների ընդունման այս համառոտ վերլուծությունում մենք փորձել ենք հստակեցնել դրանց կազմման նպատակը, հիմնական եղանակները, ընդհանուր սկզբունքները, բովանդակությունն ու կառուցվածքը: Հարկ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր կետի հետևում թաքնված է մեծածավալ նպատակասլաց աշխատանք, որը կարող են կատարել միայն ռազմավարական մտածողությամբ օժտված, միասնական արդիական պատրաստություն ունեցող ռազմավարները: Այս աշխատանքում պետք է համաձուլվեն խոր համակողմանի գիտելիքները և դրանց գործնական կիրառման հմտությունը, այսինքն՝ ռազմավարը պետք է լինի և՛ տեսաբան, և՛ պրակտիկ: Կարծում ենք, որ մեր հանրապետությունում բարձրագույն կրթությունը պետք է զարգացվի հենց այդ ուղղությամբ: Այդ նպատակն է դրված, մասնավորապես, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում, և մենք ջանում ենք այդ նպատակը հաջողությամբ իրագործել:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕТОДОЛОГИИ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ И ПРИНЯТИЯ СТРАТЕГИЧЕСКИХ РЕШЕНИЙ В СФЕРЕ ОБОРОНЫ

Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, Начальник НИУО МО РА

РЕЗЮМЕ

Опыт последних войн и вооруженных конфликтов показывает, что происходит существенное изменение общего характера войн, в особенности – угрожаемого периода и начального этапа. Вследствие этого возникает необходимость пересмотра системообразующих принципов и методологии стратегического планирования и принятия стратегических решений в оборонной сфере.

Стратегическое планирование в сфере обороны или стратегическое планирование обороны – это процесс анализа военно-политической и стратегической обстановки и определения целей, сил, средств и способов ведения вооруженной борьбы, ее организации и обеспечения. Эффективность этой системы обеспечивается принятием стратегических решений.

Стратегическое решение – это выбор стратегии, нацеленной на создание благоприятных условий для устойчивого и перспективного

развития государства, обеспечение национальной, в том числе – оборонной, безопасности и продвижение национальных интересов. Для государства оно может иметь долгосрочные последствия. Разработка и осуществление стратегического решения производится на самом высоком уровне государственного управления. В оборонной сфере стратегическое решение (в отношении войны) представляет собой комплекс целенаправленных мер, осуществляемых в соответствии с общим замыслом высшего руководства государства со всесторонним обеспечением силами государственных структур и направленных на подготовку государства и ВС к обороне, подготовку и ведение войны.

Стратегическое решение принимается на основе результатов всесторонней и тщательной оценки геостратегической, военно-политической и военно-стратегической обстановок с постоянной корректировкой полученных оценок.

Анализ процесса принятия стратегических решений в сфере оборонно-безопасностной политики позволяет выделить несколько моделей, обстоятельно рассматриваемых в специальной литературе.

SOME ISSUES OF THE METHODOLOGY OF STRATEGIC PLANNING AND STRATEGIC DECISION-MAKING IN THE DEFENSE SPHERE

G. V. TAVARATSYAN, Major General, Head, NDRU, MOD, RA

SUMMARY

The experience of recent wars and armed conflicts shows that the general nature of wars, and especially of the period of threat and opening stage, has been undergoing significant changes. As a result, it becomes necessary to review the system principles and methodology of strategic planning and strategic decision-making in the defense sphere.

Strategic planning in the defense sphere or the defense strategic planning is a process of analyzing the military-political and strategic situation, and identifying objectives, forces, means and methods for conducting an armed struggle, addressing its organization and support. The efficiency of this system is gained via making strategic decisions.

The strategic decision is a choice of strategy aimed at creating favorable conditions for the state's sustainable and prospective development, ensuring the national, including defense, security, and promoting the national interests. It can have long-term effects for the state. The strategic decision is worked out and its execution is supervised at the highest level of public administration. The defense strategic decision (regarding war) is a complex of targeted measures, taken

according to the general intent of the state's senior leadership along with the comprehensive support of the state structures, and is targeted at preparing the state and its armed forces for the defense, preparation and conduct of war.

The strategic decision is made upon the results of comprehensive and careful assessments of geostrategic, military-political and military-strategic environments with continuous adjustment of the obtained assessments.

The analysis of the process of making strategic decisions in the defense-security sphere enables marking out a few models thoroughly considered in specialized literature.

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ*

1-ին սերնդի պատերազմներ



Վագրամի ճակատամարտ, 1809 թ. հուլիսի 7
Ժակ-Ֆրանսուա Սվեբախ (փորագրանկար)

Բորոդինոյի ճակատամարտ, 1812 թ.
Լուի-Ֆրանսուա Լեժեն (գեղանկար)

Դրվագ ֆրանկո-պրուսական պատերազմից, 1870–1871 թթ.
գերմանացի սպաները Փարիզի մոտ (լուսանկար)

---

* Ամերիկացի ռազմական տեսաբան ՈՒ. Լինդը առանձնացրել է պատերազմի չորս սերունդներ: Այս մասին տես սույն համարի 9–20 էջերը:

2-րդ սերնդի պատերազմներ.
Դրվագներ առաջին համաշխարհային պատերազմից
(1914 – 1918 թթ., լուսանկարներ)

3-րդ սերնդի պատերազմներ.
Դրվագներ երկրորդ համաշխարհային պատերազմից
(1939 – 1945 թթ., լուսանկարներ)





ԱՄՆ-ի ատոմային ռումբի կիրառում Ճապոնիայի դեմ.
ձախից՝ Հիրոսիմա, աջից՝ Նագասակի

4-րդ սերնդի պատերազմներ.
Դրվագներ (1990 թ. – մինչև մեր օրերը)

Իսլամական Պետության զինյալներ

Սիրիայում Իսլամական Պետության դիրքերի վրա
Կասպից ծովից ՌԴ ՌԾՈՒ-ի արձակած
բարձր ճշգրտությամբ թևավոր հրթիռներով հարվածներ

Դրվագ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունից
Գազա, 2021 թ. մայիս

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶՍՊՄԱՆ ՈՒԺԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՍՈՏ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

Վերջին շրջանում շատ պետությունների ռազմաանվտանգային քաղաքականության կարևոր ուղեգծերից մեկն է դարձել զսպումը: Եթե սկզբնական շրջանում (1950-ական թվականներ) ամերիկյան քաղաքագետներն ու քաղաքական գործիչները շեշտը դնում էին գերազանցապես միջուկային պատերազմի սպառնալիքի վրա, ապա այն ներկայումս մտել է նաև միջուկային զենք չունեցող պետությունների քաղաքական զինանոց: Մասնավորապես՝ այն մինչև վերջերս հաջողությամբ կիրառում էր Հայաստանի Հանրապետությունը[1]:

Նախ պարզենք, թե ինչ է «զսպումը»: Դա «հակառակորդի ագրեսիայից հետ պահելն է նրան անընդունելի վնասներ պատճառելու սպառնալիքով, կարող է իրագործվել քաղաքական-դիվանագիտական, ռազմական և այլ եղանակներով»[2]: Ընդսմին այդ դեպքում տվյալ պետությունը գործի է դնում իր ռազմական ներուժի ցուցադրումը կամ էլ քաղաքական-դիվանագիտական, տեղեկատվական-քարոզչական, տնտեսական և այլ մեթոդներ, որպեսզի հակառակորդին հետ պահի անցանկալի քայլերից:

Զսպման հայեցակարգում կիրառվում են երկու հասկացություն՝ բուն զսպումը («containment») և զսպումը սարսափեցմամբ, կամ սաստումը («deterrence»), որոնց դիմաց ռուսերենում կան «сдерживание» (բուն զսպում) և «устрашение» (սարսափեցում)[3]: Հայերենում դրանց համապատասխանաբար օգտագործվում են «զսպում» և «սաստում» համարժեքները,

---

[1] Տես, օրինակ, «ՀՀ ռազմական դոկտրին»: «ԱՏ», 2007, հմ. 4, նաև՝ *Հ. Մ. Մինասյան.* Теория и практика военного и политико-дипломатического сдерживания применительно к Карабахскому конфликту (монографическое исследование). «ՀԲ», 2014, հմ. 1–2:

[2] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 220:

[3] Տես *Samuel Charap.* Strategic Sderzhivanie: Understanding Contemporary Russian Approaches to “Deterrence”. “Marshall Center Security Insights”, September 2020, N 62 (https://www.marshallcenter.org/en/publications/security-insights/strategic-sderzhivanie-understanding-contemporary-russian-approaches-deterrence-0):

թեև որպես երևույթի նշագրում (ռուսերենի օրինակով) գործածելի է «զսպում» տերմինը[4]:

Ուժային, կամ ռազմական, զսպում ասելով, առաջին հերթին, նկատի է առնվում զսպման «deterrence» հասկացությունը[5]: Ամերիկյան քաղաքագիտության մեջ լայն տարածում է ստացել 1950-ական թվականների վերջին և 1960-ական թվականների սկզբին՝ պաշտպանության նախարար Ռոբերտ Մակնամարայի օրոք, և կիրառվել է նաև ռազմավարական պլանավորման պրակտիկայում:

Սաստման (սարսափեցման միջոցով զսպման) իմաստն այն է, որ հակառակորդին ուժի միջոցով կամ դրա կիրառման սպառնալիքով թույլ չտրվի ընդունել ռազմական գործողությունների սկսմանը միտված քաղաքական որոշումներ: Դրա համար նրան պետք է կարողանալ համոզել, որ որպես թիրախ են ընտրվել նրա առավել զգայուն և ռազմական առումով առանցքային օբյեկտները, առաջին հերթին՝ քաղաքական որոշումներ կայացնելու համար պատասխանատու ռազմաքաղաքական ղեկավարությունը, մայրաքաղաքն ու խոշոր կենտրոնները, որոնցում տեղաբաշխված են որոշումներ կայացնող և դրանք իրականացնող հաստատություններն ու հիմնարկները, կարևոր արդյունաբերական ձեռնարկություններն ու ենթակառուցվածքները: Այսինքն՝ նշանի տակ են առնված հակառակորդի ռազմական գործողությունների ու դրանց ապահովման կառավարման համակարգն ու ռեսուրսները:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակներում նման տեսակի զսպումն ընդունված է անվանել նաև սովորական («conventional») սպառազինությամբ[6], ոչ միջուկային, կամ սովորական ռազմական զսպում[7]: Ոչ միջուկային զսպումը ենթադրում է ոչ միջուկային, թեև դարձյալ՝ ռազմական միջոցներով հավանական ագրեսորի կենսական շահերին և կարևոր օբյեկտներին վնաս հասցնելու սպառնալիքն իրականացնելու պատրաստությունը[8]:

Ոչ միջուկային ռազմավարական զենքի նոր տեսակներով զսպման ռազմավարության նպատակն է պատերազմը կանխել առավել կատարելագործված ՍՈՏ-ներով հակառակորդին անընդունելի վնաս հասցնելու միջոցով (այդ թվում՝ բոլոր տեսակի գերճշգրիտ զենքերը, խոցման ռազմա-

---

[4] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Նշ. աշխ., էջ 220, 533, *նաև՝ Ս. Մ. Մինասյան,* Նշ. աշխ.:

[5] Տես *Brodie Bernard*. The Anatomy of Deterrence. Princeton University Press, 1959, PP. 264–304, նաև՝ *Frank C. Zagare*. Reconciling Rationality with Deterrence: A Re-examination of the Logical Foundations of Deterrence Theory. "Journal of Theoretical Politics", 2004, Vol. 16, Issue 2:

[6] Տես *Edward Rhodes.* Conventional deterrence. “Comparative Strategy”, 2000, Vol. 19, Issue 3:

[7] Տես *James J. Wirtz.* How does Nuclear Deterrence differ from Conventional Deterrence? “Strategic Studies Quarterly”, 2018, Vol. 12, Issue 4:

[8] Տես «1.1: Степень научно-теоретической разработанности тематики сдерживания»: *Ս. Մ. Մինասյան,* Նշ. աշխ.:

վարական, ոչ միջուկային միջոցները, տեղեկատվական-կառավարող համակարգերը, և այլն)[9]:

Ինչ վերաբերում է «ռազմավարական զսպմանը», ապա դա ուժային և ոչ ուժային միջոցների փոխհամաձայնեցված համալիր է, որի կիրառման նպատակն է պետության (պետությունների դաշնադրության) ձեռնարկած ագրեսիվ գործողությունների և ռեալ սպառնալիքների կանխումը, նվազեցումն ու չեզոքացումը[10]:

Ընդսմին այդպիսի ագրեսիվ գործողությունների թվին են դասվում ուժային ճնշումը կամ ուժային ճնշում գործադրելու ձգտումը, ագրեսիան կամ դրա նախապատրաստումը, ռազմական հակամարտության սանձազերծումն ու ծավալումը և այլն:

Ինչպես նշվեց, այսօր միջազգային հարաբերություններում մեծ դեր են խաղում զսպման ուժային միջոցները, ինչը մեծապես պայմանավորված է նորագույն ՍՈՏ անընդհատ կատարելագործմամբ, առաջին հերթին՝ դրանց հեռահարության, կրակային հզորության, խոցման ճշգրտության, արագագործության ու շարժունության կտրուկ աճմամբ: Ընդ որում, զսպման ռազմական միջոցներն այժմ էլ կարող են հիմնվել ինչպես միջուկային, այնպես էլ ոչ միջուկային սպառազինությունների ներուժի վրա: Զսպման միջուկային միջոցները հիմնականում կիրառվում են լայնամասշտաբ (սովորական) պատերազմի և միջուկային ագրեսիայի ծավալումը սաստելու, իսկ ոչ միջուկային միջոցները՝ ռազմական հակամարտությունների ծագումն ու զարգացումը կանխելու նպատակով[11]: Ըստ այդմ՝ ակնհայտ է, որ այսօր ուժային միջոցներից նախապատվությունը տրվում է ոչ միջուկային միջոցներին, հատկապես, որ դրանք մատչելի են միջուկային զենք չունեցող պետությունների ու ոչ պետական միավորումների ճնշող մեծամասնության համար:

Արդի աշխարհում կան զսպման բազմաթիվ ուժային միջոցներ, այդ թվում՝ ռազմական ներկայության և ռազմական ուժի ցուցադրումը, հետախուզական-տեղեկատվական միջոցների, պաշտպանական ենթակառուցվածքի ու ռազմական արդյունաբերության զարգացումը, պետության տնտեսական գործունեության անվտանգության ուժային ապահովումը, զորավարժությունները, խաղաղագործական օպերացիաները, պետության օդային, ցամաքային և ջրային սահմանների պաշտպանության հուսալիության ցուցադրումը, զորքերի (ուժերի) ցուցադրական բերումը բարձր աստիճանի

[9] Տես ««Стратегия сдерживания» и новые виды неядерного стратегического оружия». «Война и мир в терминах и определениях». Под общей ред. Д. О. Рогозина. М., 2003 (https://politike.ru/termin/strategija-sderzhivanija-i-novye-vidy-nejadernogo-strategicheskogo-oruzhija.html):

[10] Տես, օրինակ, «Сдерживание стратегическое». «Энциклопедия: Министерство обороны РФ» (https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=14206@morfDictionary):

[11] Տես *А. Арбатов.* Роль ядерного сдерживания в стратегической стабильности. Гарантия или угроза». «Московский центр Карнеги», 28.01.2019 (https://carnegie.ru/2019/01/28/ru-pub-78209):

մարտական պատրաստության, զինված ուժերի զորահավաքային ու պետության մոբիլիզացիոն պատրաստության բարձր մակարդակի ցուցադրումը, նոր զորախմբավորումների կազմավորումը, հավանական հակառակորդի օբյեկտներին հզոր հարվածներ հասցնելու սպառնալիքի ստեղծումը, սահմանի երկայնքով զորքերի օպերատիվ ծավալման ցուցադրումը, մշտական տեղաբաշխման վայրերից զորքերի տեղափոխումը ելքային դիրքերի և, իհարկե, ՍՈՏ-ների կատարելագործումը, զարգացումը և բաշխումն ըստ զորամասերի:

Սրանք բոլորը այն ձեռնարկումներն են, որոնք պետք է հավանական հակառակորդի ռազմաքաղաքական ու ռազմական ղեկավարությանը համոզեն, որ ագրեսիա նախաձեռնելու դեպքում իրենք դատապարտված են անհաջողության կամ էլ, որ հաղթանակը կլինի «պյուռոսյան»: Նման զսպման փայլուն օրինակ է Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո ԽՍՀՄ վարած քաղաքականությունը, որի շնորհիվ ԱՄՆ-ի ղեկավարությունը հավատաց, որ Խորհրդային Միությունը ևս ունի միջուկային զենք և այն մինչև թիրախներ առբերման հուսալի միջոցներ[12]:

Ժամանակակից ՍՈՏ-ների զարգացումը նոր հնարավորություններ ու հեռանկարներ է ընձեռում զսպման ուժային գործիքակազմի կատարելագործման համար: Միևնույն ժամանակ, ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ: Նորագույն ՍՈՏ-ների զարգացումը ձևավորել է նոր իրավիճակ և անհրաժեշտ է նորովի իմաստավորել ինչպես ժամանակակից պատերազմների բնույթի, այնպես էլ զսպման բնույթի վրա դրանց ազդեցությունը:

Սպառազինությունների մրցավազքը, նոր զինատեսակների ի հայտ գալն աշխարհում փոխում են ազդեցության գոտիներ, հիմնական աշխարհաքաղաքական դերակատարներին ստիպում հարմարվել առկա վիճակին կամ էլ վերանայել իրենց ռազմավարություններն ու զսպման գործիքակազմը:

Գիտության և տեխնիկայի արագացող առաջընթացը հանգեցրել է ԶՈՒ-ի որակապես նոր մակարդակի շինարարության, սպառազինության ու ռազմական տեխնիկայի թռիչքաձև զարգացման: Տիեզերական զինատեսակները, հետախուզական համակարգերի, հեռահար հրթիռների կատարելագործումը, ռեակտիվ ավիացիայի և ռազմածովային ուժերի զարգացումը, գերձայնային զենքի, խոցման գերճշգրիտ միջոցների, հետախուզական և խոցիչ անօդաչու թռչող ապարատների արագընթաց կատարելագործումն ու տարածումը, զորքերի և ուժերի կառավարման տարբեր ռադիոէլեկտրոնային միջոցների և ավտոմատացված համակարգերի զանգվածային ներդրումը որակապես փոխել են արդի պատերազմի բնույթը, բովանդակությունը և տևողությունը, զինված պայքարի վարման եղանակներն ու ձևերը: Այդ ամենն էապես ազդում է նաև զսպման մեխանիզմների կիրառման վրա,

[12] Տես, օրինակ, *Александр Вансю.* В СССР принято решение о создании атомной бомбы. ИА «Regnum», 11 февраля 2018 (https://regnum.ru/news/polit/2378737.html):

քանի որ երբեմն այն մեխանիզմները, որոնք գործուն էին նախկինում, այսօր լուրջ կարիք ունեն վերանայման:

Աշխարհում տիրող իրավիճակը, միջուկային մարտագլխիկների թվաքանակը, նոր հրթիռների ստեղծումը, ֆիզիկական նոր սկզբունքներով գործող զենքերի մշակումը, ՍՈՏ-ների մրցավազքը, դրանց հակազդող միջոցների ստեղծումն ու զարգացումը փոխում են ոչ միայն ռազմաքաղաքական իրադրությունը և ստեղծում ամենատարբեր զարգացումների հնարավորություն, այլև ինքնին նոր որակ ու տեմպ հաղորդում ՍՈՏ նոր միջոցների, ՀՕՊ-ի և ՀՀՊ նորագույն համակարգերի զարգացմանն ու հետագա կատարելագործմանը:

Որպես ասվածի վկայություն՝ բերենք մի քանի օրինակ: Այսպես. 2017 թ. մայիսի սկզբին Միացյալ Նահանգները Հարավային Կորեայում տեղադրեցին հակահրթիռային պաշտպանության «ԹՀԱԱԴ», կամ «ԹԷԴ» (“THAAD” – Terminal High Altitude Area Defense) կոչվող համակարգը: Մինչև 200 կիլոմետր շառավղով գործող այդ հրթիռների արագությունը 1 վայրկյանում 2800 մետր է: Համաձայն նախանշանակման՝ դրանք պետք է ոչնչացնեն Հարավային Կորեայի ուղղությամբ Հյուսիսային Կորեայից արձակված հրթիռները, այդ թվում՝ միջուկային մարտագլխիկով[13]:

2020 թ. մայիսի 31-ին Հարավային Կորեայի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ այդ երկրի ռազմական հենակետերից մեկում ԱՄՆ-ը տեղաբաշխել է հակահրթիռային պաշտպանության նոր «ԹՀԱԱԴ» համակարգ և ռազմական հետախուզական տեխնիկա: Պեկինը և Փհենյանը դեմ էին Հարավային Կորեայում այդ համակարգի տեղադրմանը[14]: Այս տեղակայումները մեծ դժգոհություն առաջացրեցին նաև ՌԴ-ում: Դեռ 2017 թ. ՌԴ ԱԳՆ-ն հայտարարել էր, որ Հարավային Կորեայում «ԹՀԱԱԴ» հակահրթիռային պաշտպանության այս համակարգի տեղաբաշխումն ուղղված է Ռուսաստանի և Չինաստանի դեմ, և որ այն չի կարող պաշտպանել Հյուսիսային Կորեայից բխող վտանգից[15]: Ըստ էության, նոր համակարգի տեղաբաշխումը տարածաշրջանի խոշոր դերակատարներին ստիպեց վերանայել իրենց ուժային զսպման համակարգերը[16]:

Հաջորդը. 2016 թ. մայիսի 12-ին Ռումինիայի հարավում գտնվող Դևեսելու քաղաքում շահագործման հանձնվեց ամերիկյան հակահրթիռային պաշտպանության «էյջիս» (“Aegis”) համակարգը: Իսկ մայիսի 13-ին Լեհաս-

[13] Տես *Ա. Քոլոյան,* ԱՄՆ-ը Հարավային Կորեայում տեղադրել է հակահրթիռային նոր համակարգ: «Ազատություն ռադիոկայան», 02.05.2017 (https://www.azatutyun.am/a/28463991.html):

[14] Տես «ԱՄՆ-ը Հարավային Կորեայում տեղակայել է THAAD ՀՕՊ համակարգ»: «Pars Today», 31.05.2020 (https://parstoday.com/hy/news/world-i121141):

[15] Տես «МИД РФ: система ПРО THAAD в Южной Корее направлена против России и Китая». «Коммерсантъ», 11.10.2017 (https://www.kommersant.ru/doc/3435409):

[16] Տես *А. И. Подберезкин.* Политика стратегического сдерживания России в XXI веке. М., 2019 (http://eurasian-defence.ru/?q=print/book/export/html/45333):

տանի Ռեձիկովո զորակայանում շահագործման հանձնվեց հակահրթիռային պաշտպանության մեկ այլ համակարգ: Ըստ Վաշինգտոնի՝ Արևելյան Եվրոպայում առաջին ցամաքային հակահրթիռային զորակայանը նախատեսված է Իրանից և Հյուսիսային Կորեայից արձակված բալիստիկ հրթիռների խոցման համար[17]:

Պաշտոնական Մոսկվան հայտարարել է, որ Ռումինիայում և Լեհաստանում ԱՄՆ-ի հակահրթիռային համակարգերի տեղաբաշխումն անպատասխան չի մնա: 2019 թ. օգոստոսին ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինը մտահոգություն հայտնեց, որ ծովային բազավորման «Թոմահավկ» (“Tomahawk”) տիպի ամերիկյան հրթիռները կարող են հարմարեցվել ցամաքային պայմաններին և արձակվել Ռումինիայում ու Լեհաստանում տեղաբաշխված կայանքներից: Ռուսաստանյան կողմը հայտարարեց, որ Կալինինգրադում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգերի տեղաբաշխումը Ռուսաստանի հակադարձ միջոցառումների մաս է: Նա նաև հայտարարեց, որ Ռումինիայում և Լեհաստանում ԱՄՆ-ի հրթիռային համակարգերի տեղաբաշխումը ոչ միայն չի ամրապնդելու անվտանգությունը, այլև հետագայում կարող է դառնալ միջուկային սպառազինություն կիրառելու միջոց և փոխում է տարածաշրջանում գործող զսպման համակարգը[18]: Փաստացի, ԱՄՆ-ի այս համակարգի ներբերումը դարձյալ ստիպեց որոշ պետությունների վերանայել զսպման իր ուժային համակարգերն ու կատարելագործել դրանք:

Հարկ է նշել, որ ՌԴ-ն ևս շարունակում է մեծացնել իր հրթիռային հնարավորությունները՝ աշխարհի հակահրթիռային համակարգերի համար առաջ բերելով նոր մարտահրավերներ: Օրինակ՝ 2020 թ. հոկտեմբերի 7-ին Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հրապարակեց «Ծովակալ Գորշկով» հետախուզանավից «Ցիրկոն» գերձայնային թևավոր հրթիռի արձակման տեսանյութը, որտեղ երևում է, թե ինչպես է նավի վերին տախտակամածում եղած խցից արձակվում հրթիռ, թեքվում և ուղղվում դեպի նշանակետ, որը տեղակայված է Բարենցի ծովում: Հրթիռը, վերահսկման տվյալների համաձայն, ուղիղ հարվածով հաջողությամբ խոցել է 450 կիլոմետր հեռավորությամբ գտնվող թիրախը: Թռիչքի առավելագույն բարձրությունը 28 կիլոմետր էր: Գերձայնային հրթիռի արագությունը ավելի քան 8Մ* է: Նախատեսվում է «Ցիրկոն» համակարգով օժտել ռազմածովային

[17] Տես «Մոսկվա. «ԱՄՆ-ի հակահրթիռային համակարգերի տեղակայումն անպատասխան չի մնա»»: «Pars Today», 12.05.2016 (https://parstoday.com/hy/news/world-i16564):

[18] Տես «Путин обеспокоен тем, что испытанную США ракету могут разместить в Европе». РИА «Новости», 21.08.2019 (https://ria.ru/20190821/1557760184.html); «Ռուսաստանը սպառնում է ԱՄՆ-ին պատասխան գործողություններով Ռումինիայում հակահրթիռային պաշտպանության համակարգ գործարկելու համար»: «ForumDaily», 13.05.2016 (https://www.forumdaily.com/hy/rossiya-grozit-ssha-otvetnymi-merami-na-zapusk-sistemy-pro-v-rumynii/):

* Մ-ը Մախի թիվն է՝ օդում ձայնի արագությունը, որը 1200 կմ/ժ է:

ուժերի սուզանավերը և վերջրյա նավերը: Ենթադրվում է, որ այդ հրթիռն առավելագույնը կզարգացնի 9Մ արագություն, իսկ հեռահարությունը կլինի ավելի քան հազար կիլոմետր: Այսպիսի հրթիռին խոցել հնարավոր չէ, ներկայիս ՀՕՊ-ի համակարգերը այս հրթիռը պարզապես չեն տեսնում[19]:

Այնպես չէ, որ զսպման ուժային համակարգերն անպայման գործի են դրվում, քանի որ, որպես կանոն, դրանց վերաբերյալ կնքված պայմանագրերը կամ դրանց նկատմամբ մոտեցումներն աշխարհում այսօր թելադրում են ուժային միջոցներին միայն ամենավերջում դիմելու խոհեմություն: Օրինակ՝ «Նյու ՍՏԱՐՏ» (“New START”) ռազմավարական հարձակողական սպառազինության կրճատման պայմանագիրը սահմանափակում է երկու գերտերություններ ԱՄՆ-ի և ՌԴ ունեցած միջուկային մարտագլխիկների թիվը: Կողմերն այն կնքել են Բարակ Օբամայի և Դմիտրի Մեդվեդևի նախագահության օրոք՝ 2010 թ. ապրիլի 8-ին Պրահայում: Փաստաթուղթն ուժի մեջ է մտել 2011 թ. փետրվարի 5-ին: Դրա գործողության ժամկետը 10 տարի էր, ինչից հետո այն, կողմերի համաձայնությամբ, կարող էր երկարաձգվել ևս 5 տարով: 2021 թ. փետրվարի 5-ից այն պետք է կա՛մ երկարաձվեր, կա՛մ դադարեր գործելուց: 2021 թ. հունվարի 27-ին Ռուսաստանի խորհրդարանի ստորին պալատը՝ Պետդուման, պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգեց մինչև 2026 թվականի փետրվարի 5-ը[20]: 2021 թ. փետրվարի 5-ից պայմանագիրը մտել է ուժի մեջ:

Կամ «Անտի աքսես ընդ էրիա Դինայել»՝ «Ա2/ԱԴ» (“Anti-Access and Area Denial”-A2/AD)[*] հայեցակարգը, որը վերջին տարիների ամենահայտնի ռազմական ռազմավարություններից մեկն է: ԱՄՆ-ը հայեցակարգը կիրառում է ինչպես Եվրոպայում, այնպես էլ խաղաղօվկիանոսյան ավազանում (ՌԴ-ի, Չինաստանի, Իրանի և այլ պետությունների դեմ): Պենտագոնը, ԱՄՆ-ի ՁՈՒ-ի Եվրոպական հրամանատարությունը և Եվրոպայում ՆԱՏՕ-ի ՁՈՒ-ի հրամանատարությունը աշխարհում արդեն ձևավորել են «Ա2/ԱԴ» հայեցակարգի մի շարք գոտիներ[21]: ՌԴ-ն նույն մոտեցումը կիրառում է ընդդեմ

[19] Տես «Большое событие для всей России: Путину доложили о запуске «Циркона» - Россия 24», 07.10.2020 (https://www.youtube.com/watch?v=xq6-LfGAxzM); նաև՝ «Путину доложили об успешном запуске «Циркона»». «Известия», 07.10.2020 (https://iz.ru/1070497/2020-10-07/putinu-dolozhili-ob-uspeshnom-zapuske-tcirkona-s-borta-admirala-gorshkova); «Ռուսաստանի ՊՆ-ն ցույց է տվել «Ցիրկոն» թեւավոր գերձայնային հրթիռի արձակումը»: «News.am», 07.10.2020 (https://news.am/arm/news/ 606640.html):

[20] Տես «Պուտինը ողջունում է ռազմավարական հարձակողական զենքի կրճատման պայմանագրի երկարաձգումը»: «Ազատություն ռադիոկայան», 28.01.2021 (https://www.azatutyun.am/a/31073482.html):

[*] «Մուտքի և տարաշարժի սահմանափակում և արգելում» (ռուս.՝ “Ограничение и воспрещение доступа и манёвра”). հակառակորդի ծովային, ցամաքային և օդային ռազմական միջոցների սահմանափակման, զսպման և արգելման օպերատիվ-ռազմավարական հայեցակարգ է:

[21] Տես «Операция НОАК по выдворению ВМС США из Южно-Китайского моря. Детали «Бьендонгской зоны А2/AD» (часть 1)». «Военное обозрение», 04.07.2017

ՆԱՏՕ-ի առաջխաղացման ու ընդարձակման և արդեն հասցրել է ՆԱՏՕ-ի արևելյան և հարավային ճակատներում ստեղծել «Ա2/ԱԴ» գոտիներ՝ ՆԱՏՕ-ին ստիպելով հաշվի նստել այդ հանգամանքի հետ[22]: Ի դեպ, Չինաստանը ևս զարգացնում է իր «Ա2/ԱԴ» հայեցակարգը:

«Ա2/ԱԴ» ռազմավարությունը նախատեսում է նաև ատոմային հարվածային սուզանավերի կիրառում: Դրանց դժվար է դիմակայել: Այդ իսկ պատճառով Պենտագոնը, օրինակ, հատուկ ուշադրության է արժանացնում ստորջրյա ինքնակառավարվող համակարգերը[23]:

Նշենք նաև, որ ԱՄՆ-ը Եվրոպայում ստեղծում է հակահրթիռային պաշտպանության համակարգ՝ ԵվրոՀՀՊ-ն: Եվ դարձյալ Եվրոպայում ՀՀՊ «էյջիս» համակարգերի տեղաբաշխումը առաջացնում է ՌԴ մեծ դժգոհությունը, քանի որ ըստ ռուսական կողմի՝ Ռումինիայում և Լեհաստանում կամ ամերիկյան նավերի վրա տեղակայված այդ համակարգերը կարող են հաջողությամբ որսալ ռուսաստանյան բալիստիկ հրթիռները:

Վերոնշյալ օրինակները հուշում են, որ բոլոր խնդիրներն ու զարգացումները պետք է դիտել և գնահատել համալիր կերպով, քանի որ նոր հակահրթիռային համակարգերի ստեղծումն ու զարգացումը նվազեցնում է հարվածային զենքերի նշանակությունը, և սկսվում է սպառազինությունների մրցավազք, ինչը բերում է նոր զարգացումների, նոր իրողությունների և աշխարհում լարվածության հերթական աճման: Սա էլ իր հերթին ցույց է տալիս, որ այդ իրողությունները պարտադրում են ունենալ զսպման արդիական ուժային գործիքակազմ:

Ակնհայտ է դառնում, որ հարձակողական ու պաշտպանական սպառազինությունն ու ռազմական տեխնիկան պետք է համաչափորեն զարգանան, նոր հրթիռային համակարգերի դեմ պետք է պայքարեն համարժեք ՀՀՊ համակարգեր: Հաջորդը. նոր ՀՀՊ և ՀՕՊ-ի համակարգերի ստեղծումն առաջ է բերում դրանց դեմ պայքարի նոր միջոցների ստեղծման անհրաժեշտություն (օրինակ՝ ռուսաստանյան «Կինժալ» գերձայնային հրթիռները[*]): Եվ այստեղից կարելի է փաստել, որ ՍՈՏ միջոցների զարգացումն ու մրցավազքը

(https://topwar.ru/119465-operaciya-noak-po-vydvoreniyu-vms-ssha-iz-yuzhno-kitaysskogo-morya-detali-bendongskoy-zony-a2-ad.html):

[22] Տես «A2/AD: стратегия глобального американского облома». «Звезда», 18. 03.2020 (https://zvezdaweekly.ru/news/t/20203171032-oik7d.html); “Active Defense, Forward Defense, and A2/AD in Eastern Europe”, 14.01.2019 (http://www.dupuyinstitute.org/blog/2019/01/14/active-defense-forward-defense-and-a2-ad-in-eastern-europe/):

[23] Տես «Знакомьтесь: великая и ужасная A2/AD». «Cezarium», 03.08.2016 (https://cezarium.com/a2-ad/):

[*] X-47M2 «Կինժալ» ռուսաստանյան գերձայնային ավիացիոն համալիրի հրթիռներն ունակ են ոչնչացնելու ինչպես ստացիոնար օբյեկտներ, այնպես էլ վրաջրյա նավեր՝ ավիակիրներ, կրեյսերներ, էսկադրային ականակիրներ, ֆրեգատներ: Այն «Իսկանդեր» համալիրի ավիացիոն տարբերակն է: «Կինժալ» համալիրի հրթիռները կարող են ունենալ ինչպես ավանդական (սովորական), այնպես էլ միջուկային մարտագլխիկներ:

արտացոլում է, առհասարակ, ռազմական ռազմավարության հայտնի օրինաչափությունները, այն է՝ նոր իրավիճակը բերում է նոր զարգացման մակարդակի, նոր իրողությունները ծնում են նոր զարգացումներ, այդ նոր զարգացումները պատճառ են դառնում դրանց արձագանքելու նոր մեխանիզմների ու համակարգերի ստեղծման համար: Այս սկզբունքի ակնհայտ դրսևորումը զսպման ուժային միջոցների զարգացման համատեքստում ցույց է տալիս, թե որքան առաջ է մարդկությունն անցել ՍՈՏ-ների զարգացման հարցում և թե որքան արագ տեմպերով է կատարվում նույն այդ ՍՈՏ-ների դեմ պայքարի միջոցների զարգացումը: Միևնույն ժամանակ, մի պետության հակահրթիռային պաշտպանության նորագույն համակարգերը զսպում են այլ պետության նորաստեղծ հնարավորությունները:

Նոր ՍՈՏ-ի հնարավորությունները և դրանցով պայմանավորված նոր զարգացումները պետք է գնահատել ռազմավարական մակարդակում, որովհետև նոր հրթիռային միջոցներն ու գերձայնային հրթիռները, դրանց դեմ ստեղծված ՀՀՊ-ները ստիպում են վերանայել ու փոխել զսպման համակարգերն ամենավերին՝ ռազմավարական մակարդակում: Սա էլ կախված է գիտության, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման մակարդակից:

Ավելին. խնդիրը պետք է դիտարկել նաև օդատիեզերական տարածությունում, հատկապես՝ տիեզերքում, քանի որ ՍՈՏ-ների զարգացումն ուղղված է նաև տիեզերական տարածության նվաճմանը:

Պետք է նշել, որ նոր զենքերը նոր խնդիրներ են դնում ԶՈՒ-ի առջև՝ պահանջելով ԶՈՒ-ն համապատասխանեցնել նոր սպառնալիքներին և պահանջներին, պատրաստել կադրեր, որոնք ունակ լինեն օգտագործելու ժամանակակից զինատեսակները: Այսինքն՝ զսպման ուժային գործիքակազմի զարգացումը դինամիկ գործընթաց է զինված ուժերում: Այսպես. յուրաքանչյուր պետություն հետևում է աշխարհում տիրող զարգացումներին և, եթե նա զենք արտադրողների շարքից է, ապա զինված հակամարտություններում ու տեղային պատերազմներում այլ պետությունների նորագույն զինատեսակների կիրառումից անում է անհրաժեշտ հետևություններ և արագորեն փորձում է ստեղծել այդպիսի զենքից պաշտպանող, այն չեզոքացնող համակարգ: Օրինակ՝ Սիրիայում և 2020 թ. Արցախյան պատերազմում լայնորեն կիրառված թուրքական «Բայրաքթար» ԱԹԱ-ների արդյունավետության հաշվառմամբ Ռուսաստանի համապատասխան շրջաններում 2021 թ. մարտ–ապրիլ ամիսներին սկսեց ակտիվորեն շրջանառել «Բայրաքթարին» սանձող ռուսաստանյան համակարգի ստեղծման գաղափարը: Ու թեև թուրքական կողմը համառորեն պնդում է, թե «Բայրաքթարի» դեմ ՌԷՊ-ի ռուսաստանյան համակարգերն անարդյունավետ են, այնուամենայնիվ, փորձագետները նշում են, որ թուրքական ԱԹԱ-ների դեմ պայքարելու համար Ռուսաստանն ունի արդյունավետ սարքավորանք: Այդ միջոցներից մեկը, օրինակ, «Տոր-Մ2ԿՄ» զենիթահրթիռային համակարգն է: Այն միաժամանակ հայտնաբերում է 48 նշանակետ, հետևում տասին և խոցում չորսը: Մասնագետները

նշում են, որ «Բայրաքթար-ՏԲ2»-ը չունի դրան դիմակայելու շանս, եթե այն հայտնվի հակաօդային պաշտպանության հրթիռային համակարգի ծածկույթի գոտում[24]: ՆԱՏՕ-ի ՌՕՈՒ-ի Գերազանցության համատեղ կենտրոնի զեկույցում նշվում է նաև, որ ռուսաստանյան «Պանցիր-Ս1» զենիթահրթիռային և հրանոթային համակարգերը ռազմական ԱԹԱ-ների դեմ պայքարի իդեալական միջոցներ են: ՆԱՏՕ-ի մասնագիտական-փորձագիտական շրջանների կարծիքով՝ նման զենքերը ՆԱՏՕ-ի համար աճող սպառնալիք են[25]:

Հակառակորդի զսպման, նրա ռազմական առաջխաղացման սահմանափակման քաղաքականությունը առաջ է բերում նոր ռազմավարությունների, նոր հայեցակարգերի մշակման անհրաժեշտություն[26]: Այստեղից պետք է անել այն հետևությունը, որ ռազմավարական զսպման ուժային միջոցների, այսինքն՝ հնարավոր ագրեսոր պետության ուժային միջոցների դեմ պայքարի համապատասխան համակարգերի ստեղծման ու զարգացման համար անհրաժեշտ է մշակել կամ վերանայել առկա ռազմավարական փաստաթղթերը, դրանք համապատասխանեցնել արդի պայմաններին ու մարտահրավերներին:

---

[24] Տես «Թուրքիան հայտարարել է «Բայրաքթարի» դեմ ռուսական «ՌԷՊ» համակարգերի անարդյունավետության մասին»: «Լուրեր.com», 01.03.2021 (https://old.lurer.com/?p=408296&l=am):

[25] Տես «В НАТО назвали «Панцирь-С1» идеальным оружием против беспилотников», 27.02.2021 (https://rg.ru/2021/02/27/v-nato-nazvali-pancir-s1-idealnym-oruzhiem-protiv-bespilotnikov.html), նաև՝ «Эксперты НАТО оценили зенитные ракетно-пушечные комплексы «Панцирь-С1»». «Тасс», 27.02.2021 (https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/10797231):

[26] Տես *А. Е. Стерлин, А. А. Протасов, С. В. Крейдин.* Современные трансформации концепций и силовых инструментов стратегического сдерживания. «Министерство обороны РФ», 01.08.2019 (https://vm.ric.mil.ru/Stati/item/203864/):

УСОВЕРШЕНСТВОВАНИЕ СИЛОВЫХ СРЕДСТВ СТРАТЕГИЧЕСКОГО СДЕРЖИВАНИЯ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ НОВЕЙШИХ ВВТ

А. М. ШАХВЕРДЯН, подполковник, старший преподаватель Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Стратегическое сдерживание – это согласованный комплекс силовых и несиловых средств, применяемых в целях снижения и нейтрализации реальных угроз и предотвращения возможных агрессивных действий потенциального противника.

Стремительное развитие авиакосмических средств нападения, постоянное совершенствование разведывательных систем и ракет

дальнего действия, гиперзвукового и высокоточного оружия, массовое применение разведывательных и ударных БПЛА качественно изменили характер, содержание и длительность современных войн, сферы, способы и формы ведения вооруженной борьбы. Все это диктует необходимость разработки нового, более действенного инструментария сдерживания, переоценки тех его механизмов, которые еще в недавнем прошлом были эффективны.

THE IMPROVEMENT OF FORCIBLE MEANS FOR STRATEGIC DETERRENCE IN THE VIEW OF DEVELOPMENT OF NEWEST WEAPONS AND MILITARY EQUIPMENT

A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Senior Lecturer, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Strategic deterrence is a coordinated complex of forcible and non-forcible means applied to mitigate and neutralize the real threats and to prevent possible aggressive actions by a potential adversary.

The rapid development of air-space offensive means, continuous improvement of reconnaissance systems and lond-range missiles, hypersonic and precision-guided weapons, widespread use of ISR and strike drones qualitatively changed the nature, content and duration of modern wars, the spheres, methods and forms of conducting armed struggle. All of this prompts the necessity of designing a new, much more effective toolkit for containment, reviewing those mechanisms of the latter, which have recently been still credible

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հ. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ, պահեստազորի փոխգնդապետ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

Ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում հակաօդային պաշտպանության զորքերին պատկանում է գլխավոր դերերից մեկը, քանի որ դրա միջոցով են ապահովվում հակառակորդի օդային հարվածների հետմղումը և օդից հասցվող հարվածներից յուրային զորքերի, բնակչության և օբյեկտների պաշտպանությունը[1]: Արևմուտքում կիրառելի են երկու հասկացություն՝ **օդային պաշտպանություն** *(air defense)* և **օդատիեզերական պաշտպանություն** *(aerospace defense)*: Առաջինը սահմանվում է որպես «պաշտպանական միջոցառումներ, որոնք նախատեսված են հակառակորդի հարձակվող ավիացիայի կամ բալիստիկ հրթիռների ոչնչացման, ինչպես նաև նման հարձակման արդյունավետության զարգացման կամ նվազեցման համար»[2], իսկ երկրորդը՝ «պաշտպանական միջոցառումներ, որոնք նախատեսված են հակառակորդի հարձակվող ավիացիայի ու հրթիռների ոչնչացման կամ չեզոքացման, ինչպես նաև թշնամական տիեզերական համակարգերի ճնշման համար»[3]:

Արդի պատերազմներին բնորոշ է օդային հարձակման **արագընթացությունը**, որը մեծապես պայմանավորված է ՍՈՏ արագագործությամբ, խոցման արդյունավետությամբ և արագաշարժությամբ: Մասնավորապես՝ օդային հարձակման նոր սերնդի միջոցները (նոր սերնդի ՕՀՄ-եր) հնարավորություն ունեն **հայտնաբերելու և խոցելու ցանկացած օբյեկտ** հակամարտող պետության **տարածքի ամբողջ խորությամբ, ինչն էապես փոխում է ՀՕՊ-ի համակարգին ներկայացվող պահանջները:**

Տարբերում են պետության (պետությունների դաշնադրության) ՀՕՊ-ը և զորային ՀՕՊ-ը՝ նախատեսված օդային հարվածներից զորքերի (նավատորմի ուժերի) պաշտպանության համար:

Բացի այդ, ՀՕՊ-ը կարող է լինել *ակտիվ*, երբ ուժերն ու միջոցները

---

[1] Տես «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под ред. Д. А. Рогозина, кн. I. М., 2017, с. 194:

[2] “DOD Dictionary of Military and Associated Terms”, January 2021, P. 10:

[3] Տես նույն տեղում, էջ 9:

գործողություններ են ձեռնարկում հակառակորդի օդային հարվածները հետ մղելու կամ արդյունավետությունը նվազեցնելու նպատակով, և *պասիվ*, որի միջոցառումները նպատակաուղղված են հակառակորդի ավիացիայի հարձակումների արդյունավետության նվազեցմանը (ապաստարանների սարքավորում, ապակենտրոնացում, քողարկում, պաշտպանիչ շինությունների կառուցում և այլն)[4]:

Ժամանակակից տեղային պատերազմների ու զինված հակամարտությունների փորձի, ինչպես նաև առաջատար պետությունների մասնագիտական գրականության ու ՍՈՏ զարգացման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ձևակերպելու ՀՕՊ-ին այժմ ներկայացվող մի շարք պահանջներ, որոնցից նշենք հետևյալները.

– մարտական գործողությունների վարման տևողության կտրուկ կրճատում,
– իրադրության ցանկացած պայմաններում ՀՕՊ-ի զորքերի գործողությունների համարձակություն ու վճռականություն, մարտունակության արագ վերականգնում և հակառակորդի նկատմամբ գերազանցության ձեռքբերում ու պահպանում,
– օդատիեզերական տարածությունում գործող զորքերի (ուժերի) և միջոցների կիրառման ծավալների ընդլայնում, այդ թվում՝ զորքերի խմբավորումների հայտնաբերման և դրանց հարձակման սկզբի մասին յուրային զորքերի պատեհաժամ իրազեկման համար օդատիեզերական հետախուզական համակարգերի լայն օգտագործմամբ,
– կառավարման օպերատիվությունը մեծացնելու համար կառավարման բոլոր օղակների հրամանատարական (կառավարման) կետերում կառավարման ավտոմատացված համակարգերի լայն ներդրում:

Ժամանակակից պատերազմի բնույթը թելադրում է ցամաքում, ծովում, օդում, տիեզերքում, իսկ ներկայումս նաև կիբեռտիրույթում հակառակորդի ամենաարդիական օդային միջոցների դեմ պայքար վարելու կարողություն: Այսպես. ՌԴ ռազմական գիտությունների ակադեմիայի նախագահ, բանակի գեներալ Մ. Ա. Գարեևը գրում է. «Զինված պայքարի ժամանակակից բնույթով պայմանավորված՝ նրա ծանրության կենտրոնը և հիմնական ջանքերը տեղափոխվում են օդատիեզերական տարածություն»[5]:

Ժամանակակից զինված հակամարտությունների, ռազմարշավների ու տեղային պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ տեսանելի ապագայում պատերազմներում շարունակելու են գերիշխել օդատիեզերական հարձակման միջոցները, որոնք ներկայումս զինված պայքարի նպատակներին հասնելու առավել վճռորոշ և ազդու գործոններից են, իսկ

[4] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 1241:

[5] Տես «Новые структуры группировок ПРО-ПВО на театрах военных действий – требование времени», 5 сентября 2019 (https://www.vesvks.ru/vks/article/novye-struktury-gruppirovok-pro-pvo-na-teatrah-voe-16456):

օդատիեզերական տարածությունը դառնում է ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը:

Հակառակորդի ՕՀՄ-երի դեմ հաջող մարտական գործողությունների վարման համար անհրաժեշտ է նրան հակադրել հակաօդային պաշտպանության ուժերի և միջոցների այնպիսի համակարգ, որն ունակ լինի արդյունավետ ու սիներգիական կերպով գործակցելու ՌՕՈՒ-ի և ՌԷՊ-ի ուժերի ու միջոցների հետ:

Ընդսմին որքան ավելի մեծ լինի հակաօդային պաշտպանության արդյունավետությունը, այնքան հուսալի կլինի զորքերի և օբյեկտների պաշտպանվածությունը ՕՏՀՄ-ների հարվածներից[6]:

Ռազմական հակամարտությունների ու գիտական գրականության ուսումնասիրությունը հիմք է տալիս նաև պնդելու, որ ժամանակակից պատերազմի պահանջներին հակաօդային պաշտպանության համակարգը համապատասխանեցնելու համար նպատակահարմար է այն զարգացնել ըստ դրանց առջև դրվելիք գլխավոր խնդիրների՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

- ՀՕՊ-ի սպառազինության զարգացում,
- ՀՕՊ-ի զորամասերի և ստորաբաժանումների կազմակերպահաստիքային կառուցվածքի կատարելագործում,
- օպերացիաներում և մարտերում ՀՕՊ-ի ուժերի և միջոցների մարտական կիրառման ձևերի ու եղանակների կատարելագործում,
- ՀՕՊ-ի զորքերի մարտական պատրաստության մակարդակի բարձրացում,
- ՀՕՊ-ի զորքերի համար որակյալ հրամանատարասպայական կադրերի, ինչպես նաև կրտսեր հրամանատարների ու մասնագետների պատրաստում[7]:

ՀՕՊ-ի զորքերի զարգացման միտումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից մի քանիսը, մեր կարծիքով, ունեն առանձնահատուկ կարևորություն: Դրանք են՝

- ապագա պատերազմների հավանական բնույթն ու մասշտաբները,
- հավանական հակառակորդի ՕՀՄ-երի վիճակը և զարգացման հեռանկարները, դրանց մարտական կիրառման ձևերի և եղանակների կատարելագործման միտումները,
- ՕՏՀՄ-ների կիրառման նկատմամբ հակառակորդի ռազմաքաղաքական ղեկավարության մոտեցումները,
- հավանական հակառակորդի զինված ուժերի զարգացման ուղղությունները,
- յուրային պետության տնտեսական հնարավորությունները:

[6] Տես *Ա. Գ. Վարդանյան,* Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հակաօդային պաշտպանության համակարգի արդյունավետության մեծացման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2013, հմ. 1–2:

[7] Տես նույն տեղում:

Ելնելով օպերացիաներում առաջատար պետությունների ԶՈՒ-ի մարտական գործողությունների վարման փորձից՝ նպատակահարմար ենք համարում զենիթային սպառազինության զարգացումն իրականացնել հետևյալ ուղղություններով.

- զարգացման հիմք համարել նոր տեխնոլոգիաների և գիտական մշակումների հիման վրա ՍՈՏ նմուշների առանձին բլոկների, հանգույցների և ագրեգատների կատարելագործումը գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների շրջանակներում: Ընդսմին հնարավոր է կարճ ժամկետում բարելավել զինանոցում եղած սպառազինության և ռազմական տեխնիկայի բնութագրերը և դրանով իսկ մեծացնել ժամանակակից ու հեռանկարային ՕՏՀՄ-ների դեմ պայքարում ՀՕՊ-ի զորքերի մարտական հնարավորությունները,
- զենիթային սպառազինության կառուցման մոդուլային սկզբունքի հաշվառմամբ սպառազինության նմուշներն ստեղծել միասնական հիմքային արտադրատեսակների հիման վրա,
- հակաօդային պաշտպանության խնդիրների լուծման շրջանակներում ապահովել զորային ՀՕՊ-ի միջոցների տեղեկատվական և տեխնիկական համատեղելիությունը պետության ՀՕՊ-ի զորքերի սպառազինության հետ, ինչպես նաև ապահովել ռադիոտեխնիկական հետախուզության (ՌՏՀ) և ռադիոէլեկտրոնային պայքարի, հետախուզահարվածային համալիրների (ՀՀՀ) ներդրումը,
- բարձրացնել զորային ՀՕՊ-ի ռադիոէլեկտրոնային միջոցների ծածուկության և խանգարումապաշտպանվածության աստիճանները,
- ապահովել զենիթային սպառազինության միօրինակությունը,
- արդիականացնել առկա սպառազինությունը՝ էլեկտրոնակառավարային համակարգի կատարելագործմամբ:

Գործնականում այդ ուղղություններով զարգացումը կարող է ներառել.

ըստ կրակային միջոցների՝

- անցում օպերատիվ օղակի միասնական զենիթահրթիռային համալիրների (ԶՀՀ), զենիթահրթիռային համակարգերի (ԶՀՀկ-ներ) և մարտավարական օղակի զենիթահրթիռային համալիրների (ԶՀՀ-ներ)՝ մոդուլային սկզբունքով դրանց կառուցման հիման վրա,
- գերճշգրիտ զենքերից կոլեկտիվ ու անհատական պաշտպանության համար ՌԷՊ-ի համակարգերի մշակում,
- զենիթային հրետանահրթիռային համալիրների (ԶՀՀՀ-ներ) բազաների հիման վրա նոր զենիթային հրետանահրթիռային համալիրների ստեղծում, ինչպես նաև դրանց համար նոր ինքնառչնչացող զինամթերքների մշակում և ներդրում,
- առկա զենիթահրթիռային և հրետանային համալիրների արդիականացում՝ էլեկտրոնային համակարգի կատարելագործմամբ,
- դյուրակիր զենիթահրթիռային համալիրների (ԴԶՀՀ-ներ) հետագա կատարելագործում:

Ըստ հետախուզության միջոցների՝

- բարձրությունների բոլոր մակարդակներում մարտական և հերթապահ բանելակարգով գործող կայուն հետախուզական համակարգ ստեղծելու միջոցով անցում օպերատիվ և մարտավարական օղակներում օգտագործվող ռադիոտեղորոշումային կայանների (ՌՏԿ),
- հետախուզական միջոցների կառավարման ժամանակակից ավտոմատացված միջոցների և տեղեկույթի հաղորդման միասնական ցանցային համակարգերի ստեղծում,
- միասնական տեղեկատվական դաշտի ստեղծման նպատակով զորային ՀՕՊ-ի ռադիոտեղորոշումային հետախուզության միջոցների համալիր ինտեգրում ՌՏՀ, ՌԷՊ-ի միջոցներին,
- նոր սերնդի մանրաեզրաչափքային և դժվար նկատելի ԱԹԱ-ների հայտնաբերման համար ոչ պակաս, քան $\sigma_{\text{ա}2}$ =0,0008 մ^2 ցրման արդյունավետ մակերեսով նոր ՌՏՀ միջոցների մշակում և ներդրում,
- նշանակետերի որոշարկման համակարգերի կատարելագործում:

Ըստ կառավարման ավտոմատացված միջոցների՝

- զորքերի համալրում ժամանակակից հաշվողական տեխնիկայի հիմքի վրա գործող կառավարման ավտոմատացված միջոցներով և կառավարման ավտոմատացված համակարգերով (ԿԱՀ) ներդրում,
- օպերատիվ օղակում ԿԱՀ-ի կազմում հետախուզության և ՀՕՊ-ի միասնական ստացիոնար-շարժական ԿԱՀ-երի ստեղծում,
- օպերատիվ և մարտավարական օղակների համար կառավարման ավտոմատացված համալիրների մշակում և անհրաժեշտ քանակով ներդրում:

Ըստ տեխնիկական ապահովման և ՍՈՏ վերանորոգման միջոցների՝

- օպերատիվ և մարտավարական օղակներում զորային ՀՕՊ-ի ՍՈՏ տեխնիկական սպասարկման և վերանորոգման միօրինակացված միջոցների ստեղծում,
- զորային ՀՕՊ-ի ՍՈՏ-ին անհրաժեշտ պահուստային ունեցվածքի և պարագաների (ՊՈՒՊ), ինչպես նաև զենիթային կառավարվող հրթիռների օպերատիվ և զորային պահուստների ստեղծում և շարակարգում,
- զորային ՀՕՊ-ի տեխնիկական միջոցների տեխնիկական սպասարկման, վերանորոգման, ինչպես նաև տարահանման համար տեղական արդյունաբերական բազայի օգտագործման հնարավորության ապահովում:

ՀՕՊ-ի զորքերի զարգացմանը միտված այս միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա հակառակորդին զրկելու գլխավոր հարվածի ուղղություններում օդային գերազանցություն նվաճելուց՝ օպերացիայի ընթացքում այլ տեսակների զորքերի և զորատեսակների արդյունավետ փոխգործության կազմակերպմամբ:

Հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղությամբ գործող զորքերի խմբավորումների արդյունավետ ծածկապաշտպանության համար նպատակահարմար է մեծացնել ՀՕՊ-ի կարողությունը՝ զանգվածայնացնելու իր ուժերն ու միջոցները: Դա հնարավորություն կտա էապես մեծացնելու գլխավոր ուժերի և միջոցների հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղությամբ ՀՕՊ-ի զորքերի գլխավոր ուժերի և միջոցների ինչպես տարաշարժի, այնպես էլ օպերացիայի ընթացքում ՀՕՊ-ի խախտված համակարգը վերականգնելու հնարավորությունները:

Նշված միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի ուժեղացնել ինչպես գլխավոր հարվածի ուղղությամբ գործող զորամիավորումների, այնպես էլ դրանց օպերատիվ դասավորվածքի խորքում գտնվող կարևոր օբյեկտների հակաօդային պաշտպանությունը, իսկ ՀՕՊ-ի հաստիքային ուժեր և միջոցներ չունեցող օբյեկտների հակաօդային պաշտպանության համար ստեղծել ուժերի և միջոցների համապատասխան պահուստներ: Ընդ որում, դա հնարավորություն կտա հակաօդային պաշտպանության զորքերի դասական կազմակերպվածքից անցում կատարելու դեպի ճկուն կառուցվածք, որը, կախված առաջիկա մարտական խնդիրների ծավալից ու բնույթից (կոնկրետ մարտական պայմանների համար կիրառելի), հնարավորություն կտա նվազագույն ծախսերով ստեղծելու անհրաժեշտ մակարդակի կազմավորումներ:

Նշված նպատակներին կարելի է հասնել հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝

- զորային ՀՕՊ-ի կազմը վերաբաշխել տարածաշրջանների և ռազմավարական ուղղությունների միջև՝ հավանական հակառակորդի ՕՀՄ-երի խմբավորումների հնարավորություններին համապատասխան,
- զենիթահրթիռային և զենիթահրետանային համալիրների համատեղ մարտական գործողությունների վարման նպատակով դրանց հիմքի վրա ստեղծել խառը զենիթային հրթիռահրետանային կազմավորումներ,
- ներքին տարածաշրջանային զորային ՀՕՊ-ի կազմավորումների հաշվին (օպերատիվ-մարտավարական օղակներում վերաբաշխմամբ) ռազմավարական ուղղություններում ստեղծել զորային ՀՕՊ-ի պահուստներ:

ՀՕՊ-ի զորքերի կառուցվածքային արդիականացման ու զարգացման գործում վերոնշյալ փոփոխությունների բերումով առաջ կգա ոչ միայն մարտական գործողությունների վարման նոր ձևեր ու եղանակներ մշակելու անհրաժեշտություն, այլև կարիք կլինի հստակեցնելու զորային ՀՕՊ-ի կազմավորումների մարտական կիրառման որոշ սկզբունքներ:

Ինչ վերաբերում է ՀՕՊ-ի զորքերի մարտավարության զարգացմանը, ապա, մեր կարծիքով, դա նպատակահարմար է իրագործել հետևյալ ուղղություններով: Մասնավորապես՝ լավ արդյունք է տալիս օդային հակառակորդի խոցման հետախուզահարվածային համակարգերի ստեղծումն ու կիրառումը: Ընդսմին օդային հակառակորդի հետ պայքարը ենթադրում է ոչ

միայն օդային հարձակման միջոցների ոչնչացում, այլև համալիր կրակային խոցման ընթացքում ՕՀՄ-երի խմբավորման վրագետնյա տարրերի (օդանավակայաններ, ուղղաթիռային թռիչքարաններ և այլն) խոցում: Բացի այդ, ցանկալի է միջին հեռահարության ԶՀՀ-ների և ԶՀՀկ-ների հիմքի վրա ստեղծել առավել կարևոր օբյեկտների մարտավարական հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) համակարգ:

Մարտական գործողությունների վարման առաջավոր փորձի* ընդհանրացմամբ առաջարկում ենք կատարելագործել և մշտապես զարգացնել զորային ՀՕՊ-ի զորամասերի և ստորաբաժանումների մարտական կիրառման մարտավարությունը, ինչպես նաև գործարկել մարտավարության հանկարծակի փոփոխության հնարը:

Այս առումով առաջին պլան են մղվում ՀՕՊ-ի զորքերի մարտական կիրառման ոչ դասական մեթոդների մշակումը և ոչ դասական մարտակարգերի ստեղծումը: Դա պայմանավորված է տարաշարժուն պաշտպանության, հատուկ պայմաններում գործողությունների, մարտից դուրս գալու, տարաշարժուն ուժերի վրա դրվող խնդիրների լուծման ժամանակ այդ զորքերի օդային պաշտպանության արդյունավետության ապահովման անհրաժեշտությամբ:

Մարտական գործողությունների պլանավորման ժամանակ զենիթային զորամասերն ու ստորաբաժանումները պետք է տեղակայվեն ոչ թե կոնկրետ դիրքային շրջանում (մեկնարկային դիրքերում), այլ մարտական առաջադրանքի կատարման շրջաններում, որի սահմաններում համապատասխան հրամանատարներն իրենք են ընտրում դիրքերը և տեղաշարժի երթուղիները:

Օդային հակառակորդին հակազդեցության միջոցների (ՌԷՊ, քողարկման տարաբնույթ միջոցառումներ և այլն) համալիր կիրառումը անգամ նրա թվային ու որակական գերազանցության պայմաններում կարող է կտրուկ կերպով նվազեցնել հարձակողական գործողությունների արդյունավետությունը՝ ընդհուպ մինչև առաջադրված խնդիրների կատարման ձախողում:

ՀՕՊ-ի զորքերի մարտական պատրաստության կատարելագործման հիմնական ուղղություններից են.

- ուսուցման առաջավոր փորձի և մեթոդների ներդրումը, այդ թվում՝ տարբեր մասնագիտացված համակարգչային վարժասարքերի լայն կիրառումը,
- մարտավարական (հրամանատարաշտաբային) զորավարժություններում իրական մարտական իրադրությանը մոտ պայմանների ստեղծումը, իրադրության արագ փոփոխվող պայմաններում կառավարման մարմինների գործելու ունակությունների կատարելագործումը:

Ընդ որում, նպատակահարմար է հրամանատարաշտաբային զորավարժություններն անցկացնել ռազմաօդային ուժերի և համազորային զորամիավորումների հետ համատեղ և դրանց ընթացքում գործնականորեն մշա-

* Հաշվի են առնվել նաև 2020 թ. ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ Ադրբեջանի և Թուրքիայի վարած պատերազմական գործողությունները, որոնց տողերիս հեղինակը ևս մասնակցել է:

կել զորատեսակների գործակցելիության ապահովման և օդային նշանակետերի հայտնաբերման, ճանաչման ու զորքերի ծածկապաշտպանության հարցերը: Մարտական գործողություններում արդյունավետ կերպով համատեղ գործելու համար էական նշանակություն ունեն հավանական հակառակորդի ՕՀՄ-երի կիրառման ձևերի, եղանակների ու մարտավարության ուսումնասիրությունը, ուսումնավարժական սարքերի հետագա արդիականացումն ու միօրինակացումը, ուսումնանյութական բազայի մշտական զարգացումն ու կատարելագործումը:

ՀՕՊ-ի զորքերի համար որակյալ հրամանատարասպայական կադրերի, կրտսեր հրամանատարների ու մասնագետների պատրաստումը մեծապես կնպաստի համակարգի զարգացմանը: Դրան կարելի է հասնել, առաջին հերթին, անձնակազմի բարոյահոգեբանական և գործնական հատկանիշների ուսումնասիրության հիման վրա մշակված ուսումնական միջոցառումների մշակման ու ներդրման, ինչպես նաև հմուտ կադրային քաղաքականության վարմամբ:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնական հաստատությունների հետագա զարգացումը, դրանց համալրումը գիտուն և փորձառու պրոֆեսորադասախոսական կազմով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդների լայն կիրառումը: Աշխատանքներ պետք է տարվեն, որպեսզի համապատասխան մասնագիտություն ունեցող մեր սպաները հնարավորություն ունենան պատրաստվելու և վերապատրաստվելու այլ երկրների համապատասխան բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում: Տարբեր պետությունների հետ ռազմական համագործակցության շրջանակներում ցանկալի է ջանքերը կենտրոնացնել ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմի մշտական վերապատրաստման, այլև առաջավոր օտարերկրյա ուսումնական հաստատությունների առաջադիմական փորձի տեղայնացման ու ներդրման վրա:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОВЫШЕНИЯ БОЕВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ ВОЙСК ПВО С УЧЕТОМ ОСОБЕННОСТЕЙ СОВРЕМЕННЫХ ВОЙН

У. П. МИНАСЯН, подполковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Анализ вооруженных конфликтов последних лет подтверждает, что в современных войнах на ход и исход военных действий решающее влияние оказывают возможности систем ПВО, а также оперативной противоракетной обороны (ПРО) для защиты от средств воздушно-космического нападения (СВКН). При этом центр тяжести столкновений переносится в водушно-космическое пространство. Очевидно,

что боевые возможности систем ПВО и ПРО и группировок их войск должны как минимум быть равнозначны атакующим возможностям задействованных в операциях разнообразных и разнородных СВКН противника.

В настоящее время системы ПВО и ПРО превратились в важный оперативно-стратегический фактор сдерживания агрессии, и экономия средств, направленных на развитие этих систем, чревата необратимыми последствиями. В то же время, вооружение войск ПВО должно быть по возможности немногих видов, соответствовать принципу «разумной достаточности» и научно обоснованному критерию «стоимость–эффективность».

SOME ISSUES OF AIR DEFENSE FORCES COMBAT CAPABILITIES IMPROVEMENT WITH A VIEW ON THE PECULIARITIES OF MODERN WARS

H. P. MINASYAN, Lieutenant Colonel (Ret.), Research Fellow, Centre for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

The analysis of the recent armed conflicts proves the dramatic impact that the capabilities of the air defense system, as well as of the operational missile defense system for the protection against aerospace assault weapons have on the course and outcome of the military operations in contemporary wars. Wherein, the gravity centre of collisions is transferred to the aerospace. It is obvious that air and missile defense systems' combat capabilities and such force groupings must at least be equipotential to the offensive capabilities of adversary's various and diverse aerospace assault weapons applied in operations.

At the moment the air and missile defense systems have become a crucial operational and strategic factor in deterring aggression, thus any kind of cost cutting of development projects for these systems might be fraught with irreversible consequences. Concurrently, the armament, in service of the air defense troops, should be of little variety, congruent with the principle of reasonable sufficiency and scientific-based criterion of cost–effectiveness.

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ ԼՅՈՒՇԵՐԻ ԹԵՍՏԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Գ. Հ. ՂԱԶԱՐՅԱՆ, հոգեբանական գիտությունների թեկնածու,
Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի դոցենտ

ՀՀ Զինված ուժերի արդիականացումը, մարտունակության մակարդակի բարձրացումը և զորքերի գործունեության արդյունավետության մեծացումը ներկայումս ունեն առաջնահերթ կարևորություն: Որպեսզի զորքերը իրենց մարտական խնդիրները կատարեն արդյունավետորեն և նվազագույն կորուստներով, անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր իրավիճակներում զինծառայողների օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական և հուզական կենսընթացները, նրանց վարքային փոփոխությունները: Հարկ է շեշտել, որ անգամ նորագույն տեխնոլոգիաների դարաշրջանում բոլոր բնագավառներում, այդ թվում՝ պաշտպանության, մարդու դերը շարունակում է մնալ առանցքային, քանի որ նույնիսկ ամենամանրակրկիտ կերպով պլանավորված մարտական գործողությունը չի կարող հաջողությամբ պսակվել, եթե անձնակազմն իր ֆիզիկական և հոգեբանական վիճակով պատրաստ չէ մարտի[1]: Ուստի անհրաժեշտ է մինչև մարտական գործողությունների սկիզբը որոշել զինծառայողների հոգեկան վիճակը և գնահատել մարտին մասնակցելու նրանց պատրաստության աստիճանը, ինչպես նաև մարտական գործողություններից հետո կատարել նրանց հոգեբանական շտկման և վերականգնման աշխատանքներ:

Մասնագետները նշում են, որ հոգեբանական հետազոտությունների առաջին փուլի աշխատանքը նպատակահարմար է կատարել զինկոմիսարիատներում: Զորակոչիկների շրջանում այն պետք է ուղղված լինի հուզական լարվածության դեպքում ապահարմարումային վարքի, զինվորական պարտականությունների կատարման [և հաղորդակցման ժամանակ հնարավոր դժվարությունների առաջացման հոգեբանական պատճառների վաղ հայտնաբերմանը: Հոգեբանական ախտորոշման և մասնագիտական ընտ-

[1] Տես *Г. А. Казарян.* Значение психологических показателей в процессе отбора призывников. Дисс. кандидита псих. наук. Е., 2009; *А. Г. Караяни, П. А. Корчемный, В. И. Марченков.* Психологическая подготовка боевых действий войск. М., 2011; *Yechezkel Dar, Shaul Kimhi.* Military Service and Self-Perceived Maturation Among Israeli Youth. “Journal of Youth and Adolescence”, 2001, Vol. 30, N 4; *Վ. Հ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, գ. 4. «Մարտական գործունեության բարոյահոգեբանական ապահովումը», էջ 202–258:

ռազատման շրջանակներում կատարվող հետազոտությունը պետք է շարունակվի հավաքականում, ապա՝ զորամասերում (զորամասի հոգեբանի, բժշկի, հրամանատարի մասնակցությամբ, որտեղ մասնագիտական հանձնաժողովները պետք է ուսումնասիրեն զինծառայողների անձնային բնութագրերը): Զորամասում գործող այդպիսի հանձնաժողովի մշտական ուշադրության առարկան պետք է լինեն ինքնասպանության փորձերը, զինծառայողների միջև ոչ կանոնադրային հարաբերությունները, կրտսեր կազմի զինծառայողների նկատմամբ հրամանատարների ոչ պատշաճ վարքի, կարգապահական խախտումներին զինծառայողների հակվածության, դասալքության հետ կապված հարցերը և այլն[2]:

Նման հետազոտությունների շրջանակում մենք կատարել ենք ՀՀ-ում **առանձին խմբերի** զորակոչիկների ու զինծառայողների հոգեբանական ախտորոշում Լյուշերի 8 գունային թեստի կիրառությամբ: Լյուշերի պրոյեկտիվ թեստի արդյունքներով հնարավոր է արագ և պարզեցված կարգով բավարար տեղեկություններ ստանալ անձնավորության հոգեվիճակի վերաբերյալ: Գունային հոգեախտորոշիչ մեթոդների մեթոդաբանական հիմքը գունային սիմվոլիկայի ավանդույթներն ու գույնի **հուզական ընկալման** սխեմաներն են: Մեթոդի հիմնական առավելություններն են թեստավորման արագությունը, հետազոտվողին առաջադրվող խնդրի պարզությունը, **հետազոտվողի համար թեստի հոգեախտորոշիչ բովանդակության գաղտնիությունը,** միևնույն հետազոտվողին բազմակի թեստավորման ենթարկելու հնարավորությունը:

Թեստի արդյունքները կախված չեն հետազոտվողի ինքնագնահատականից, մտավոր զարգացածության մակարդակից և իր վիճակը բանավոր կերպով ներկայացնելու (վիճակի մասին խոսելու) կարողությունից: Լյուշերի մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտելու գունային չափանմուշներին հետազոտվողի չգիտակցված հակազդումները, ինչի շնորհիվ մեթոդը համարվում է պրոյեկտիվ և խորքային: Լյուշերի թեստի կիրառմամբ կատարվող հետազոտության արդյունքներն արժանահավատ են և գործնականում լայնորեն կիրառելի[3]:

---

[2] Տես *С. Невенчанный, С. Чергинец.* Психологические состояния военнослужащих в условиях ведения боевых действий. Пути формирования моральной готовности и психологической способности военнослужащих к боевым действиям. «Армейский сборник», 3 августа 2020 (http://army.ric.mil.ru/Stati/item/259955/); *L. Paige, K. D. Renshaw, E. S. Allen et al.* Deployment trauma and seeking treatment for PTSD in US soldiers. “Military Psychology”, 2019, Vol. 31, Issue 1 (https://www.tandfonline.com/doi/full/10.1080/08995605.2018.1525219); *Ihor Prykhodko, Serhii V. Bielai, Anatolii Hrynzovskyi, Anatolii M. Zhelaho.* Medical and psychological aspects of safety and adaptation of military personnel to extreme conditions. “Wiadomości lekarskie”, 1960, Vol. 73, Issue 4; *J. Griffith.* Relationships of deployment and combat experiences to postdeployment negative health conditions among Army National Guard soldiers. “Military Psychology”, 2019, Vol. 31, Issue 2 (https://www.tandfonline.com/doi/full/10.1080/08995605.2019.1565908); *Եչեզկել Դար, Շաուլ Կիմիի,* Նշ. աշխ.:

[3] Տես *Г. А. Казарян.* Значение психологических показателей в процессе отбора

Լյուշերի գունային թեստի կիրառմամբ հետազոտվել են 18-ից 24 տարեկան 469 երիտասարդներ, որոնք բաժանվել են չորս խմբի: Ա խմբում ընդգրկվել են զինապարտության տարիքի երիտասարդները (2001–2004 թթ.), Բ խմբում՝ ՀՀ ռազմական հոգեբուժական փորձաքննության ուղարկված զորակոչիկները, որոնք հետագայում ճանաչվել են հոգեպես առողջ (2001–2003 թթ.), Գ խմբում՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի դիմորդները (2015–2016 թթ. ուստարի), Դ խմբում՝ պարտադիր ժամկետային այն զինծառայողները, որոնք վիրավորվել էին 2020 թ. սեպտեմբեր–նոյեմբեր ամիսներին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած մարտական գործողություններում:

Հետազոտության արդյունքներով հաշվարկվել են գունային նախընտրությունների նորմատիվային տվյալները, որոնք ՀՀ-ում զորակոչային տարիքի երիտասարդների համար նյարդահոգեկան բարվոքության ցուցիչներ են: Գույների բաշխման հաճախականություններով որոշվել է շարքում դրանց միջին արժեքը՝ կարգը *(անգլ.՝ rank, ռուս.՝ ранг)* և կազմվել ընդհանուր խմբի գունային նախընտրությունների կարգային շարքը (աղյուսակ 1), որն ունի հետևյալ համակցությունը՝ 2 4 3 5 1 7 0 6 (կանաչ, դեղին, կարմիր, մանուշակագույն, կապույտ, սև, մոխրագույն, դարչնագույն)[4]:

Աղյուսակ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՐՔ

Գույներ	Միջին կարգ	Վերջնական կարգ
Կապույտ	4,41	5
Կանաչ	3,57	1
Կարմիր	3,96	3
Դեղին	3,91	2
Մանուշակագույն	4,14	4
Դարչնագույն	5,8	8
Սև	4,63	6
Մոխրագույն	5,58	7

призывников; *В. В. Семикин.* Цветовой тест Люшера в задачах диагностики функционального состояния и работоспособности человека – оператора. Методики исследования и диагностики функционального состояния и работоспособности человека - оператора в экстремальных условиях. М., 1989, сс. 61–71; *M. Luscher.* The Luscher Color Test. New York, 1969; *H. Wallniffer.* Stress und autogenes Training. “Therapiewoche”, 1976, N 26, նաև՝ *Ա. Է. Մելիք-Փաշայան, Ա. Մ. Փարսադանյան,* Զորակոչիկների համալիր հետազոտումը ռազմահոգեբուժական փորձաքննության ժամանակ: «ՀԲ», 2007, հմ. 4:

[4] Տես *Г. А. Казарян.* Цветовая символика, феномены и механизмы цветовых предпочтений. Актуальные вопросы прикладной психологии. «Сборник межвузовских научных статей». Е., 2007, сс. 187–199; *նույնի՝* Значение психологических показателей в процессе отбора призывников:

Խմբի գունային նախընտրությունների ակնկալիքների (հաշվարկված նորմատիվների) միջոցով հնարավոր է որոշել կոնկրետ գույնի ընտրության «ինքնատիպության» աստիճանը: Դա անհատական և միջին խմբային ընտրության տարբերությունն է և կարող է հաշվարկվել Չ. Սպիրմանի հայտնի կարգային համահարաբերակցության գործակցի («կոպիտ» գնահատական) կամ Բ. Բազիմայի մշակած «գունային ընտրության ինքնատիպության գործակցի» («նուրբ» գնահատական) միջոցով[5]:

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել են հետևյալ գործոնները (0-ից մինչև 100 %). F1-ը՝ ընտրության անկայունության գործոնը (50 %-ից սկսած համարվում է զգալի հակվածություն հուզական կազմալուծությանը), F2-ը՝ աուտոգեն նորմայից (AT) շեղման գործոն (աուտոգեն նորման ենթադրում է նյարդահոգեկան բարվոքության վիճակ, որը մինչև 35 % համարվում է բարվոք, 50 %-ից բարձր՝ ոչ բարվոք), F3-ը՝ տագնապայնության գործոն (50 %-ից բարձրը համարվում է տագնապայնություն), F4-ը՝ ակտիվության գործոն (օրգանիզմի ծախսած ֆիզիկական և հուզական էներգիայի չափը. 50 %-ից սկսած համարվում է բարձր և կարող է հանգեցնել արագ հյուծվածության), F5-ը՝ աշխատունակության գործոն (75 %-ից բարձրը համարվում է բարձր աստիճանի նպատակաուղղված ակտիվություն և աշխատունակություն)[6]:

Բոլոր չորս խմբերում ստացված տվյալների համեմատական արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

F1–F5 ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԱՆԴԱՐՏ ՇԵՂՈՒՄԸ (σ)

Հետազոտության կատարման ժամանակը	(2001 – 2004 թթ.)		(2001 – 2003 թթ.)		(2015 – 2016 թթ.)		(2020 թ. սեպտեմբեր–նոյեմբեր)	
Գործոններ	Ա զինապարտ տարիքի երիտասարդներ		Բ փորձաքննությամբ հոգեպես առողջ ճանաչված զորակոչիկներ		Գ ռազմական ակադեմիայի դիմորդներ		Դ վիրավորում ստացած զինծառայողներ	
	Σ	σ	Σ	σ	Σ	σ	Σ	σ
F1	28,86	18,01	31,89	21,9	21,94	11,89	25,95	16,03
F2	53,29	18,8	66,48	16,66	42,19	16,66	68,87	17,05
F3	26,79	20,69	39,39	19,33	20,37	14,79	44,31	19,13
F4	45,58	14,58	51,65	15,82	47,50	12,29	51,41	13,96
F5	64,02	22,04	47,15	20,12	80,13	16,87	51,23	19,04

[5] Տես *Ա. Գ. Կարայանի, Պ. Ա. Կորչեմնիյ, Վ. Ի. Մարչենկով,* Նշ. աշխ.:

[6] Տես *Г. А. Казарян.* Цветовая символика, феномены и механизмы цветовых предпочтений. …; *նույնի՝* Значение психологических показателей в процессе отбора призывников; *Л. Н. Собчик.* Введение в психологию индивидуальности. Теория и практика психодиагностики. М., 2000:

Այսպիսով՝ ընտրության անկայունության գործոնի թվաբանական միջին ցուցանիշը (F1), որը բնութագրում է հուզական լարվածության դեպքում անձնավորության հակվածությունը ապահարմարումային վարքի, հակասոցիալական դրսևորումների, գժտությունների, բոլոր խմբերում միջին արժեքների սահմաններում է: Ինչպես երևում է աղ. 2-ից, Ա խմբում այն կազմել է ընդամենը 28,86 % (σ = 18,01), առավել բարձր է Բ խմբում, որտեղ կազմել է 31,89 % (σ = 21,9), ինչը գրեթե 10 %-ով բարձր է Գ խմբի ցուցանիշից (21,94 % և σ = 11,89):

Առավել ուշագրավ արդյունք է ստացվել Դ խմբում՝ վիրավորում ստացած զինծառայողների դեպքում: Թեև զինծառայողների մասնակցությունը մարտական գործողություններին, որոնք ներկայացնում են մահվան իրական վտանգ, ուղեկցվում է բարձր ստրեսային ներգործությամբ՝ առաջացնելով հոգեկան գործունեության խանգարման մի շարք ախտանիշներ, այս խմբում F1 գործոնը կազմել է ընդամենը 25,95 % (σ = 16,03): Այս ցուցանիշով Դ խումբը բնութագրվում է որպես մեծ հուզականային կայունություն ունեցող անձանց խումբ:

Աուտոգեն նորմայից շեղման գործոնի (F2) թվաբանական միջին ցուցանիշը գրեթե բոլոր խմբերում բարձր է 50 %-ից: Այս առումով դրականորեն առանձնանում է Գ խումբը, որի դեպքում այն կազմել է ընդամենը 42,19 % (σ = 16,66), ինչը նշված խումբը բնութագրում է որպես բարվոք նյարդահոգեկան վիճակում գտնվող անձանց խումբ: Նշված ցուցանիշն առավել բարձր է Դ խմբում՝ 68,87 % (σ = 17,05), ինչը մեծ հոգեկան ու ֆիզիկական ապահարմարման վկայությունն է: Ա խմբում այն կազմել է 53,29 % (σ = 18,8), իսկ Բ խմբում՝ մոտ 66,48 % (σ = 16,66), ինչը նույնպես մեծ հոգեկան և ֆիզիոլոգիական ապահարմարման վկայությունն է և պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ անձինք ռազմահոգեբուժական հետազոտություն են անցնում հոգեկան առողջության կենտրոնում:

Հետազոտված բոլոր խմբերում տագնապայնության (F3) թվաբանական միջին ցուցանիշը միջինի և ցածրի սահմաններում է: Տագնապայնության ցուցանիշն առավել բարձր է Դ խմբում՝ 44,31 % (σ = 19,13), ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ թեև հետազոտման պահին նրանք գտնվել են խաղաղ և անվտանգ պայմաններում, նրանց վիճակի վրա ազդել են հոգեխոցիչ իրադարձությունների մասին հիշողությունները, պարբերաբար կրկնվող մղձավանջները և այլն: Ա, Բ և Գ խմբերում այս ցուցանիշները գտնվել են նվազ տագնապայնության սահմաններում, համապատասխանաբար՝ 26,79 % (σ = 20.69), 39,39 % (σ = 19,33), 20,37 % (σ = 14,79):

Ակտիվության գործոնի (F4) թվաբանական միջին ցուցանիշը՝ օրգանիզմի ծախսած ֆիզիկական և հուզական էներգիայի չափը, բոլոր խմբերում գրեթե հավասար է և գտնվում է միջին նորմայի սահմաններում, համապատասխանաբար՝ 45,58 % (σ = 14, 58), 51,65 % (σ = 15,82), 47,50 % (σ = 12,29), 51,41 % (σ = 13,96):

Աշխատունակության գործոնի (F5) թվաբանական միջին ցուցանիշը Բ խմբում ամենացածրն է և կազմում է 47,15 % (σ = 15,82): Այն առավել բարձր

է Գ խմբում՝ 80,13 % (σ = 16,87), ըստ այդմ՝ տվյալ խումբը բնութագրվում է որպես բարձր աշխատունակություն և ցածր հյուծվածություն ունեցող անձանց խումբ: Ա խմբում սույն ցուցանիշը գտնվում է միջինից բարձր գոտում և կազմում է 64,02 % (σ = 22,04), Դ խմբում՝ 51,23 % (σ = 19,04):

Ինչպես նշվել է, անհրաժեշտ է զինծառայողների հոգեկան վիճակն ախտորոշել մարտական գործողություններից հետո՝ առկա հոգեբանական խնդիրները վաղօրոք հայտնաբերելու և հետագայում հոգեծին ու հետհոգեխոցիչ ստրեսային խանգարումների զարգացումը կանխելու նպատակով: Ռուստի 2020 թ. սեպտեմբեր–նոյեմբեր ամիսներին Արցախի Հանրապետությունում մարտական գործողությունների ժամանակ վիրավորում ստացած պարտադիր ժամկետային զինծառայողների (D խումբ) համար F1–F5 գործոնների ցուցանիշները հաշվարկվել են առանձին և առավել հանգամանորեն ներկայացվել աղյուսակ 3-ում: Նշված խմբում այդ ցուցանիշները բաժանված են 4 ենթախմբի. 1-ին՝ ցածր (0 %–25 %), 2-րդ՝ միջին ցուցանիշներ ցածրի միտումով (26 %–50 %), 3-րդ՝ միջին ցուցանիշներ բարձրի միտումով (51 %–75 %), 4-րդ՝ բարձր (76 %–100 %):

Աղյուսակ 3

F1–F5 ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՄԲՈՒՄ

Գործոններ	1		2		3		4	
	N	%	N	%	N	%	N	%
F1	39	66,10	12	20,34	6	10,17	2	3,39
F2	2	3,39	8	13,56	25	42,37	24	40,68
F3	16	27,12	20	33,90	20	33,90	3	5,08
F4	5	8,47	32	54,24	17	28,82	5	8,47
F5	8	13,56	22	37,29	16	27,12	13	22,03

Աղյուսակ 3-ից երևում է, որ ըստ ընտրության անկայունության գործոնի (F1)՝ 66,1 %-ի շրջանում առկա են ցածր ցուցանիշներ, 20,34 %-ի միջին ցուցանիշ է՝ ցածրի միտումով: Ռուստի ըստ վիրավոր զինծառայողների խմբում ստացված արդյունքների՝ հետազոտվողների ավելի քան 86 %-ը հուզական լարվածության դեպքում հակված չէ հակասոցիալական վարքի, չնայած մարտական գործողություններին մասնակցության ընթացքում զոհվելու և վիրավորում ստանալու իրական վտանգին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Դ խմբի զինծառայողների ավելի քան 83 %-ը (40,68 % միջին՝ բարձրի միտումով և 42,37 % բարձր) գտնվում է հոգեկան և ֆիզիկական անհարմարության վիճակում (F2): Նրանց դեպքում ակնհայտ է հոգեբանական-մասնագիտական միջամտության և հետագա վերականգնողական աշխատանքների անհրաժեշտությունը:

Տագնապայնության (F3) թվաբանական միջին ցուցանիշը 27,12 %-ի դեպքում ցածր է, 33,9 %-ի դեպքում միջին՝ ցածրի միտումով: Այսինքն՝

նրանց մոտ 61 %-ի դեպքում բժիշկների, հոգեբանների և բժշկական անձնակազմի հսկողության ներքո դիտվում է տագնապայնության ցածր աստիճան, 33,9 %-ի դեպքում՝ միջին՝ բարձրի միտումով և ընդամենը 5,08 %-ի դեպքում՝ բարձր:

Ակտիվության գործոնի (F4) թվաբանական միջին ցուցանիշը 8,47 %-ի շրջանում ցածր է, 54,24 %-ի շրջանում՝ միջին՝ ցածրի միտումով, 37 %-ի շրջանում՝ բարձր (8.47 % միջին՝ բարձրի միտումով և 28,82 %-ի շրջանում՝ բարձր), ինչը կարող է հանգեցնել հյուծվածության և սխալի գործոնի աճման:

13,56 %-ի դեպքում աշխատունակության գործոնի (F5) թվաբանական միջին ցուցանիշը ցածր է, 37,29 %-ի դեպքում՝ միջին՝ ցածրի միտումով, 27,12 %-ի դեպքում՝ միջին՝ բարձրի միտումով և ընդամենը 22,03 %-ի դեպքում՝ բարձր: Այսինքն՝ այս խմբի հետոզոտվողների շրջանում գործունեության արդյունավետությունը չափազանց ցածր է:

Ինչպես երևում է վիրավորում ստացած զինծառայողների հետազոտության արդյունքներից, նրանց ավելի քան 86 %-ը հուզական լարվածության դեպքում հակված չէ հակասոցիալական վարքի, անհամաչափ հուզական հակազդման: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ նրանց ավելի քան 82 %-ը գտնվում է հոգեկան և ֆիզիկական անհարմարության վիճակում, նրանց մոտ առկա է հոգեբանական-մասնագիտական միջամտության և հետագա վերականգնողական աշխատանքների խիստ անհրաժեշտություն:

Այսպիսով՝ Զինված ուժերում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար կարևոր է ունենալ զորակոչիկների և զինծառայողների անհատական հոգեբանական և անձնային հատկանիշների ախտորոշման ճկուն համակարգ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է օպտիմալացնել ռազմական-փորձաքննական հանձնաժողովների աշխատանքի կազմակերպման ձևերը և մեթոդները՝ զորակոչիկների ստացիոնար ընտրազատման գործում համալիր հետազոտության հոգեբանական մեթոդների պարտադիր ներդրմամբ (օրինակ՝ հետազոտության ընթացքում կիրառել՝ Այզենկի *EPI* թեստ-հարցարանը և էքսպրես-հոգեախտորոշիչ մեթոդիկան՝ Լյուշերի գունային թեստը, Հայաստանում զորակոչի ենթակա անձանց համար մեր մշակած գունային նախընտրությունների նյարդահոգեկան բարվոքության չափանմուշային չափանիշներով): Համապատասխան մասնագիտական հանձնաժողովներում հոգեբանական հետազոտությունները պետք է նպատակաուղղված լինեն ոչ միայն զորակոչիկների ու զինծառայողների անհատական հոգեբանական և անձնային առանձնահատկությունների, այլև զինվորական ստորաբաժանումներով բաշխման ժամանակ ապահարմարումային հակում ունեցող անձանց հայտնաբերմանը: Ընդ որում, նմանատիպ մասնագիտական հանձնաժողովներ պետք է ստեղծվեն նաև զորամասերում՝ զորամասի հոգեբանի, բժիշկի և այլ պատասխանատու սպաների ներգրավմամբ:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ա. Ե. ԴԱՎԹՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի պատրաստության[*] գլխավոր վարչության ֆիզիկական պատրաստության և սպորտի վարչության ֆիզիկական պատրաստության բաժնի պետ–վարչության պետի տեղակալ

Զինված ուժերի վերազինման և վերակառուցման արդյունքներով փոխվում են նաև զինծառայողների ֆիզիկական պատրաստությանը ներկայացվող պահանջներն ու դրա նկատմամբ մոտեցումները, ուստի ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է լինում վերանայել գործող գնահատման համակարգը և ներդրել ստուգման ու գնահատման նոր, ավելի արդյունավետ մեթոդներ[1]: Ընդսմին հարկ է հստակ կերպով սահմանել, թե ինչպիսին պետք է լինի զինծառայողի ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, որպեսզի այն բավարարի մարտական խնդիրներն արդյունավետորեն կատարելուն: Հարցին պատասխանելու համար առաջին հերթին պետք է պարզել, թե ինչ պահանջներ է դնում ժամանակակից մարտը զինծառայողի առջև, ապա որոշել մարտական խնդրի կատարման համար ֆիզիկական ընդունակությունների անհրաժեշտ մակարդակը:

Հայտնի է, որ ՀՀ Զինված ուժերում ֆիզիկական պատրաստությունը կատարվել է համաձայն «ՀՀ ԶՈՒ-ի ֆիզիկական պատրաստության ձեռնարկի»[2], որը 1987 թ. գործողության դրված «Խորհրդային բանակում և ռազմական նավատորմում ֆիզիկական պատրաստության ձեռնարկի»[3] թարգման-

---

[*] Սույն հոդվածում հեղինակի պնդմամբ *подготовка* և *готовность* ռուսերեն ռազմագիտական տերմինների դիմաց մեր հանդեսում ընդունված և հայերենի նորմերին համապատասխանող *«պատրաստում»* և *«պատրաստություն»* տերմինների փոխարեն օգտագործված է *«պատրաստություն»* տերմինը:–*Խմբ.:*

[1] Տես *А. М. Одеров.* Анализ системы проверки и оценки физической подготовленности военнослужащих вооруженных сил. «Актуальные проблемы огневой, тактико-специальной и профессионально-прикладной физической подготовки». Сборник статей III Международной научно-методической конференции (10-11 ноября 2016). Могилев, 2016, сс. 74–79:

[2] Տես «ՀՀ Զինված ուժերի ֆիզիկական պատրաստության ձեռնարկ»: Հաստատված է ՀՀ Պաշտպանության նախարարի 2011 թ. հուլիսի 26-ի հմ. 857 հրամանով: Ե., 2011:

[3] Տես «Наставление по физической подготовке в Советской армии и Военно-морском флоте (НФП-87)». М., 1987:

ված և խմբագրված տարբերակն է, որը վաղուց կորցրել է իր արդիականությունը: Նման մոտեցում են ցուցաբերել նաև Ղազախստանի Հանրապետությունը[4] և Բելառուսի Հանրապետությունը[5]:

Այս ոլորտում առաջավար արտասահմանյան փորձի հաշվառմամբ և ՀՀ Զինված ուժերում մասնագիտական փորձաքննությունների արդյունքներով 2020 թ. պատրաստվել է ստուգման և գնահատման նոր կարգ սահմանող փաստաթուղթ, որում հաշվի են առնվել ազգային, բնակլիմայական, ծառայության և այլ առանձնահատկություններ:

Համաշխարհային պրակտիկայում ներկայումս հիմնականում գործածում են ֆիզիկական պատրաստության ստուգման և գնահատման երկու տեսակի ծրագրեր:

Առաջին տեսակի ծրագրերը նախատեսված են անհատ զինծառայողների համար: Այս ծրագրերի աշխատանքային սկզբունքը հետևյալն է. զինծառայողը գնահատվում է ըստ նրա մարդաչափական տվյալների և կատարած վարժությունների արդյունքների: Այս տեսակի ծրագրերը լայն կիրառում ունեն ԱՄՆ-ում[6] և Մեծ Բրիտանիայում[7], ինչպես նաև սկանդինավյան երկրներում, մասնավորապես՝ Շվեդիայում[8] ու Ֆինլանդիայում[9]: Այս ծրագրերի առավելությունն այն է, որ օգտագործման համար դրանք շատ պարզ են: Դրանց մեծ մասը ֆիզիկական պատրաստվածության վիճակը բարելավելու վերաբերյալ տալիս է խորհուրդներ ներմուծված տվյալների և ստացված արդյունքների հիման վրա: Սակայն նմանատիպ ծրագրերը ՀՀ Զինված ուժերում կիրառելու համար կան որոշակի պրոբլեմներ, մասնավորապես՝

1) դրանք նախատեսված չեն ստորաբաժանումներ (զորամասեր և այլն) ստուգելու համար և միայն զինծառայողին օգնում են գնահատելու իր ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

2) հիմնականում ստեղծված են *“Android”* կամ *IOS* ծրագրային ապահովում ունեցող սարքավորանքի համար, ուստի գաղտնիության ռեժիմի պահպանման և տեղեկութային անվտանգության ապահովման նկատառումներով կիրառելի չեն ՀՀ Զինված ուժերում:

---

[4] Տես «Наставление по физической подготовке и спорту в Вооруженных Силах Республики Казахстан (НФП-98)». Алматы, 1998:

[5] Տես «Положение по физической подготовке и спорту военнослужащих вооруженных сил Республики Беларусь». Утверждено приказом Министра Обороны РБ N 24 от 09.08.2001 г. Минск, 2001:

[6] Տես “Army PRT, Version 4.0.2”, 22.01.2020. “TRADOC” (Mobile/usarmy.JBLE.CAC.mbx.atsc-tradoc-mobile-support@mail.mil):

[7] Տես “100 % Army Fit – Strength & Running Workout Tracker, Version 2.3.1”, 02.02.2021. “ARMY JOBS UK” (100-army-fit.en.aptoide.com/app):

[8] Տես “FMTK, Version 1.2.0”, 01.07.2019. “Försvarsmaktens Träningsklubb” (fmtk.forsvarsmakten.se):

[9] Տես “MarsMars, Version 1.7.13”, 24.02.2021. “Puolustusvoimat” (Puolustusvoimat.fi/etusivu):

Երկրորդ տեսակի ծրագրերը մշակվել և բավական լայն տարածում են ստացել Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերում: Սրանք նախատեսված են ոչ միայն անհատի, այլև ստորաբաժանման (վաշտ, դասակ) ֆիզիկական պատրաստության գնահատման համար, սակայն այս ծրագրերը ՀՀ Զինված ուժերում ևս կիրառելի չեն ոչ միայն գնահատման նորմացուցային պահանջների տարբերությունների պատճառով, այլև մի շարք այլ պահանջների առումով.

- դրանց ամփոփագրերը չունեն վերլուծական գործառույթ. ստորաբաժանման հրամանատարը և ֆիզիկական պատրաստության մասնագետը չունեն բոլոր անհրաժեշտ տվյալները, որպեսզի կարողանան մարզումները դարձնել ճիշտ և ավելի արդյունավետ,
- ծրագիրը գնահատում է միայն դասակը և վաշտը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու ամբողջ զորամասի կամ զորամիավորման ֆիզիկական պատրաստության վիճակը,
- ծրագիրը հնարավոր չէ կիրարկել առողջության պատճառով սահմանափակումներով ծառայություն անցնող զինծառայողների նկատմամբ,
- նախատեսված չէ զինծառայողներին 20 բալային համակարգով գնահատելու համար, ինչը խիստ անհրաժեշտ է ՀՀ ԶՈՒ-ի բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում, որտեղ ֆիզիկական պատրաստությունը գնահատվում է ինչպես 5 և 100, այնպես էլ 20 բալային համակարգերով:

Զինծառայողների ֆիզիկական պատրաստության գնահատման և վերլուծության համար համակարգչային ծրագրի ներդրումն ամբողջ զինված ուժերում կազմում է ֆիզիկական պատրաստության ստուգման կարգի արդիականացման թեկուզ և կարևոր, բայց միայն մի մասը: Զինծառայողների ֆիզիկական պատրաստվածության ավելի խոր ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ է ավելի մանրակրկիտ ստուգում, իսկ որքան մանրամասնորեն և մանրակրկիտ կերպով են կատարվում ստուգումները, այդքան բարդանում է դրանց ընթացակարգը և արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը: Նախկինում ֆիզիկական պատրաստությունն ստուգվում էր 5 բալային համակարգով՝ բացառապես զինծառայողի սեռի, տարիքի և ծառայության զորատեսակի հաշվառմամբ: Այս պարագայում անհրաժեշտ էր լինում ստուգման ընթացքում մտապահել միայն մի քանի գնահատականների համակցություններ (գնահատման տրամաբանության մեջ միջին թվաբանականի գործածումներ): Սակայն այս դեպքում զինծառայողների պատրաստվածության գնահատումը կատարվում էր չափազանց մեծ ընդհանրացումներով, օրինակ՝ 0 անգամ և 8 անգամ ձգվող զինծառայողները գնահատվում էին «անբավարար», և ստորաբաժանման գնահատման ժամանակ հրամանատարությունը չէր ստանում իրական պատկերը, թե ստորաբաժանումը գտնվում է ծայրահեղ ցածր պատրաստականության մակարդակում, թե այն մոտ է բավարարին, ինչը հետագա աշխատանքների

պլանավորման համար ունի մեծ նշանակություն: Նման խնդիրները բացառելու նպատակով ներդրվեց 100-բալանոց համակարգ[10]:

Ստուգման արդիականացված կարգն զգալի բարձրացրեց գնահատման որակը, սակայն էապես բարդացան հաշվարկումները: Դրանք հեշտացնելու, ինչպես նաև ստացված արդյունքները ավտոմատացված եղանակով վերլուծելու և անհրաժեշտ տվյալներն ամփոփելու համար առաջացավ համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտություն: Տվյալ պրոբլեմը լուծելու համար 2020 թ. մարտին սկսվեցին էլեկտրոնային ամփոփագրի ստեղծման աշխատանքները, և ՀՀ Պաշտպանության նախարարի 2020 թ. հուլիսի 22-ի հմ. 706 հրամանով[11] ծրագիրը դրվեց կիրառության մեջ: Ծրագրի նպատակը հետևյալ խնդիրների արդյունավետ լուծումն է.

1. հաշվարկումների ժամանակի տնտեսում, որպեսզի առանց այն էլ առօրյա գործունեությամբ զբաղեցնված ստորաբաժանման հրամանատարները չունենան հավելյալ բեռնվածություն: Ժամանակի տնտեսումը հույժ կարևոր է նաև զորամասերում ստուգումներ կատարող հանձնաժողովների համար, քանի որ երբեմն 1500-2000 զինծառայողի ստուգման համար հատկացվում է ընդամենը 3-4 օր:

2. Տվյալների վերլուծության ժամանակ մարդկային գործոնով պայմանավորված սխալի բացառում: Իսկ այդ սխալները պայմանավորված են լինում նաև որոշ ստուգողների ոչ բավարար մասնագիտական գիտելիքներով: Ծառայության անհրաժեշտության բերումով ֆիզիկական պատրաստության քննությունների անցկացումը երբեմն հանձնարարվում է ոչ մասնագետների: Անշուշտ, նոր ընթացակարգով նրանց սխալվելու հավանականությունը էապես նվազում է:

3. Տվյալների ավտոմատացված վերլուծություն: Շատ կարևոր է ունենալ այնպիսի վերլուծական տվյալներ, որոնք հրամանատարական կազմին հնարավորություն կտան ստորաբաժանման կամ կոնկրետ զինծառայողի մասին ճիշտ պատկերացում կազմելու և պատրաստության գործընթացում կատարելու համապատասխան շտկումներ: Փորձը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում ստուգումները կատարվում են ոչ թե իրավիճակը հասկանալու և ճիշտ հետևություններ անելու, այլ պարզապես գնահատելու նպատակով, իսկ վերադաս հրամանատարությանը ճիշտ վերլուծական տվյալների տրամադրումը հնարավորություն կտա վերահսկելու ստորաբաժանումների հրամանատարների՝ տվյալ ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:

4. ԶՈՒ-ի անձնակազմի ֆիզիկական պատրաստության վերաբերյալ տվյալների լիարժեք շտեմարանի ստեղծում: Սա նշանակում է, որ տվյալների հավաքումն ու մշակումը հնարավոր է կենտրոնացնել ոչ միայն զորա-

[10] Տես «ՀՀ Զինված ուժերի ֆիզիկական պատրաստության հրահանգ»: Հաստատված է ՀՀ Պաշտպանության նախարարի 2020 թ. մարտի 11-ի հմ. 299 հրամանով: Ե., 2020:

[11] Տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2020 թ. հուլիսի 22-ի «ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողի նորարարությունը ՀՀ Զինված ուժերում կիրառելու և հեղինակին խրախուսելու մասին» հմ. 706 հրամանը:

միավորումներում, այլև ամբողջ զինված ուժերի մասշտաբով, ինչը հսկայական նշանակություն ունի վերլուծական աշխատանքների, թերությունների վերացման և իրավիճակի վերահսկման համար:

5. Առողջության պատճառով սահմանափակումներով ծառայող զինծառայողների ֆիզպատրաստության ցուցանիշների տարբերակված հաշվարկման ապահովում: Զինված ուժերի զինծառայողները երբեմն ունենում են առողջական սահմանափակումներ, որոնք չեն ազատում ծառայությունից, սակայն ազատում են որոշ տեսակի զինվորական գործունեությունից, իսկ ֆիզիկական պատրաստության պարագայում այդ սահմանափակումներով զինծառայողին արգելվում է որոշ վարժությունների կատարումը: Նրանց հետ ֆիզիկական պատրաստության աշխատանքները կազմակերպվում են անմիջականորեն զորամասի բուժծառայության պետի, ֆիզիկական պատրաստության և սպորտի պետի, հրամանատարի անմիջական մասնակցությամբ ու վերահսկողությամբ: Սակայն նույնիսկ այս պարագայում շատ են դեպքերը, երբ զինծառայողները ընդգրկվում են իրենց արգելված վարժությունների կատարման գործում: Նման դեպքերը բացառելու համար ծրագրում նախատեսվել է այնպիսի գործառույթ, որը զինծառայողի առողջական սահմանափակումների, սեռի և տարիքի հաշվառմամբ բացառում է չթույլատրվող վարժությունների կատարումից ստացված տվյալների մուտքագրումը:

6. Գնահատման տարբեր բալային համակարգերով հաշվարկման հնարավորություն: ՀՀ Զինված ուժերում առկա է գնահատման 3 համակարգ (5, 20 և 100 բալային համակարգեր): Օրինակ՝ ՌԲՈՒՀ-ում հիմնականում պատրաստվում են ստորաբաժանման հրամանատարներ, և մեր առջև խնդիր է դրվել, որպեսզի ՌԲՈՒՀ-ներում և զորքերում կիրառվի միևնույն ծրագիրը, ինչը կուրսանտներին հնարավորություն կտա ուսման ընթացքում ծանոթանալու դրան և վարժ կերպով կիրառելու զորքերում: Ավելին. կուրսանտական կազմի ֆիզիկական պատրաստության տեսական գիտելիքների ստուգման ժամանակ հարցերի զգալի մասը վերաբերելու է հենց այս ծրագրի իմացությանը:

7. Անձնակազմի ֆիզիկական պատրաստության գնահատում զորքերի և ռազմական ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների հաշվառմամբ: ՌԲՈՒՀ-ներում և զորքերում կատարվող ստուգումների կարգը տարբերվում է ոչ միայն բալային համակարգերով, այլև ստորաբաժանումների գնահատմամբ: ՌԲՈՒՀ-ների կուրսանտական կազմը պետք է ավելի լավ պատրաստված լինի, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով՝ դասաժամերի քանակ, առողջական սահմանափակումներով զինծառայողների բացառում և ընդունելության քննություններով ապահովվող ընտրազատում: Այդ իսկ պատճառով ուսումնական հաստատությունների ստորաբաժանումների համար ավելի խիստ գնահատման պայմաններ են սահմանված, ինչը նախատեսվել է ծրագրով:

8. Զինծառայողների սեռի, տարիքային խմբի, զորակոչի, ծառայության վայրի և այլ առանձնահատկությունների հաշվառմամբ գնատման տվյալների վերլուծությունը, քանի որ դրանից կախված է ոչ միայն ստուգելիք վար-

ժությունների ընտրությունն ու թիվը, այլև գնահատումը: Եթե նախկինում զինծառայողներին գնահատելիս գրեթե տարբերություն չէր դրվում, թե որ զորատեսակում են նրանք ծառայում և ինչ կարգի ծառայություն են տանում, ապա ստուգման նոր կարգով տարբեր են ոչ միայն նրանց նորմատիվները, այլև վարժությունները: Եվ եթե հաշվի առնենք, որ գոյություն ունի զինծառայողների ստուգման հաշվարկման 11 պայման, և դրանց բոլորի համար նախատեսված են տարբեր նորմատիվներ և վարժություններ, ապա պարզ է դառնում, թե որքան է ծրագիրը հեշտացնում այս գործը:

Ֆիզիկական պատրաստության ստուգման համար մեր մշակած ծրագիրը էլեկտրոնային ամփոփագրերի մի համակարգ է, որը կառուցված է *“Microsoft office excel”* ծրագրի հենքի վրա և համապատասխանեցված է «ՀՀ ԶՈՒ-ի ֆիզիկական պատրաստության հրահանգով» սահմանված բոլոր պահանջներին: Ամփոփագրերի համակարգը բաղկացած է միմյանց հետ փոխկապված ստորաբաժանման, զորամասի և զորամիավորման՝ ամփոփագրերից:

ԶՈՐԱՄԱՍԻ

Ստուգման ամսաթիվ *02.07.2020* ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հ/հ	Մեռ	Զին. կոչում	Ազգանուն, անուն, հայրանուն	Տարեքանակ	Տարեքային խումբ	Կ/իանար	Կատեգորիա	Անհնարավոր	Վարժության անվանումը և համարը										Թվերի գումար	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	Նշումներ հրամանների վերաբերյալ	Դասային ուսակցության կուսակցության
									Վարժ. N 1 (ձգումներ)		Վարժ. N 29 (վազք 3 կմ)		Վարժ. N 28 (վազք 1 կմ)		Վարժ. N 6 (իրանի ծալում և տարածում պտույտի դրությունից)		Վարժ. N 25 (վազք 60 մ)					
									Արդյունք	Բալ	Արդյունք	Բալ	Արդյունք	Բալ	Արդյունք	Բալ	Արդյունք	Բալ				
1	Ա	ավ.լ-նտ	Աստղրյան Գևորգ Վարդանի					10Բ												Ազատված		
2	Ա	կրտ.ս-նտ	Սարգսյան Գրիգոր Հայրապետի					Գործուղում												Գործուղում	մ/հ հրամ N	
3	Ա	շարք	Ներսեսյան Սիարոն Օլեգի	20	*I*		12	26Դ		*43*							*9,0*	*58*	101	3		ոչ
4	Ա	կրտ.ս-նտ	Միսալյան Արթուր Իշխանի	20	*I*	27	12			*72*	*12,00*	*76*					*8,8*	*64*	212	5		1-ին կարգ
5	Ա	շարք	Գաբրիելյան Նարեկ Արմենի	20	*I*	14	12			*26*	*12,17*	*70*					*9,4*	*46*	142	3		ոչ
6	Ա	կրտ.ս-նտ	Օհանյան Դանիել Վահանի					Արձակուրդ		*0*		*0*								Արձակուրդ	հրամ N	
7	Ի	շարք	Հայրապետյան Լուսինե Գագիկի	24	*I*		3			*0*		*0*	*5,60*	*22*	*48*	*54*	*10,1*	*50*	126	3		ոչ

Ցուցակով 7 մարդ
Ստուգվել է 4 մարդ 57 %
Ողոնցից
«Գերազանց» 1 մարդ 25 %
«Լավ» 0 մարդ 0 %
«Բավարար» 3 մարդ 75 %
«Անբավարար» 0 մարդ 0 %
Գնահատվել են դրական 4 մարդ 100 %
Առողջության պատճառով ազատված են 1 մարդ 14 %

Անվանացուցակը ճիշտ է
զորամասի շտաբի պետ՝
(կոչում, ստորագրություն, Ա. Ազգանուն)

Կ.Տ.

Ստորաբաժանման հրամանատար՝
(կոչում, ստորագրություն, Ա. Ազգանուն)

Ստուգող

Գնահատական. ***Բավարար***

Զորք

Նկ. 1. Ստորաբաժանման ֆիզիկական պատրաստության ստուգման արդյունքների ամփոփագիր

Ստորաբաժանման համար կազմված ամփոփագրով (նկ. 1) հնարավոր է ստուգել անսահմանափակ թվով զինծառայողների ցուցանիշները ՀՀ ԶՈՒ-ի ՖՊՀ-ով նախատեսված բոլոր 30 վարժություններում: Ամփոփագիրը ավտոմատ կերպով ցուցանշում է.

– տարիքային խումբը,
– թույլատրելի վարժությունները և դրանց թիվը՝ պայմանավորված ստուգվողի սեռով, տարիքով, կարգախմբով, ծառայության ժամկետով (պարտադիր ժամկետային զինծառայողների պարագայում), կուրսանտների կուրսով և առողջական սահմանափակումներով,
– բոլոր 30 վարժությունների արդյունքների գնահատումը,
– ընդհանուր բալը,

– գնահատումը՝ հաշվառված ըստ ստուգվողի վերը բերված առանձնահատկությունների, ստուգված վարժությունների թվի, զինծառայողի գտնվելու վայրի, ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության և կոնկրետ քննություններում կիրառվող բալային համակարգի, մեթոդական պատրաստության գնահատականի (տեսական գիտելիքների իմացություն և մեթոդական առաջադրանքի կատարում), կատարված վարժություններից արտածված բալերի,
– ֆիզիկական պատրաստության դասային որակավորման աստիճանը,
– ստորաբաժանման գնահատումը՝ պայմանավորված ստուգված անձնակազմի թվաքանակով, ստացված գնահատականների հարաբերակցությամբ, առողջական սահմանափակումով ազատված զինծառայողների տոկոսով, ՈԲՈՒՀ-ի համար սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ամփոփագրի վերլուծական բաժնում ավտոմատ կերպով վերլուծվում և ստուգողին տրամադրվում են.
– անբավարար ստացած զինծառայողների թվաքանակը,
– ֆիզիկական պատրաստության դասային որակավորման կարգ ստանալու նորմը լրացրած զինծառայողների թվաքանակը՝ ըստ որակավորման աստիճանների,
– ստորաբաժանման ցույց տված արդյունքների վերլուծությունն ըստ շարժողական ընդունակությունների վիճակի՝ պայմանավորված զինծառայողների վերը նշված առանձնահատկություններով և տվյալ շարժողական ընդունակության համար ընտրված վարժություններով,
– յուրաքանչյուր կարգախմբի, տարիքի և սեռի զինծառայողների ընդհանրացված տվյալներն ըստ ստուգողական վարժությունների:

Էլեկտրոնային ամփոփագրի լրացման կարգը ներկայացված է նույն ամփոփագրի 2-րդ ձևաթղթում:

Զորամասի ֆիզիկական պատրաստության ստուգման ամփոփ տեղեկագիրը ՀՀ ԶՈՒ-ի ֆիզիկական պատրաստության հրահանգի[12] պահանջներին համապատասխանող մի աղյուսակ է, որն արտացոլում է զորամասի ֆիզիկական պատրաստվածության վիճակը բնորոշող տվյալները և գնահատում այն (նկ. 2):

Բացառությամբ աղյուսակի վերնագրի և ամիս ամսաթվի վանդակների, այս ամփոփագիրը ամբողջությամբ լրացվում է ավտոմատ կերպով՝ ըստ այդ զորամասի ստորաբաժանումների ֆիզիկական պատրաստության ստուգման ամփոփագրերի տվյալների:

Ամփոփագրի վերլուծական բաժնում ներկայացվում են բոլոր ստորաբաժանումների արդյունքների վերլուծությունն ըստ շարժողական ընդունակությունների և ֆիզիկական պատրաստության դասային որակավորման կարգ ստանալու նորմը լրացրած զինծառայողների թվաքանակն ըստ որակավորման աստիճանների (նկ. 3):

[12] Տես «ՀՀ Զինված ուժերի Ֆիզիկական պատրաստության հրահանգ»:

Microsoft Excel - Ampop1

1111111 ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՄԱՆ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

05.05.2021

Հ/հ	Ստորաբաժանում	Ցուցակով	Ստուգվել է	Գերազանց		Լավ		Բավարար		Անբավարար		%	Գնահատական	Ազատված	Ազ%
1	Վարչակազմ	29	20	69,0%	6	30,0%	6	30,0%	7	35,0%	1	5,0%	95,0% Լավ	3	10,3%
2	1	8	6	75,0%	0	0,0%	4	66,7%	2	33,3%	0	0,0%	100,0% Լավ	1	12,5%
3	2	21	21	100,0%	13	61,9%	6	28,6%	2	9,5%	0	0,0%	100,0% Գերազանց	0	0,0%
4	3	21	21	100,0%	17	81,0%	2	9,5%	1	4,8%	1	4,8%	95,2% Գերազանց	0	0,0%
	Ընդամենը	50	48	96,0%	30	62,5%	12	25,0%	5	10,4%	1	2,1%	97,9% Գերազանց	1	2,0%
5	1	8	8	100,0%	2	25,0%	4	50,0%	2	25,0%	0	0,0%	100,0% Լավ	0	0,0%
6	2	22	19	86,4%	10	52,6%	6	31,6%	3	15,8%	0	0,0%	100,0% Գերազանց	1	4,5%
7	3	21	18	85,7%	5	27,8%	6	33,3%	7	38,9%	0	0,0%	100,0% Լավ	2	9,5%
	Ընդամենը	51	45	88,2%	17	37,8%	16	35,6%	12	26,7%	0	0,0%	100,0% Լավ	3	5,9%
8	1	6	3	50,0%	0	0,0%	3	100,0%	0	0,0%	0	0,0%	100,0% Լավ	0	0,0%
9	2	23	22	95,7%	2	9,1%	9	40,9%	9	40,9%	2	9,1%	90,9% Լավ	1	4,3%
10	3	21	17	81,0%	0	0,0%	3	17,6%	9	52,9%	5	29,4%	70,6% Բավարար	3	14,3%
11	4	8	7	87,5%	2	28,6%	3	42,9%	1	14,3%	1	14,3%	85,7% Լավ	0	0,0%
12	5	5	5	100,0%	1	20,0%	0	0,0%	2	40,0%	2	40,0%	60,0% Անբավարար	0	0,0%
13	6	6	6	100,0%	0	0,0%	0	0,0%	5	83,3%	1	16,7%	83,3% Բավարար	0	0,0%
14	7	3	3	100,0%	0	0,0%	0	0,0%	3	100,0%	0	0,0%	100,0% Բավարար	0	0,0%
	Ընդամենը	72	63	87,5%	5	7,9%	18	28,6%	29	46,0%	11	17,5%	82,5% Բավարար	4	5,6%
15	1	5	5	100,0%	0	0,0%	3	60,0%	2	40,0%	0	0,0%	100,0% Լավ	0	0,0%
16	2	12	10	83,3%	2	20,0%	2	20,0%	3	30,0%	3	30,0%	70,0% Բավարար	2	16,7%
17	3	27	25	92,6%	0	0,0%	4	16,0%	14	56,0%	7	28,0%	72,0% Բավարար	2	7,4%
18	4	29	28	96,6%	8	28,6%	3	10,7%	11	39,3%	6	21,4%	78,6% Բավարար	0	0,0%
	Ընդամենը	73	68	93,2%	10	14,7%	12	17,6%	30	44,1%	16	23,5%	76,5% Բավարար	4	5,5%
19	1	19	14	73,7%	1	7,1%	4	28,6%	8	57,1%	1	7,1%	92,9% Բավարար	1	5,3%
20	2	24	22	91,7%	11	50,0%	6	27,3%	5	22,7%	0	0,0%	100,0% Գերազանց	0	0,0%
21	3	14	12	85,7%	0	0,0%	0	0,0%	9	75,0%	3	25,0%	75,0% Բավարար	1	7,1%
22	4	20	18	90,0%	3	16,7%	3	16,7%	10	55,6%	2	11,1%	88,9% Բավարար	1	5,0%
23	5	9	7	77,8%	0	0,0%	1	14,3%	6	85,7%	0	0,0%	100,0% Բավարար	0	0,0%
24	6	5	4	80,0%	0	0,0%	1	25,0%	2	50,0%	1	25,0%	75,0% Բավարար	1	20,0%
	Ընդամենը զորամասը	366	321	87,7%	83	25,9%	79	24,6%	123	38,3%	36	11,2%	88,8% Լավ	19	5,2%

Ամփոփ տեղեկագիր / Վերլուծություն

Նկ. 2. Զորամասի ֆիզիկական պատրաստության ստուգման ամփոփ տեղեկագիրը

Շարժողական ընդունակություններ	Ստուգ.	Բարձր		Լավ		Միջին		Ցածր	
ՈՒԺ (N 1, 2, 3, 4, 5, 6, 7)	1656	534	32,2 %	325	19,6 %	387	23,4 %	410	24,8 %
Ճարպկություն (N 8, 9)	0	0		0		0		0	
Արագաշարժություն (N 25, 26, 27)	1670	391	23,4 %	347	20,8 %	546	32,7 %	386	23,1 %
Դիմացկունություն (N 28, 29, 30)	836	70	11,0 %	24	3,8 %	129	20,3 %	413	64,9 %
Ուազմ. կիր. (N 17,18,19, 20, 21, 22, 23, 24)	385	70	18,2 %	52	13,5 %	39	10,1 %	224	58,2 %
Ձեռնամարտ (N 12, 13, 14, 15,16)	0	0		0		0		0	
Հատուկ (N 10, 11)	0	0		0		0		0	

«Պատվավոր»	16	մարդ.	0,8 %
«1-ին կարգ»	4	մարդ.	0,2 %
«2-րդ կարգ»	26	մարդ.	1,3 %
«3-րդ կարգ»	7	մարդ.	0,4 %





Նկ. 3. Զորամասի ֆիզիկական պատրաստության ստուգման արդյունքների վերլուծության տեղեկագիր

Զորամասերի ամփոփագրերի տվյալները ավտոմատ կերպով փոխանցվում են զորամիավորման ամփոփ տեղեկագիր, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու զորամիավորման ֆիզիկական պատրաստության ընդհանուր վիճակը: Այդ տվյալներն ավտոմատ կերպով տեղափոխվում են ԶՈՒ-ի ամփոփ տեղեկագիր:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Զինված ուժերում զինծառայողների ֆիզիկական պատրաստության ստուգման և գնահատման համակարգ-

չային ծրագրերի կիրառումը ենթադրում է դրանց մշտական կատարելագործում: Այս համատեքստում տեղեկության հնարավոր սորակորստի կանխման մեխանիզմների ներդրումից և իրավական դաշտում անհրաժեշտ փոփոխությունների կատարումից հետո նախատեսվում է անհատական կիրառության *“android”* և *“ios”* հենքի վրա ստեղծել ծրագրեր, որոնք զինծառայողներին (հիմնականում՝ պայմանագրային) ոչ միայն կօգնեն գնահատել իրենց ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, այլև կտան մեթոդական ցուցումներ ֆիզիկական պատրաստության մակարդակը բարձրացնելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» հմ. 404-Ն որոշում (https://www.arlis.am/documentview. aspx?docID= 121634):
2. *И. А. Дерий.* Физическая подготовка курсантов военно-учебных заведений войск связи в процессе военно-профессионального обучения. Автореф. дис. на соискание ученой степени кндидата педагогических наук. СПБ, 2005.
3. *В. П. Леонтьев.* Нормативное обеспечение физической подготовки курсантов высших военно-учебных заведений Сухопутных войск. Автореф. дис. на соискание ученой степени кандидата наук по физическому воспитанию и спорта. Киев, 2000.
4. *В. В. Миронов.* Модель процесса формирования у курсантов инженерных вузов ВВС организаторско-методических навыков физического совершенствования военнослужащих. *В. В. Миронов, А. А. Юрченко*. Физическая подготовка, боеспособность и здоровье военнослужащих. СПб., 2003, сс. 85–89.

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

ДИАГНОСТИКА ПСИХОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ПРИЗЫВНИКОВ И ВОЕННОСЛУЖАЩИХ МЕТОДОМ ТЕСТА ЛЮШЕРА

Г. А. КАЗАРЯН, кандидат психологических наук, доцент кафедры медицинской психологии ЕГМУ им. М. Гераци

РЕЗЮМЕ

Для обеспечения эффективного выполнения военнослужащими боевых задач необходимо учитывать физиологические, эмоциональные и поведенческие изменения в их организме. На первом этапе пси-

хологическое исследование должно осуществляться в военкоматах с целью раннего выявления психологических причин возможных затруднений в адаптации призывника к военной службе и трудностей общения вследствие психической дезадаптации, характеризующейся склонностью к срыву адекватного реагирования в условиях эмоционального напряжения. Последующее тестирование в рамках психодиагностики и профориентации целесообразно проводить комиссией специалистов в воинской части для рассмотрения вопросов профилей военнослужащих, разбора попыток суицида, неуставных отношений и неадекватного поведения командиров в отношениях с подчиненными и т. п. С точки зрения авторов, особую необходимость представляет посткризисное тестирование после выполнения боевых задач, тем более в условиях боевых действий.

ПРИМЕНЕНИЕ КОМПЬЮТЕРНЫХ ПРОГРАММ В ПРОЦЕССЕ ОПТИМИЗАЦИИ ПОРЯДКА ПРОВЕРКИ И ОЦЕНКИ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА

А. Е. ДАВТЯН, полковник, начальник Отдела физической подготовки Управления физической подготовки и спорта Главного управления подготовки ВС РА – заместитель начальника Управления

РЕЗЮМЕ

При анализе применяемых в мировой практике программ проверки и оценки физической подготовки как отдельных военнослужащих, так и подразделений (роты, взвода) выявляется ряд недостатков, препятствующих их использованию в ВС РА. В связи с этим в ВС РА была разработана и внедрена новая программа с применением различных компьютерных технологий. Она представляет собой систему электронных сводок, построенную на базе программы «Microsoft Office Excel» и состоящую из взаимосвязанных сводок по подразделению, части и соединению. Данная программа позволяет не только экономить время расчетов и исключить обусловленные человеческим фактором ошибки, но и автоматизировать анализ полученных данных, проводить расчеты по различным балльным системам оценки и эффективно решать ряд других задач.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

DIAGNOSIS OF PSYCHOLOGICAL STATE OF CONSCRIPTS AND SERVICEMEN BY MEANS OF THE LÜSCHER TEST

G. H. GHAZARYAN, PhD in Psychology, Associate Professor, Chair of Medical Psychology, YSMU after M. Heratsi

SUMMARY

To ensure the successful completion of combat missions by servicemen, it is necessary to take into account the physiological, emotional and behavioral changes in their bodies. At the first stage, psychological studies should be conducted in the military commissariats aiming at the early identification of the psychological causes of possible difficulties in conscripts' adaptation to the military service, and communication difficulties due to the psychological misadaptation characterized by a tendency for a breakdown of adequate response in terms of emotional strain. Further tests in the framework of psychodiagnosis and career guidance should be done in the military unit, where a commission of specialists will consider the issues regarding the military personnel profiles, review cases related to suicide attempts, non-statutory relations and inappropriate conduct of commanders in relation to the subordinates, etc. The authors find it of outmost necessity to conduct a post-crisis testing after combat missions are completed, moreover, in terms of combat actions.

APPLYING COMPUTER PROGRAMS TO THE PROCESS OF OPTIMIZING THE ORDER OF THE RA ARMED FORCES PHYSICAL FITNESS TESTING AND ASSESSMENT

A. Ye. DAVTYAN, Colonel, Head, Unit, Physical Training, Department of Physical Training and Sports, Main Department of Preparedness, the RA Armed Forces – Deputy Head of the Department

SUMMARY

When analyzing the testing and assessment programs of physical fitness of both individual servicemen and sub-units (company, platoon), applied in the world practice, a number of shortcomings are revealed that impede their use in the RA Armed Forces. In these terms, a new program has been developed and implemented in the RA Armed Forces with the use of various computer technologies. It features a system of electronic reports, built on the basis of the *Microsoft Office Excel* and comprised of the interconnected reports on the sub-unit, military unit and tactical formation. This program allows not only to save the time on calculations and exclude errors stemming from the human factor, but also to automate the analysis of the data received, carry out calculations using various point ranking systems, and effectively solve a number of other problems.

ԱՐՑԱԽԻ ՀԱՅԱԹԱՓՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՐՈՇ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ն. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, կապիտան, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտ և «ռազմական լրագրություն» դասընթացի դասախոս, «Զինուժ մեդիա» պետական հիմնարկի հեռուստալրագրող

Այսօր Ադրբեջանը Թուրքիայի ռազմական և քաղաքական անմիջական մասնակցությամբ հետապնդում է ավելի հեռահար նպատակներ, քան զուտ տարածքային խնդիրն է: Տարածաշրջանում այս պետությունն առաջ է մղում համաթուրքական գաղափարախոսությունը և նպատակ ունի շարունակելու «Հայաստանն առանց հայերի» ոճրաբեռ պլանը: Հարկ է շեշտել, որ դեռ 1980-ական թվականների վերջին և 1990-ականների սկզբին ադրբեջանական իշխանությունները ձեռք են բերել զարհուրելի վայրագություններով, մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով[1] հայերի հարկադիր տեղահանման ու հայրենազրկման փորձ:

2020 թվականի սեպտեմբերին Արցախի նկատմամբ Ադրբեջանի ձեռնարկած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում, իսկ հետագայում նաև ՀՀ տարածքի նկատմամբ կատարվող ոտնձգությունների համապատկերում ականատես ենք լինում հայերի տեղահանման քաղաքականության իրագործմանը. կրկին հազարավոր հայեր հայրենազրկվում են: Եվ հիմնավոր է այն պնդումը, որ հետագայում հայրենազրկման կանխարգելման նպատակով անհրաժեշտ է առաջ մղել երիտթուրքերի իրագործած Ցեղասպանության հատուցման պահանջը[2]:

Լեռնային Ղարաբաղի ներառմամբ «միասնական, կամ ընդհանուր» ադրբեջանական պետության ստեղծման հայեցակարգով արցախահայերը փաստացի վերածվում են ազգային փոքրամասնության, ինչն իր հերթին, նախադեպերի հաշվառմամբ, պարունակում է բազմաթիվ ռիսկեր: Մինչդեռ հակամարտության կարգավորման տարբեր փուլերում Ադրբեջանը, շրջանցելով հայրենազրկության բաղադրիչը, տարիներ շարունակ շրջանառել է

[1] Տես «Что случилось в Нагорном Карабахе? Отвечаем на главные вопросы». «BBC News Русская служба», 27 октября 2020 (https://www.bbc.com/russian/features-54427054):

[2] Տես *Ա. Ա. Մելքոնյան,* Ցեղասպանություն և հայրենազրկում. ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ): Ե., 2015:

համատեղ կեցության մասին կեղծ խաղաղապաշտական-քարոզչական թեզեր: Համատեղ մեդիանախաձեռնություններով տարբեր լրատվական հարթակներում, համայնքներում կազմակերպվել են հանրային քննարկումներ, ձևավորվել կեղծ կարծրատիպեր, որոնք հակամարտության վերաբերյալ հենքային իրազեկվածություն չլինելու հետևանքով իրենց հերթին հասարակության մեջ առաջ են բերել իրարամերժ տրամադրություններ:

Ինչպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային փուլերում, այնպես էլ այսօր՝ հերթական պատերազմական փուլից հետո, Հայաստանի հասարակության լայն շրջաններում քարոզչություն է տարվում Ադրբեջանի առաջ քաշած համատեղ կեցության գաղափարի ուղղությամբ: Որպես քարոզչության միջոց կամ գործիք հիմնականում օգտագործվում է մեդիահարթակը: Մասնավորապես՝ հայ և ադրբեջանցի տարբեր ոլորտների մասնագետների համագործակցությամբ պատրաստվել են վավերագրական ֆիլմեր, որոնց հեղինակները նաև լրագրողներ են, կամ լրատվական գործունեություն վարող կազմակերպություններ: Այդ ֆիլմերում քարոզվում է երկու ժողովուրդների միջև «խաղաղության» հաստատման գաղափարը: Ուշագրավ է, որ ֆիլմերում շեշտը հիմնականում դրվում է հույզերի վրա՝ կորստի ցավ, կարոտ և անպայմանորեն՝ վերադարձի հույս: Սակայն վավերագրությունը որևէ կերպ չի շոշափում հայատեցությամբ պայմանավորված հակամարտության հրահրման փաստը, հայերի էթնիկական զտումները և ստեղծված իրավիճակի էթնոքաղաքական նախադրյալները:

2016 թ. փետրվարին Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կազմակերպած «Դիալոգուս» կինոնախաձեռնությունը հարթակ դարձավ Ղարաբաղյան և վրաց-օսեթական հակամարտությունների մասին վրացական, հայկական և հայ-ադրբեջանական համատեղ վավերագրական ու անիմացիոն ֆիլմերի համար, որոնք ստեղծվել են վերջին տասը տարվա ընթացքում: Փետրվարի 22–25-ը «Մոսկվա» կինոթատրոնում ցուցադրվեց ընդհանուր առմամբ 22 ֆիլմ, որոնցից 18-ը՝ վավերագրական, 4-ը՝ անիմացիոն: Ֆիլմերի ազդեցությունը որոշակիորեն պարզ է դառնում քաղաքացիների արտահայտած կարծիքներից: «Եթե Ղարաբաղի և Ադրբեջանի երիտասարդները կարողացել են միասին աշխատել, ապա հնարավոր կլինի վերականգնել կոտրված կամուրջները»,– այսպիսի կարծիք է ձևավորվել «Կինոերկխոսություններ» ծրագրի ֆիլմերը դիտելուց հետո: Ավելի քան մեկ տարվա ընթացքում «Ինտերնյուս»-ը նշված ֆիլմերի դիտումներ է կազմակերպել Հայաստանի 23 բնակավայրերի տարբեր տարիքի, զբաղմունքի և ղարաբաղյան հակամարտության մասին տարբեր մակարդակի գիտելիք ունեցող 700 քաղաքացիների շրջանում՝ հակամարտության լուծման ուղիների և խաղաղության գործընթացի մասին քննարկումները խթանելու նպատակով: Մասնակիցները քննարկում էին ինչպես ֆիլմերում արտահայտված կոնկրետ պատմությունները, այնպես էլ խաղաղությանն ու պատերազմին, ագրեսիվությանն ու հանդուրժողականությանը, ինքնաբնութագրություններին ու կարծրատիպերին առնչվող հարցեր, հաշտության ու կողք կողքի ապրելու հեռանկարներ: Ծրագիրն իրականացվել է 2006 թ. ապրիլ – 2014 թ.

սեպտեմբեր ժամանակահատվածում՝ Հաշտեցման ռեսուրսների, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության և Եվրոպական Միության աջակցությամբ[3]:

«Շրջանի մասերը»[*] նախագիծը «Կինոերկխոսություններ» ծրագրի զարգացման նոր փուլ էր: Հայերը և ադրբեջանցիները համատեղ պատրաստեցին երեք մասից բաղկացած ֆիլմաշար, որտեղ Ղարաբաղյան հակամարտության կողմերը փաստերի հիման վրա ներկայացնում են հակամարտության ծագման, զարգացման փուլերի և խաղաղության հաստատման համար խոչընդոտների մասին իրենց տեսակետները:

2006 թ. «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակում ներկայացվեցին հայ և ադրբեջանցի կինոգործիչների ստեղծած միևնույն «Այն հեռավոր, հարևան գյուղում» խորագիրը կրող, 25-ական րոպե տևողությամբ երկու ֆիլմեր, որոնք պատկերում են բնակիչների կյանքը երկու սահմանակից գյուղերում[**]: Մարդասիրական վերաբերմունքի, համամարդկային արժեքներից կառչող երկու համայնքների մասին է «Տնից՝ տուն» վավերագրական ֆիլմը[***]: Այն պատմում է 1989 թ. Սումգայիթի ջարդերից հետո Ադրբեջանից Հայաստան տեղափոխված հայերի և Հայաստանից Ադրբեջան տեղափոխված ադրբեջանցիների մասին, որոնք ինքնակամ փոխանակել են իրենց գյուղերն ու խոստացել չքանդել գյուղերում մնացած գերեզմանները: Ֆիլմը հենց այդ խոստման մասին է և ցույց է տալիս, որ հայկական Ջյունաշող (նախկինում՝ Ղզլշաֆագ) և ադրբեջանական Քերքենջ գյուղերի բնակիչները շարունակում են պահպանել թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական գերեզմանոցները:

Տարածաշրջանում առկա հակամարտությունների, փակ սահմանների, պատմական անցյալի, ներկայի և ինքնության բացահայտման մասին է պատմում հայ, ադրբեջանցի և թուրք ռեժիսորների համատեղ արտադրության «Հիշողություններ առանց սահմանների» ֆիլմը: Չորս մասից բաղկացած ֆիլմը նկարահանել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը 2012 թ.: Ֆիլմի երրորդ մասը («Ուրվականների թատրոնը»[****]) պատմում է Երևանի

[3] Տես «Հիշողություններ առանց սահմանների» (https://vimeo.com/channels/dialogue throughfilm):

[*] «Շրջանի մասերը» Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և «Ինտերնյուս Ադրբեջան» կազմակերպության համատեղ նախաձեռնությունն է՝ բրիտանական «Հակամարտության ռեսուրսներ» կազմակերպության մասնակցությամբ՝ ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Եվրոպական համագործակցություն հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանության աջակցությամբ:

[**] Ֆիլմի հայկական տարբերակը նկարահանել է «Շողակաթ» հեռուստաընկերությունը (սցենարի հեղինակ՝ Տիգրան Պասկևիչյան, ռեժիսոր՝ Արա Շիրինյան), իսկ ադրբեջանական տարբերակը՝ «Ինտերնյուս Ադրբեջան» կազմակերպությունը (սցենարի հեղինակ էլչան Մամեդով, ռեժիսոր՝ Այազ Սալաև):

[***] Նկարահանվել է 2008 թ.: Ֆիլմի համառեժիսորն ու սցենարի հեղինակը լրագրող Սեդա Մուրադյանն է:

[****] «Ուրվականների թատրոնը» մասի ռեժիսորը Այազ Սալաևն է:

ադրբեջանական պետական դրամատիկական թատրոնում աշխատած դերասանուհի էլմիրա Իսմայիլովայի մասին, որը հուզված խոսում է իր ծննդավայր Հայաստան վերադառնալու հույսի մասին: Ֆիլմի չորրորդ մասը («Սպիտակ հարևանները»[*]), Գորիս քաղաքում ապրող մի հայի մասին է, որը Ղարաբաղյան պատերազմի տարիներին զենքեր է պատրաստել, իսկ այժմ ստեղծել է հայ-թուրքական շախմատ, որի խաղաքարերը պատրաստված են հայ և թուրք զորավարների դեմքերի նմանությամբ: Հերոսը զուգահեռներ է տանում շախմատի դաշտի և ռազմադաշտի միջև և նշում, որ ինքը երբեք չէր ցանկանա զենք սարքել, և որ հարևանի հետ պետք է լեզու գտնել, հարևանություն անել:

2020 թվականի հունվարի 22-ին Սիվիլնեթը հրապարակեց «Գյուղ, որտեղ հայերն ու ադրբեջանցիները ունեն այլ խնդիրներ, քան հակամարտությունը» վերնագրով մի հոդված Վրաստանի Ծոփի գյուղի մասին, որտեղ հայեր և ադրբեջանցիներ են ապրում: Հեղինակը մի հայի անունից ասում է. «Մենք հավերժ միասին ենք ապրել: Մեր դպրոցականներն ու ընկերները ադրբեջանցիներ էին, մենք նրանց հրավիրում ենք սուրճ խմելու կամ մեզ հետ հաց ուտելու, նրանք էլ անում են նույնը, ինչպես լավ հարևանները»[4]:

2021 թ. մայիսի 30-ին Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» թողարկմամբ, այսպես կոչված, «ադրբեջանական անկլավների» վերաբերյալ ռեպորտաժում լրագրողի խոսքում հնչեցված ձևակերպումները պարունակում էին տեղեկութահոգեբանական քարոզչության տարրեր[5]: Ընդ որում, արդեն հրապարակվել են բազմաթիվ ադրբեջանական լրատվամիջոցների հեռուստատեսային ու տպագիր նյութեր, որոնք Ադրբեջանում հանրային քննարկման առարկա են դարձրել ռեպորտաժում արծարծվող թեզերը: Մասնավորապես՝ արձանագրվում է, որ Հայաստանում պետական մակարդակով ընդունում են, թե նշված գյուղերը պատկանում են Ադրբեջանին[6]: Լրագրողը, ռեպորտաժը պատրաստելիս, հաշվի չի առել, որ այս տեղեկույթը կարող է հիմք դառնալ հարյուրավոր նոր ներքին տեղահանումների, ՀՀ սահմանային բնակիչների ունեզրկման, Տավուշի և Արարատի մարզերի բնակիչ-

[*] «Սպիտակ հարևանները» մասի ռեժիսորն է Լևոն Քալանթարը, հեղինակը՝ Արմեն Սարգսյանը:

[4] Տես «Գյուղ, որտեղ հայերն ու ադրբեջանցիները ունեն այլ խնդիրներ, քան հակամարտությունը»: «CIVLNET», 22.01.2020 (https://www.civilnet.am/news/2020/01/22/գյուղ-որտեղ-հայերն-ու-ադրբեջանցիները-ունեն-այլ-խնդիրներ-քան-հակամարտությունը/):

[5] Տես «Հայկական և ադրբեջանական անկլավների հարցի իրավական և քաղաքական բաղադրիչը», 30.05.2021 (https://www.youtube.com/watch?v=U0sCZ01I6Zk&t=19s):

[6] Տես “Ermənistan televiziyasının Naxçıvanın kəndilə bağlı reportajı ölkəni qarışdırdı”. “ARAZ”, 01.06.2021 (https://araz.az/index.php/zhuend-m/14438-ermnistan-televiziyasinin-nakhdzivanin-k-ndil-bazhli-reportazhi-olk-ni-garisdirdi-video?fbclid=IwAR3auRVxk1cJswQpk3x66XLqwcOjek4RtxO92CBajTmrLt_rxuqZNMVY9gU); նաև՝ “Ermənistan telekanalı Kərkinin Azərbaycan kəndi olduğunu etiraf etdi”. “AzVision.az”, 31.05.2021 (https://azvision.az/news/262699/news.html?fbclid=IwAR02vYlBB2zpsh1OZ6J563nFFe8W_VuU_IN3i93js4g0mSSPL-DFq5of2mw):

ների, առհասարակ այդ վայրերով ազատ տեղաշարժի վտանգման համար:

Համատեղ խաղաղ կեցության քարոզին զուգահեռաբար իրականում տասնամյակներ շարունակ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը վարել է բացահայտ հայատյաց և նենգամիտ քաղաքականություն՝ պարբերաբար թեժացնելով հայերի նկատմամբ ագրեսիվ թշնամական տրամադրությունները, փառաբանելով հայերի նկատմամբ հանցագործություններ կատարած ադրբեջանցիներին: Ադրբեջանի ֆաշիստական քաղաքականության վառ օրինակ է Սաֆարովի դեպքը: Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանն իր երախտագիտությունը հայտնեց Նախագահ Ալիևին՝ Սաֆարովի վերադարձը կազմակերպելու և նրան ներում շնորհելու համար. «Ռամիլ Սաֆարովը պետք է հայրենասիրության օրինակ դառնա Ադրբեջանի երիտասարդության համար»[7]: Առանձնակի դաժանությամբ կատարված հայասպանությունը ամենաբարձր մակարդակով փառաբանելու Ալիևի այս կեցվածքը սուր քննադատության արժանացավ Եվրախորհրդարանի արտահերթ բանաձևով, որի երկրորդ կետում, մասնավորապես, նախագահի գործողությունները որակվում են որպես մի ժեստ, որն ուղղված է երկու երկրների միջև առկա լարվածության ավելի սրմանը և վտանգում է հանրությունների հաշտեցման բոլոր գործընթացները[8]: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունում շեշտվեց, որ այս գործողությունները մեծ վնաս են հասցրել խաղաղ գործընթացին և կողմերի միջև փոխադարձ վստահությանը[9]: Ավելին. 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Բաքուն առաջ է մղում «հայերի նկատմամբ ադրբեջանցիների գերազանցության» քարոզչական գիծը, իսկ 2021 թվականի ապրիլի 12-ին Բաքվում բացված պուրակը խթանում է ադրբեջանական հասարակության շրջանում հայերի նկատմամբ արդեն արմատավորված ռասիստական ընկալումները[10]: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի նախագահը շարունակում է նենգափոխել իրողությունները՝ խոստանալով «Լեռնային Ղարաբաղում հայերի համար մշակութային ինքնավարություն»[11]: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի վարած հայատյաց քաղաքականության մասին վկայող այլ բազում փաստեր

[7] Տես «Գուրգեն Մարգարյանի գործով ՄԻԵԴ-ի վճիռը կարևոր նշանակություն կունենա էթնիկական ատելության հիմքով հանցագործությունների կանխման համար. Արման Թաթոյան», 27.05.2020 (https://www.ombuds.am/am/ site/ViewNews/1205):

[8] Տես “Joint Motion for a Resolution”, 12.09.2012 (https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-7-2012-0428_EN.html?redirect):

[9] Տես “Statement of A.K. Lukashevich, Official Representative of MFA of Russia, regarding the extradition of Azerbaijani soldier by Hungary”, 3 September 2012 (https://karabakhfacts.com/authors/minsk-group-co-chairs/page/3/):

[10] Տես ««Սպանված հայ զինվորների և շղթայված գերիների պուրակ Բաքվում. մարդկային տառապանքների թանգարան և ռասիզմի խթանում». Պաշտպանի նոր զեկույցը», 05.05.2021 (https://www.ombuds.am/am/site/ViewNews/1671):

[11] Տես «Баку усиливает пропаганду превосходства над армянами: Татоян разобрал интервью Алиева». «Sputnik», 02.05.2021 (https://ru.armeniasputnik.am/society/20210502/27398975/Lyudi-vysshego-sorta-Baku-usilivaet-propagandu-prevoskhodstva-nad-armyanami--Tatoyan.html):

մերկացնում են խաղաղ համակեցության մասին թեզի երեսպաշտական բնույթը և ի ցույց դնում Ադրբեջանի ձգտումը հայաթափելու Արցախը, արցախահայերին զրկելու իրենց բնօրրանից:

2010 թվականի կեսերին «Հաշտության ռեսուրսներ» *(Conciliation Resources – CR)* կազմակերպությունը մշակել է Ղարաբաղի հարցով շփումային խմբի մի ծրագիր, որով նախատեսվում էր հայ և ադրբեջանցի վերլուծաբաններից (տվյալ դեպքում՝ Արտակ Այունց, Ազեր Ալահվերանով, Աշոտ Բեգլարյան, Թաբիբ Հուսեյնով և Մասիս Մայիլյան) և միջազգային փորձագետից (Ջերարդ Թոալ) կազմված ոչ մեծ խմբի ստեղծում: Այդ նախաձեռնության նպատակն էր տեղահանության թեմայով ուսումնասիրությունների և մշակումների կատարումը: Փորձագետ Ջ. Թոալը, խոսելով այն մասին, թե Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համատեքստում ինչ կարող է սովորեցնել Բոսնիայի փորձը[*], շեշտել է բնակչության հարկադիր տեղահանության հանգամանքը և կարևորել աշխարհաքաղաքական նոր կարգի ձևավորման փաստի հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը[12]: Կարծում ենք, որ Թոալի ներկայացրած հայեցակարգի դրույթները այս թեման լուսաբանող լրագրողների համար կարող են լինել օգտակար կողմնորոշիչներ, օգնել պատկերացնելու, թե ձևավորվող նոր աշխարհաքաղաքական կարգը ինչ ազդեցություններ կարող է ունենալ մեր ազգային շահերի վրա:

Թոալի մեկ այլ դիտարկմամբ՝ Կովկասում ու Բալկաններում տիրող իրավիճակները միմյանցից տարբերվում են նաև Կովկասում վստահության պակասի պարագայում խաղաղ կեցության համար անհրաժեշտ իրավաքաղաքական պայմաններ ու մեխանիզմներ չլինելու հանգամանքով[13]: Ահա հենց սա է, որ, կարծում ենք, պետք է լինի մեդիադաշտի ուշադրության կենտրոնում:

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԵՄԱՅՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

1994 թ. հրադադարից հետո բազմիցս եղել են անդրադարձներ իրենց նախկին բնակավայրեր և՛ հայ, և՛ ադրբեջանցի ներքին տեղահանված անձանց ու փախստականների վերադարձի մասին, սակայն դա բազմաթիվ պատճառներով կյանքի չի կոչվել: Այսօր էլ ականատես ենք լինում զինված դիմաբախության հերթական փուլին, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչության մեծ մասը տեղահանված է, իսկ բնակավայրերը գտնվում են

[*] Թեև բոսնիական փորձն օգտակար զուգահեռներ է առաջարկում, ղարաբաղյան ենթատեքստում առկա են վառ արտահայտված տարբերություններ, այդ թվում՝ այնպիսիք, ինչպիսիք են տեղաշարժերի աշխարհագրությունը, տարածքների ներկայիս վերահսկողությունը, այն փաստը, որ բոսնիական պատերազմում բացահայտ հաղթող չի եղել, ինչպես նաև զգալիորեն նվազ աստիճանի միջազգային ներկայությունն ու ազդեցությունը տեղերում: Այդուհանդերձ, Թոալի՝ Բոսնիայի և Ղարաբաղի համեմատությունը մի շարք այլընտրանքային հեռանկարներ է առաջարկում այն տեսանկյունից, թե ինչպես կարող է պլանավորվել և իրականացվել հարկադիր տեղաշարժի դադարեցման գործընթացը:

[12] Տես *Ջերարդ Թոալ,* Վերադարձի երկընտրանքը: «Անալիտիկոն», հունիս 2011, հմ. 6 (http://theanalyticon.com/?p=263#more-263):

[13] Տես նույն տեղում:

Ադրբեջանի վերահսկողության տակ: Ադրբեջանական իշխանությունները փորձում են ամեն կերպ խեղաթյուրել հակամարտության էությունը՝ այն ներկայացնելով որպես տարածքային կամ միջհամայնքային վեճ:

Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ որպես իր հայազգի քաղաքացիների զանգվածային բռնի հեռացումը նախաձեռնած հանրապետություն, ցուցադրել է այդ անձանց հանդեպ իր ունեցած դիրքորոշումը: Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգային նորմերի և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների զոհ դարձած անձանց իրավական պաշտպանության և վնասի հատուցման իրավունքին վերաբերող հիմնական սկզբունքների և ղեկավար դրույթների համաձայն՝ նման խախտումներից տուժած անձանց պետք է տրվեն վնասի լիակատար փոխհատուցում և տեղի ունեցածի կրկնությունը թույլ չտալու երաշխիքներ[14]: Ակնհայտ է, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքում պետք է լուծում ստանա ոչ միայն դեռ 1990-ական թվականներին Ադրբեջանի գրաված Շահումյանի շրջանից, ԼՂՀ Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ բնակավայրերից, այլև նախկին ԱդրԽՍՀ Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի, Գեդաբեկի լեռնային ու մասամբ նախալեռնային շրջաններն ու Գանձակ քաղաքը ներառող Հյուսիսային Ղարաբաղից* փախստականների հարցը, հիմա արդեն նաև Շուշիից, Հադրութից, Քարվաճառից, Քաշաթաղից և այլ բնակավայրերից տեղահանվածների խնդիրը: Միջազգային միջնորդների առաջարկությունները, որոնք հայտնի են որպես «Փաթեթային տարբերակ» (1997 թ. նոյեմբեր), «Փուլային տարբերակ» (1997 թ. դեկտեմբեր) և «Ընդհանուր պետություն» (1998 թ. նոյեմբեր), բովանդակել են դրույթներ և առանձին հավելվածներ հակամարտության ընթացքում տեղահանված բնակչության խնդիրներին առնչվող համաձայնագրերի, նախագծերի համար, սակայն առայժմ

[14] Տես «Основные принципы и руководящие положения, касающиеся права на правовую защиту и возмещение ущерба для жертв грубых нарушений международных норм в области прав человека и серьезных нарушений международного гуманитарного права (Резолюция, принятая Генеральной Ассамблеей ООН 16 декабря 2005 года)». Приняты резолюцией 60/147 Генеральной Ассамблеи от 16 декабря 2005 года, ст. IX: «Возмещение нанесенного ущерба» (https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/principles_right_to_remedy.shtml); նաև՝ «Римский статут Международного уголовного суда». Принят 17 июля 1998 г., ст. 75: «Возмещение ущерба потерпевшим» (https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pdf/rome_statute(r).pdf); «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооружённых конфликтов (Протокол I)». Принят на дипломатической конференции в Женеве 8 июня 1977 года, ст. 91: «Ответственность» (https://www.icrc.org/ru/doc/assets/files/2013/ap_i_rus.pdf); «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա փոփոխված 11-րդ արձանագրությամբ», 4-ը նոյեմբերի 1950 թ., Հռոմ, հոդ. 41. «Արդարացի բավարարումը» (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870):

* Այստեղ ընդհուպ մինչև 1988–1991 թթ. հայերը նախկինի պես կազմում էին մեծամասնություն: Այս շրջանի հայկական վերջին բնակավայրերը՝ Գետաշենն ու Մարտունաշենը, հայաթափվեցին 1991 թ. ապրիլ–մայիս ամիսներին:

նրանց իրավունքների իրացման համար բավարար իրավաքաղաքական պայմաններ չեն ստեղծվել: Մեր դիտարկմամբ՝ հակամարտության չկարգավորվածության, ԼՂՀ որևէ միջազգային կարգավիճակ չունենալու և կողմերի միջև նվազագույն վստահություն չլինելու պայմաններում, վերջին իրադարձությունների հետևանքով է՛լ ավելի սրված հարաբերությունների պարագայում Լեռնային Ղարաբաղից գաղթած ադրբեջանցի փախստականների վերադարձն սպառնում է ԼՂՀ անվտանգ ապագային և կարող է դառնալ տարածաշրջանային ապակայունացման նոր աղբյուր: Հայկական ընկալմամբ հստակ կերպով տարանջատվում են հակամարտության պատճառներն ու հետևանքները, ընդսմին ենթադրվում է, որ եթե կարգավորման ժամանակ ուշադրություն դարձնեն միայն հետևանքներին (օրինակ՝ բնակչության տեղահանությանը) նախքան պատճառները լուծելը (օրինակ՝ անվտանգության և նույնականության պահպանում), ապա հակամարտության ամբողջ բոլորաշրջանը կարող է կրկնվել:

Հայկական մեդիադաշտում հազվադեպ են հանդիպում լրագրողական վերլուծական նյութեր հայրենազրկված հայերի, հարկադիր տեղաշարժի հետևանքով փախստականի կամ ներքին տեղահանված անձի կարգավիճակում հայտնված արցախցիների ճակատագիրը առանձին անձնական, սոցիալ-կենցաղային խնդիրներից դուրս՝ հայրենազրկման համատեքստում, դիտարկելու փորձեր: Լրատվությունը կարող է դառնալ այն հարթակը, որի շնորհիվ հասարակական շրջանները կսկսեն ներքին տեղահանվածին ընկալել ոչ թե որպես հանրային հոգսի ու բեռի, այլ որպես հայրենազրկման սուբյեկտի: Հենց մեդիահարթակի միջոցով պետք է ձևավորել ընկալում, որ հայրենազրկվելով «նա կորցրել է իր տունը, իսկ մենք՝ մեր հայրենիքի այն կտորը, որի վրա նրա տունն էր»:

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

НЕКОТОРЫЕ ОЦЕНКИ ПРОБЛЕМЫ ДЕАРМЕНИЗАЦИИ АРЦАХА В КОНТЕКСТЕ ОСВЕЩЕНИЯ КОНФЛИКТА

Н. А. АМБАРЦУМЯН, капитан, аспирант факультета журналистики ЕГУ, лектор курса «Военная жуналистика», тележурналист государственного учреждения «Зинуж Медиа»

РЕЗЮМЕ

Азербайджан в регионе Южного Кавказа последовательно продвигает идеологию пантюркизма с осуществлением программы «Армения без армян». Именно в рамках этой программы в сентябре 2020 года Азербайджаном были развязаны широкомасштабные военные действия против Арцаха, в которых активное участие приняли как ВС Турции, так и нанятые Турцией и Азербайджаном многочисленные террористы. Данная политика АзР демонстрирует

истинную сущность проводимой в широких общественных кругах Армении пропаганды выдвинутой Азербайджаном «идеи совместного проживания», в то время как в качестве инструмента пропаганды в основном используется медиаплатформа. В то же время военно-политическое руководство Азербайджана на протяжении десятилетий ведет открытую армянофобскую политику путем последовательного формирования в азербайджанском обществе «образа врага» в лице армян и разжигания агрессивных расистских насторений в их отношении. В данных обстоятельствах для формирования в Армении и Арцахе адекватного общественного мнения более чем актуально значение грамотного освещения в СМИ событий, относящихся к данной теме, обстоятельного научного анализа политики и действий азербайджанских властей.

MILITARY INFORMATION SCIENCE

SOME ESTIMATES OF THE ARTSAKH DE-ARMENIANIZATION ISSUE WITHIN THE FRAMEWORK OF THE CONFLICT COVERAGE

N. A. HAMBARDZUMYAN, Captain, Graduate Student, Department of Journalism, YSU, Lecturer in the Course in "Military Journalism", TV Journalist, "Zinuzh Media" State Agency

SUMMARY

Azerbaijan consistently pushes the ideology of Pan-Turkism in the South Caucasus region calling to life the plan "Armenia without Armenians". It was within the framework of said plan that Azerbaijan unleashed large-scale military actions against Artsakh in September 2020, in which both Turkey's Armed Forces and numerous terrorists hired by Turkey and Azerbaijan were actively engaged. This policy of AZR fairly demonstrates the true essence of the propaganda carried out within the broad segments of the Armenian society regarding the idea of shared existence put forward by Azerbaijan, while for the most part, the media platform is being used as a tool for propaganda. However, for decades Azerbaijan's military-political leadership has been implementing the policy of overt anti-Armenian sentiment by consistently shaping "the image of an enemy" in the face of Armenians, and fomenting aggressive racial sentiments towards them within the Azerbaijani society. Against this background, in order to form an adequate public opinion in Armenia and Artsakh, it is more than urgent for the media to masterly cover events related to the given topic, as well as to provide in-depth academic analysis of the policy and the actions of the Azerbaijani leadership.

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհը բնութագրվում է արագ աշխարհաքաղաքական փոփոխություններով, խորացող հակասություններով, տեղային և համընդհանուր տնտեսական ճգնաժամներով, մարդկության գոյության պահպանմանն ուղղված նոր մարտահրավերներով (այդ թվում՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային համավարակով), ինչի հետևանքով պատերազմող կամ պատերազմի մեջ ներքաշվելու մեծ հավանականություն ունեցող պետություններում առանձնահատուկ կարևորություն է ստանում ռազմատնտեսական անվտանգության ապահովումը: Խնդիրն ավելի հրատապ է դառնում հատկապես, երբ հաշվի ենք առնում, որ վերջին տարիներին դիտվում է «ազգային անվտանգության և տնտեսության զուգամիտում»[1]: Այդ առնչությամբ ԱՄՆ-ի՝ 2017 թվականի Ազգային անվտանգության ռազմավարությունում նշվում է, որ «տնտեսական անվտանգությունը հենց ազգային անվտանգությունն է»[2]: Միևնույն ժամանակ նոր կորոնավիրուսային համավարակը բացահայտեց համընդհանրացված աշխարհում ազգային անվտանգության համակարգերի ծայրաստիճան խոցելիության մեկ այլ գործոն՝ պետություններին մղելով վերանայելու ռազմատնտեսական անվտանգության նախկինում ընդունված մոտեցումները:

ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռազմատնտեսական անվտանգությունը բոլոր անվտանգային ենթահամակարգերի (ռազմական, քաղաքական, տեղեկատվական, սոցիալական, հոգևոր և այլն) անխափան ու արդյունավետ աշխատանքի հիմնա-

[1] Տես *David H. McCormik, Charles E. Lufting, James M. Cunningham.* Economic Might, National Security, and the Future of American Statecraft. “Texas National Security Review”, Autumn 2020, Vol. 3, Issue 3 (http://dx.doi.org/10.26153/tsw/10222):

[2] Տես “The National Security Strategy of the United States”. The White House, December 2017 (https://trumpwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905.pdf):

սյունն է: Հաճախ այն նույնացվում է տնտեսական անվտանգության ենթահամակարգի հետ, մինչդեռ ռազմատնտեսական անվտանգության ապահովումը ենթադրում է բոլորովին այլ խնդիրների լուծում: Այսպես. եթե ***տնտեսական անվտանգությունը*** ներքին և արտաքին սպառնալիքներից ազգային տնտեսության այնպիսի պաշտպանվածությունն է, որի դեպքում հնարավոր է տնտեսական ու սոցիալական կայունության պայմաններում ապահովել հասարակության առաջընթաց զարգացում, ապա ***ռազմատնտեսական անվտանգությունը*** ենթադրում է ներքին և արտաքին սպառնալիքներից ազգային տնտեսության այնպիսի պաշտպանվածություն, որի պայմաններում նա կարող է բավարարել պետության *ռազմական ոլորտի* տնտեսական պահանջմունքները՝ ռազմական ոլորտն անհրաժեշտ մակարդակում պահելու, դրա շարունակական զարգացումն ապահովելու, ռազմական շինարարության խնդիրները լուծելու համար[3]:

Նոր տեխնոլոգիական կերպափոխումների դարաշրջանում, երբ համատարած կիրառում են ստացել 4,0 արդյունաբերության տեխնոլոգիաները, պետությունների միջև ի հայտ են եկել հակամարտությունների նոր հարթակներ, ինչպիսիք են օրինակ, կիբեռտարածությունը և տիեզերքը: Որպես հետևանք՝ տարբեր պետություններում տնտեսական և ազգային անվտանգության ապահովման գործընթացներն ակնհայտորեն զուգամիտում են: Նման միտումները, իրենց հերթին, առաջ են բերում արդի պայմաններում ռազմատնտեսական անվտանգության ապահովման բարդություն ու բազմագործոնություն:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր նշանակություն է ձեռք բերել նաև քաղաքացիական ոլորտը՝ պայմանավորված երկակի նախանշանակման տեխնոլոգիաների զարգացմամբ, ռազմական տնտեսությունում շուկայական հարաբերությունների ընդլայնմամբ, ռազմական շինարարության ոլորտում պետություն–մասնավոր հատված գործընկերության խորացմամբ: Եվ եթե նախկինում ռազմական շինարարության գործում ռազմատնտեսական համակարգի նկատմամբ պահանջներում կարևոր էր գերազանցապես ռազմական կարիքների բավարարումը, ապա ներկայումս կարևորվում է նաև քաղաքացիական ոլորտներում զարգացման ապահովումը[4]: Ընդ որում, խոսքը չի վերաբերում ռազմատնտեսական անվտանգության մակարդակի բարձրացմանը միայն տնտեսական զարգացման լծակով (որը պահանջում է առաջին հերթին քաղաքացիական արտադրությունների զարգացում), այլ ենթադրում է նաև բարեկեցության հնարավորինս բարձր մակարդակ ունեցող հասարակություն, որը պատրաստակամ լինի պաշտպանելու իր անվտանգությունը: Այս առնչությամբ տեղին է մտաբերել Ֆինլանդիայի ֆինանսների նախարար Վ. Տաների այն

[3] Տես *А. И. Пожаров.* Показатели и критерии военно-экономической безопасности. «Военная мысль», 2000, № 6:

[4] Տես *Л. В. Панкова.* Военно-экономическая безопасность: особенность настоящего момента. «Московский экономический журнал», 2020, № 9:

դիտարկումը, որ «նախքան պաշտպանության վրա ահռելի ֆինանսական միջոցների ծախսումը, անհրաժեշտ է մարդկանց համար ստեղծել այն բարեկեցության մակարդակը, որը նրանք կցանկանան պաշտպանել»[5]:

Գործառութային տեսանկյունից ռազմատնտեսական անվտանգությունը կոչված է պետության համար ապահովելու *ռազմատնտեսական ինքնաբավություն, ռազմական տնտեսության կայունություն և վստահելիություն, գիտատեխնիկական հնարավորությունների շարունակական զարգացում և տնտեսության մոբիլիզացիոն հնարավորությունների ընդլայնում*[6]: Դրանով իսկ պետության կողմից այս կարևորագույն գործառույթի իրականացումը ենթադրում է բազմաթիվ ուղղություններով տքնաջան ու արդյունավետ աշխատանք, որի վերջնական նպատակը պետության հզորության մեծացումն ու անվտանգային խնդիրների լուծումն է, իսկ միջանկյալ նպատակներն են ոչ միայն ազգային (ներառյալ՝ ռազմական) տնտեսության զարգացումը և գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը, այլև հասարակության բարեկեցության աճը, սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական միասնության ապահովումը: Վերջիններս հատկապես կարևոր են հնարավոր պատերազմական իրավիճակում ռազմատնտեսական ներուժի արդյունավետ իրացման համար:

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ՄԱԿ-ի «Համաշխարհային տնտեսական իրավիճակը և հեռանկարները» ամենամյա զեկույցում կորոնավիրուսի հետևանքով համաշխարհային տնտեսության անկումը գնահատվել է 4,3 %, ինչը գրեթե 2,5 անգամ ավելի է, քան եղել է 2008–2009 թթ. ֆինանսական ճգնաժամի ժամանակ, ընդ որում, զարգացած երկրներում տնտեսական անկումն ավելի մեծ է (5,6 %), քան զարգացող երկրներում (2,5 %) և թույլ զարգացած երկրներում (1,3 %)[7]: Անորոշությունը և խուճապը մի քանի ամիս կաթվածահարել էին տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակները, չէր գործում առևտրի և ծառայությունների ոլորտի մի զգալի մասը, երկրի ներսում և սահմաններից դուրս մարդկանց տեղաշարժի սահմանափակությունը անգործության էր մատնել զբոսաշրջության ոլորտն ամբողջությամբ: Աննախադեպ գործազրկության պայմաններում ընդամենը մի քանի ամսվա ընթացքում աշխարհում կտրուկ կերպով աճեց աղքատության մակարդակը, իսկ եկամուտների ու բարեկեցության անհավասարության ցուցանիշները գերազանցեցին նախկինում եղածները: Թվարկվածը «կորոնավիրուսային ճգնաժամի» միայն կարճա-

[5] Տես *А. Кречетников.* Человек, сделавший невозможное. «BBC News», 2 декабря 2009 (https://www.bbc.com/russian/russia/2009/12/091202_mannerheim_profile):

[6] Տես *Д. Гордиенко.* Военно-экономическая безопасность государства (Аналитический доклад). Центр стратегических оценок и прогнозов. М., 2011, с. 6:

[7] Տես “World Economic Situation and Prospects 2021”. United Nations. New York, 2021, P. 9:

ժամկետ հետևանքն է, մինչդեռ վերլուծաբանները լուրջ մտավախություններ ունեն նաև համավարակի երկարաժամկետ բացասական հետևանքների առնչությամբ՝ ներդրումների և արտադրության ներուժի նվազման, ընդհանուր արտադրողականության անկման, ինչպես նաև համաշխարհային տնտեսության աճի առավել ցածր հետագծում հաստատման առումներով:

Այսպիսով՝ 21-րդ դարում բարձր աստիճանի վարակայնություն ունեցող մի քանի վիրուսների տարածումը (2002 թ.՝ ատիպիկ թոքաբորբ (*SARS*), 2009 թ.՝ *H1N1* հարուցիչով «խոզի գրիպ», 2014 թ.՝ «էբոլա», 2020 թ.՝ նոր կորոնավիրուսային համավարակ և այլն) լուրջ հիմքեր է տալիս ենթադրելու, որ առաջիկայում մարդկությունը դարձյալ կարող է բախվել նման խնդիրների: Ավելին. դեռ 2005 թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը մտավախություն էր հայտնել, որ կարող է համավարակի վերածվել *H5N1* հարուցիչով թռչնագրիպը, որի դեպքում մահացության աստիճանը խիստ բարձր է (ավելի քան 50 %)[8]: Ընդ որում, եթե մարդկությունը մինչև 2020 թ. համավարակը առավելապես գործ ուներ լրջագույն առողջապահական խնդրի հետ, որն իհարկե հանգեցնում էր նաև զգալի բացասական տնտեսական հետևանքների, ապա նոր «կորոնավիրուսային կենսակերպը», որին հնարավոր դարձավ անցնել ժամանակակից թվային տեխնոլոգիաների զարգացածության «շնորհիվ», բացահայտեց սոցիալական բնույթի բազմաթիվ նոր խնդիրներ, որոնք ազգային անվտանգության տեսանկյունից նույնիսկ կարող են ավելի վտանգավոր լինել, քան պարզապես տնտեսական ոլորտի վրա ազդեցության մեխանիզմով փոխանցվող սպառնալիքները:

Խոսքը մարդու կենսակերպի օրինաչափություններին որոշակիորեն հակասող իրողությունների մասին է, քանի որ դրանց ակնհայտ միտումը հասարակության աստիճանական կազմալուծումն է: Տեսակետ կա, որ կիրառվող խիստ սահմանափակումները ապասոցիալականացնում են մարդկանց, հարուցում խուճապային և ագրեսիվ տրամադրություններ, զանգվածային անհանգստություն, խարխլում են օրինական իշխանությունների նկատմամբ վստահությունը: Մինչդեռ ռազմական հակամարտությունների մեջ ներքաշված պետություններում բավական կարևոր է ամրապնդել հասարակության միասնականությունը, իշխանությունների նկատմամբ անվերապահ վստահությունը, նպաստել հոգևոր և ազգային արժեքների գերակայմանը, հայրենասիրությանը և հայրենիքի պաշտպանության գործում նախանձախնդրությանը[9]: Մենք մանրամասնորեն չենք անդրադառնա տարբեր պետություններում (այդ թվում նաև Հայաստանում) իշխանությունների ձեռնարկած հակահամավարակային միջոցառումների բացասական

[8] Տես «Птичий грипп: оценка угрозы пандемии». Всемирная организация здравоохранения, январь 2005:

[9] Տես *Ирина Медведева, Татьяна Шишова.* Риски и угрозы некоторых антиковидных мер в аспекте национальной безопасности, декабрь 2020 (https://zavtra.ru/blogs/riski_i_ugrozi_nekotorih_antikovidnih_mer_v_aspekte_natcional_noj_bezopasnosti):

հոգեբանական և սոցիալ-քաղաքական հետևանքներին, սակայն պետք է նշենք, որ դրանք իսկապես շատ կարևոր են ռազմատնտեսական անվտանգության ապահովման համար: Ուստի մեր հետազոտությունում ռազմատնտեսական անվտանգության վրա կորոնավիրուսային համավարակի ազդեցությունը դիտարկելու ենք թե՛ ուղղակի տնտեսական հետևանքների, թե՛ աղքատության աճման, հասարակության սոցիալական բևեռացման, սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական միասնության խարխլման տեսանկյուններից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմատնտեսական անվտանգության ապահովման համար առանցքային նշանակություն ունի հնարավոր պատերազմական իրավիճակում ռազմատնտեսական ներուժի արդյունավետ իրացումը: Ուստի բոլոր սպառնալիքներին ճիշտ ու ժամանակին հակազդելու համար կարևորվում է պետության ռազմատնտեսական ներուժի օբյեկտիվ գնահատականը: Վերջինիս համար օգտագործելու ենք Բուրավլյովի մեթոդաբանությունը[10], ըստ որի՝ ռազմատնտեսական ներուժը գնահատվում է որպես պետության տնտեսական, ռազմական և քաղաքական ներուժների փոխկապված համակարգ, որը ներառում է հետևյալ երեք խումբ ցուցանիշները.

ա) Պետության տնտեսական ներուժի ցուցանիշներ

Պետության տնտեսական ներուժի ցուցանիշներ են ՀՆԱ-ն, բնակչության թվաքանակը, երկրի տարածքը, բնական հարստությունները: Այսինքն՝ այս ցուցանիշներն արտացոլում են ազգային հարստությունը և այն, թե որքան արդյունավետ է պետությունն այդ հարստությունը օգտագործում իր գոյության պահպանման համար:

բ) Պաշտպանական անվտանգության ապահովման, աշխարհում հավասար իրավունքներով ներկայանալու հնարավորություններն արտահայտող ցուցանիշներ

Այս հնարավորությունները նկարագրող ցուցանիշներ են պետության ռազմական բյուջեն (որն ածանցյալ է ՀՆԱ-ից), զինված ուժերի թվաքանակը և դրանց սպառազինման մակարդակը, այդ թվում նաև սպառազինությունների զարգացածության աստիճանը, ինչպես նաև ռազմավարական զսպման միջոցների (օրինակ՝ միջուկային զենքի) առկայությունը:

գ) Այս երկու խումբ ցուցանիշների միջև կապող օղակ հանդիսացող հասարակության ու պետական իշխանության միասնությունը նկարագրող ցուցանիշներ

Այս ցուցանիշները պայմանավորված են պետության և հասարակության գաղափարական, բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական հիմքերով և, ըստ էության, արտացոլում են պետության քաղաքական ներուժը: Տարբեր սոցիոլոգիական հետազոտություններ ցույց են տալիս, որ իշխա-

[10] Տես *А. И. Буравлев.* К вопросу об оценке военно-экономического потенциала государства. «Вооружение и экономика», 2017, № 3 (40):

նությունների և հասարակության միջև սոցիալական միասնության կարևոր գործոններն են.

- հասարակության սոցիալ-տնտեսական միատարրությունը՝ ըստ եկամուտների,
- հասարակության սոցիալ-քաղաքական միասնությունը, որն արտացոլվում է իշխանության օրենսդիր մարմինների ժողովրդավարական ընտրություններին հասարակության մասնակցության և արդյունքների ցուցանիշներով,
- հասարակության՝ ներքին և արտաքին սպառնալիքների ընկալման սոցիալ-հոգեբանական մակարդակը:

Այսպիսով՝ ներկայացված մեթոդաբանությունը ենթադրում է այնպիսի ցուցանիշների դինամիկայի ուսումնասիրություն, ինչպիսիք են բնակչության թվաքանակը, զինված ուժերի թվաքանակը, ՀՆԱ-ն և դրանում ռազմաարդյունաբերության տեսակարար կշիռը, պետության ռազմական ծախսերը, աղքատության մակարդակը, եկամուտների բաշխման հավասարությունը, հասարակության և պետության սոցիալ-քաղաքական միասնությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

Բնակչություն և զինված ուժերի թվաքանակ: Բոլոր պետություններում էլ կորոնավիրուսային համավարակի ամենամեծ բացասական ազդեցությունը մարդկային կյանքերի կորուստն է: Հայաստանում 2021 թ. մարտի 17-ի դրությամբ կորոնավիրուսային համավարակը խլել է ավելի քան 4000 մարդու կյանք[*]: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2020 թ. Հայաստանում մահվան ընդհանուր դեպքերի բացարձակ ցուցանիշի փոփոխությունը կազմել է 135,1%, ինչն աննախադեպ է Հայաստանի երրորդ Հանրապետության ամբողջ ժամանակահատվածում: Մահացածների ընդհանուր թվի 9,6 %-ի մահվան պատճառ է եղել կորոնավիրուսը: Մահացության աննախադեպ աճ է գրանցվել նաև արյան շրջանառության համակարգի (121,2 %) և շնչառական օրգանների (138,8 %) հիվանդություններից: Տարբեր տեսակետների համաձայն՝ դրանք նույնպես որոշակիորեն պայմանավորված են նոր կորոնավիրուսային համավարակով: Առանց այն էլ լրջագույն ժողովրդագրական խնդիրներ ունեցող (բնակչության արտագաղթ, ծերացում, ռազմական գործողությունների հետևանքով մահացածների մեծ թիվ, վերարտադրության ցուցանիշների վատթարացում և այլն) Հայաստանի համար ներկայացված վիճակագրությունը, անշուշտ, հուսադրող չէ: Այն իր ուղղակի բացասական ազդեցությունն է ունեցել և շարունակելու է ունենալ Զինված ուժերի համալրման վրա:

[*] Այստեղ և այսուհետև բոլոր տեղերում, եթե այլ բան նշված չէ, բերվող վիճակագրական տվյալները ներկայացված են ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների:

Համախառն ներքին արդյունք: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2020 թ. նախորդ տարվա համեմատությամբ ՀՆԱ-ի կրճատումը կազմել է 7,6 %, ընդ որում, արդյունաբերական արտադրանքի գծով անկումը չնչին է՝ ընդամենը 0,9 %, մինչդեռ շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտում անկումն ավելի էական է (համապատասխանաբար՝ 9,5 %, 14,0 % և 15,7 %): Ցանկացած պետության համար ՀՆԱ-ի կրճատումը առաջին հերթին նշանակում է ռազմական ծախսերի ֆինանսավորման հնարավորությունների սահմանափակում[11]: Սակայն պետք է նկատենք, որ Հայաստանում ՀՆԱ-ի կրճատումը չի անդրադարձել ռազմական ծախսերի կրճատման վրա, և եթե 2020 թ. ռազմական ծախսերին հատկացվել էր 303,0 մլրդ դրամ[12], ապա 2021 թ. պետական բյուջեով նախատեսվում է այդ գումարը հասցնել 306,5 մլրդ դրամի[13]: Սակայն ՀՆԱ-ի կրճատումը ռազմատնտեսական անվտանգության վրա կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ նաև «որակական» տեսանկյունից: Մասնավորապես՝ տնտեսական գործունեության որոշ ոլորտներ կոչված են ապահովելու պետության պարենային անվտանգությունը, որոշ ձևեր էլ կարող են ապահովել ռազմական տնտեսության ընդլայնումը և սպասարկումը պատերազմական իրավիճակում:

Մի շարք արտադրական ոլորտներում թողարկման ծավալների փոփոխությունների առանձին-առանձին ուսումնասիրությունը 2020 թ. հունվար–օգոստոս և հունվար–դեկտեմբեր ամիսների համար հնարավորություն է տալիս համեմատելու կորոնավիրուսի և պատերազմի ազդեցությունները տնտեսության վրա: Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որ սննդամթերքի արտադրության ոլորտի վրա համավարակի բացասական ազդեցությունը մեծ չի եղել (97,3 % և 99,6 % աճման տեմպերով համապատասխանաբար նշված ժամանակահատվածների համար), ուստի գրեթե չի ազդել պարենային անվտանգության վրա: Մյուս կողմից՝ պատերազմական ժամանակահատվածում էապես աճել են էլեկտրական սարքավորանքի (122 %), այլ խմբերում չներառված մեքենաների ու սարքավորանքի արտադրության (102,7), ինչպես նաև մեքենաների ու սարքավորանքի նորոգման և տեղադրման ցուցանիշները (28,8 անգամ): Տվյալ հանգամանքը, թերևս, պայմանավորված է պատերազմի ընթացքում վնասված տեխնիկայի ու սարքավորանքի վերանորոգման մեծ ծավալ-

[11] ՀՆԱ-ի և ռազմական ծախսերի միջև նման փոխկախվածության մասին՝ հաստատված ՀՀ օրինակով, մանրամասնորեն տես *G. Harutyunyan.* The Theoretical Approaches to Assessing Effects of Military Expenditure on Growth. “Russian journal of management”, 2018, Vol. 6, N 3 (https://doi.org/10.29039/article_5c76b0e5c1db78.32516834):

[12] Տես ՀՀ 2019 թ. դեկտեմբերի 6-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» հմ. ՀՕ-277-Ն օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137645):

[13] ՀՀ 2020 թ. դեկտեմբերի 10-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» հմ. ՀՕ-489-Ն օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=148551):

ներով[*]: Մինչդեռ համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրությունում ունեցել ենք զգալի անկում, որն առավել նկատելի էր ռազմական գործողությունների ժամանակահատվածում (90.8 %): Նշենք, որ սա տնտեսական գործունեության այն ոլորտն է, որտեղ համեմատաբար ավելի շատ է թողարկվում երկակի նախանշանակման արտադրանք: Այս հանգամանքը, ըստ էության, ահազանգ է, որ Հայաստանում ՀՆԱ-ի կառուցվածքը ռազմատնտեսական անվտանգության տեսանկյունից խոցելի է: ՀՆԱ-ում նվազ տեսակարար կշիռ են կազմում այն արտադրական ոլորտները, որտեղ տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս պատերազմական իրավիճակում արագորեն անցնելու ռազմաճակատի համար անհրաժեշտ արտադրությանը:

Ռազմաարդյունաբերություն: Ռազմաարդյունաբերության ոլորտում թողարկման ծավալների փոփոխության վերաբերյալ վիճակագրական տվյալներ դժվար է ներկայացնել: Սակայն որոշ դատողություններ կարելի է անել բարձր տեխնոլոգիական ոլորտի ընդհանուր ցուցանիշների դինամիկայի ուսումնասիրության համատեքստում: Ըստ 2020 թ. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանի՝ ոլորտը 2020 թ. աճել է 20,6 %-ով, իսկ ոլորտում գործող 1228 ընկերությունների (առանց կապի օպերատորների) շրջանառությունը հասել է 198 մլրդ դրամի[14]: Նկատենք, որ 2020 թ. Հայաստանում արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 2 տրլ դրամ: Ցավոք, Հայաստանում տնտեսական վիճակագրության որոշ առանձնահատկությունների բերումով (այն է՝ չի ներկայացվում, թե ՀՆԱ-ում ինչ տեսակարար կշիռ ունի բարձր տեխնոլոգիական ոլորտը), հնարավոր չէ համեմատական վերլուծություն իրականացնել, պարզելու համար, թե, արդյոք, բարձր տեխնոլոգիական ոլորտի դրական դինամիկան ինչ ներբերում ունի ընդհանուր տնտեսական զարգացման, տնտեսության կառուցվածքի օպտիմալացման և ռազմատնտեսական անվտանգության ապահովման տեսանկյուններից: Այնուամենայնիվ, նույն նախարարի խոսքով՝ Հայաստանի գիտատար ընկերությունները կարողացել են այնպիսի արդյունքի հասնել, որ հետաքրքիր են դարձել վենչուրային ներդրողների համար և ներգրավել են շուրջ 50 միլիոն դրամի ներդրումներ: Հիմք ընդունելով նախարարի խոսքը՝ կարող ենք եզրակացնել, որ համավարակը բացասաբար չի անդրադարձել բարձր տեխնոլոգիական (այդ թվում նաև ռազմաարդյունաբերական) ձեռնարկությունների գործունեության վրա: Սակայն 2020 թ. առաջին ինն ամիսներին բյուջեի կատարման ընթացքի մասին տվյալների վերլուծությունը որոշակի հիմքեր է

[*] Նման աշխատանքներ կատարվել են, օրինակ, Չարենցավանի հաստոցաշինական գործարանում (տես «Հարցազրույց Արտյոմ Մեհրաբյանի հետ», 06.03.2021 (https://www.youtube.com/watch?v=DCEKbIVLOcE)):

[14] Տես *Ս. Հարությունյան,* Հայկական հարվածային անօդաչու սարքերը անցնում են պետական փորձարկումներ. Արշակյան: «Ազատություն Ռադիոկայան», 2021 փետրվարի 9 (https://www.azatutyun.am/a/31093856.html):

տալիս եզրակացնելու, որ ռազմատնտեսական անվտանգության վրա համավարակի ազդեցությունը, այնուամենայնիվ, բացասական է: Այսպես. 2020 թ. ինն ամիսների ընթացքում «Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում հատուկ ԳՀՓԿԱ-ների կատարողականը կազմել է ընդամենը 19,3 % (շուրջ 520,2 մլն դրամ): Ցածր կատարողականը պայմանավորված է կորոնավիրուսի հետևանքով տեխնիկական առաջադրանքների և էսքիզային նախագծերի համաձայնեցման և հաստատման ձգձգմամբ: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատությամբ «Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» ծրագրի ծախսերը նվազել են 31,4 %-ով, կամ, 237,6 մլն դրամով[15]:

Ռազմական ծախսեր: Նոր կորոնավիրուսային համավարակի հետևանքով ստեղծված իրավիճակը հարկաբյուջեական կանոններով սահմանված կարգով ՀՀ կառավարության հատուկ որոշմամբ համարվել է *բացառիկ դեպք*[*] և դրան համապատասխան «ՀՀ 2020 թ. պետական բյուջեի մասին» օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ[16]: 2020 թ. առաջին ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտների աճման տեմպն աստիճանաբար դանդաղել է, իսկ պետական բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերն աճել են արագ տեմպերով: Կորոնավիրուսի համավարակի կանխարգելման միջոցառումների շրջանակներում պետական բյուջեից փաստացի ծախսվել է 54,2 մլրդ դրամ, որից սոցիալական աջակցության ծրագրերի գծով հատկացվել է 25,7 մլրդ, իսկ տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով՝ 28,1 մլրդ դրամ (որից 9,3 մլրդ-ը ծախսերի, իսկ 18,8 մլրդ-ը՝ վարկավորման միջոցով): Համավարակի տարածման կանխարգելման նպատակով կառավարությունը կատարել է նաև առողջապահական ծախսեր, որոնց ծավալը սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է մոտ 19,1 մլրդ դրամ (ներառյալ՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերը): 2020 թ. տնտեսական անկմանը դիմակայելու, ինչպես նաև հետագա վերականգնումը խթանելու նպատակով կառավարությունը հայտարարել է 150 մլրդ դրամ (ՀՆԱ-ի շուրջ 2,3 %) ընդհանուր գումարի չափով սոցիալ-տնտեսական աջակցության ծախսային միջոցառումների ծրագիր՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

[15] Տես «Տեղեկատվություն ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ», էջ 140 (https://minfin.am/website/images/files/_2020_9%20.docx):

[*] Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի՝ *բացառիկ դեպք* են համարվում մեծածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումներով բնութագրվող իրավիճակները:

[16] Տես 2020 թ. ապրիլի 29-ի ««2020 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» հմ. ՀՕ-235-Ն օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142125):

- 30 մլրդ դրամ՝ տնտեսավարողներին աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են ընթացիկ իրացվելիության խնդիրների լուծմանը,
- 30 մլրդ դրամ՝ սոցիալական աջակցության ծրագրեր,
- 80 մլրդ դրամ՝ տնտեսության վերականգնման և երկարաժամկետ զարգացմանն ուղղված ծրագրեր,
- 10 մլրդ դրամ՝ պահուստային միջոցներ, որոնք անհրաժեշտ են վերաբաշխումներ կատարելու համար:

2020 թ. ինն ամիսների համար պետական բյուջեի պակասուրդը սահմանված էր 153,1 մլրդ դրամ, սակայն հաշվետու ժամանակահատվածում այն ավելացվել է շուրջ 216,2 մլրդ դրամով, որից 204,8 մլրդ-ը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու անհրաժեշտությամբ: Որպես արդյունք՝ 2020 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա վերջի համեմատությամբ աճել է 318,1 մլրդ դրամով (533,3 մլն ԱՄՆ-ի դոլարով), ինչը պայմանավորված է հիմնականում կառավարության պարտքի աճմամբ (այն աճել է 9,7 %-ով)[17]:

Ներկայացված թվերը ռազմատնտեսական անվտանգության վրա ազդեցության տեսանկյունից բավական խոսուն են: Նոր կորոնավիրուսային համավարակը, ըստ էության, զրոյացրեց Հայաստանի բյուջետային* համակարգի «ամրության պաշարը»՝ այլ *բացառիկ դեպքերի* պարագայում բյուջետային միջոցների վերաբաշխման հնարավորությունների առումով: Որպես արդյունք՝ ռազմական գործողություններով պայմանավորված ընթացիկ բյուջետային ծախսերը հնարավոր դարձավ ավելացնել ընդամենը 40 մլրդ դրամով[18] (ինչը 3,75 անգամ պակաս է, քան հատկացվել էր կորոնավիրուսի դեմ պայքարելու և հետևանքները հաղթահարելու համար): Ընդ որում, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ պատերազմը ՀՀ պետական պարտքը մեծացրել է ընդամենը 114 մլն դոլարով (4,7 անգամ քիչ, քան պետական պարտքի ավելացումը համավարակի պատճառով): Հայտնի չէ, թե ընթացիկ բյուջետային ծախսերի ինչպիսի փոփոխություն տեղի կունենար և ռազմական ծախսերի ո՞ր ուղղություններին դրանք կուղղորդվեին, կորոնավիրուսային համավարակի բացակայության ու 2020 թվականի համար կանխատեսված տնտեսական աճի պայմաններում, սակայն միանշանակ է,

[17] Տես «Տեղեկատվություն ՀՀ 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ», էջ 22 (https://minfin.am/website/images/files/_2020_9%20.docx):

* Տվյալ ածականական ձևը չի համապատասխանում գոյականական այն ձևին, որից ածանցված է, ուստի պետք է լիներ *բյուջեական*, սակայն խմբագրությունը, հաշվի առնելով տվյալ սխալ ձևի տարածվածությունը, սույն հոդվածում պահպանել է հեղինակի գրելաձևը: – *Խմբ.*:

[18] Տես *Ա. Գրիգորյան,* Ռազմական գործողություններով պայմանավորված ՀՀ-ն նախատեսում է ընթացիկ ծախսերը ավելացնել 40 մլրդ դրամով: ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, 05.10.2020 (https://minfin.am/hy/content/razmakan_gortsoghutyunnerov_paymanavorvats_hh-n_nakhatesum_e_yntacik_tsakhsery_avelacnel_40_mlrd_dramov/):

որ համավարակի պատճառով բյուջետային համակարգն այս առումով ունեցել է ճկունության էական կորուստ:

Աղքատության մակարդակ և եկամուտների բաշխում: Հայաստանում 2020 թ. աղքատության մակարդակի և եկամուտների բաշխման վերլուծությունը կատարել ենք Համաշխարհային բանկի «Մակրոտնտեսական աղքատության կանխատեսումներ» հրապարակման մեջ նշված վիճակագրական տվյալների հիման վրա[19], քանի որ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր» հրապարակման մեջ անհրաժեշտ ժամանակաշրջանում աղքատությունը նկարագրող ցուցանիշները ներկայացված չեն: Սակայն սկսած 2019 թվականից Հայաստանում աղքատության մակարդակը գնահատվում է Համաշխարհային բանկի փորձագետների աջակցությամբ ճշգրտված մեթոդաբանությամբ, ուստի տվյալների անհամադրելիության խնդիր չի առաջանա: Այսպես. Հայաստանում 2020 թ. աղքատության մակարդակը 2019 թ. 26,4 %-ի փոխարեն կազմել է 29,9 %, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը[*] 2019 թ. 1,1 %-ի փոխարեն կազմել է 1,3 %: Ավելի մեծ տարբերությամբ փոխվել են օրական 3,2 ԱՄՆ-ի դոլարից ցածր եկամուտ ունեցողների (այսպես կոչված «միջին» աղքատների) աղքատության մակարդակը՝ 9,8 %-ից 13,2 %-ի, ինչպես նաև օրական 5,5 ԱՄՆ-ի դոլարից ցածր եկամուտներ ունեցողների («միջինից բարձր» աղքատների) աղքատության մակարդակը՝ 44,0 %-ից մինչև 51,7 %:

Ինչ վերաբերում է Ջինի գործակցին, ապա այն 2020 թ. նկատելիորեն բարելավվել է՝ 2019 թ. 0,336-ից դառնալով 0, 299: Այս հանգամանքը, թերևս, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Հայաստանում ըստ դեցիլային խմբերի ամենամեծ եկամուտ ունեցողների եկամուտներում այլ խմբերի համեմատությամբ ավելի բարձր տեսակարար կշիռ էին կազմում վարձու աշխատանքից, ինքնազբաղվածությունից և տրանսֆերտներից ստացվող եկամուտները, որոնք համավարակի պատճառով կտրուկ կերպով նվազել են: Մինչդեռ այլ դեցիլային խմբերում մեծ տեսակարար կշիռ են կազմում թոշակներից ու նպաստներից գոյացող եկամուտները, որոնք համավարակի պայմաններում նույնիսկ աճել են:

Այնուամենայնիվ, համավարակի հետևանքով երկրում սոցիալական պատկերի վատթարացումն ակնհայտ է: Դա իր բացասական ազդեցությունն է ունեցել բնակչության, այդ թվում նաև զինվորական խավի ֆիզիկական և հոգեբանական հատկանիշների վրա՝ հանգեցնելով սոցիալ-տնտեսական միասնության քայքայման:

---

[19] Տես “Macro Poverty Outlook”. The World Bank. Washington, 2021 (https://pubdocs.worldbank.org/en/747731554825511209/mpo-mena.pdf):

[*] Ծայրահեղ աղքատության գիծը Հայաստանում ամսական 49,4 ԱՄՆ-ի դոլարից նվազ եկամուտներն են (օրական 1,65 ԱՄՆ-ի դոլար), իսկ Համաշխարհային բանկի վերլուծություններում այդ գիծը 1,9 ԱՄՆ-ի դոլար է:

Հասարակության սոցիալ-քաղաքական միասնությունը: Ա. Բուրավլյովի առաջարկած մեթոդաբանությամբ այս գործոնը կարելի է գնահատել ընտրություններին բնակչության մասնակցության ցուցանիշով (բնակչության թվաքանակից %-ներով) և այն ձայների ցուցանիշով (դարձյալ %-երով), որոնք տրվել են քաղաքական ուժերին և դրանց ներկայացուցիչներին՝ օգտագործելով հետևյալ մոտեցումը.

$$Գ_{ՍՔՍ} = \begin{cases} Գ_Ս \dfrac{\max(\gamma_1)}{\sum_{i=1}^{m} \gamma_i}, & \text{եթե } Գ_Ս \geq Գ_{\min} \\ 0, & \text{եթե } Գ_Ս < Գ_{\min} \end{cases},$$

որտեղ $Գ_Ս$-ն հասարակության այն մասն է, որը մասնակցել է ընտրություններին, γ_i -ը ձայների այն մասնաբաժինը, որն ստացել է i-րդ քաղաքական ուժը, այսինքն՝ ցույց է տալիս տվյալ ուժի քաղաքական վստահելիությունը և հեղինակությունը, իսկ m-ը՝ քաղաքական ուժերի թիվը: Եթե, օրինակ, ընտրողների 100 %-ը մասնակցել է ընտրություններին, և միայն մի կուսակցություն է ստացել բոլոր ձայները, ապա տեղի ունի բացարձակ սոցիալ-քաղաքական միասնություն՝ $Գ_{ՍՔՍ}$=1: Իսկ եթե բոլոր քաղաքական ուժերն ստացել են հավասար չափով ձայներ, ապա՝ $\gamma_i=1/m$, հետևաբար $Գ_{ՍՔՍ}=Գ_Ս/m$, քաղաքական կուսակցությունների թվի աճը վկայում է սոցիալ-քաղաքական վստահության նվազումը: Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ $Գ_Ս<Գ_{\min}$, ապա սա վկայում է, որ ընտրություններ տեղի չեն ունեցել, հետևաբար սոցիալ-քաղաքական միասնության մասին խոսելն է անիմաստ:

Հայաստանում սոցիալ-քաղաքական միասնության ցուցանիշը՝ հաշվարկված 2018 թ. ԱԺ արտահերթ ընտրությունների արդյունքներով, այնքան էլ մեծ չէր՝ 0,341[20]: Համավարակի և դրա հետևանքների դեմ պայքարի գործընթացները Հայաստանի նոր իշխանությունների համար վերածվեցին լուրջ փորձության: Ձեռնարկված քայլերը հաճախ համարժեք չէին իրական մարտահրավերներին: Այս առնչությամբ իրարամերժ որոշումները և ոչ հիմնավոր գործողություններն իրենց բացասական ազդեցությունը պիտի թողնեին հասարակության սոցիալ-քաղաքական միասնության վրա: Մյուս կողմից իրականացվող արտակարգ միջոցառումները թեև իսկապես անհրաժեշտ էին համավարակի դեմ պայքարի համար, դրանցում կարելի էր նկատել նաև քաղաքական շարժառիթներ: Ի դեպ, տարբեր երկրներում ժողովրդավարական ինստիտուտների խարխլման և օրինական այլակարծության ճնշման նկատառումներով հակահամավարակային միջոցառումների կիրառման իրողությունների մասին ներկայացված է նաև ՄԱԿ-ի «COVID 19 և մարդու իրավունքները» վերլուծությունում[21]: Նման պայմաններում սրվում

[20] Տես «ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններ, 09 դեկտեմբեր 2018 թ. արձանագրություն» (https://res.elections.am/images/doc/09.12.18v.pdf):

[21] Տես “COVID-19 and Human Rights: We are all in this together”, April 2020 (https://unsdg.un.org/sites/default/files/2020-04/COVID-19-and-Human-Rights.pdf):

են հակասությունները հասարակության ու քաղաքական իշխանությունների միջև, ի հայտ է գալիս լրացուցիչ անկայունություն և անվստահություն, ինչն էլ խորացնում է խաղաղության և անվտանգության ասպարեզում առկա խնդիրները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատահական չէ, որ համավարակի վերաբերյալ գրեթե բոլոր միջազգային կառույցների հրապարակած զեկույցներում այն դիտվում է որպես ոչ միայն լուրջ առողջապահական, այլև անվտանգային մարտահրավեր: Մասնավորապես՝ այդ առնչությամբ ՄԱԿ-ի զեկույցը համավարակով է պայմանավորում խաղաղության և անվտանգության դեմ համաշխարհային նոր սպառնալիքները: Այն նաև կարող է չեզոքացնել աշխարհում խաղաղության հաստատման մինչ այժմ գործադրված ջանքերը և մեծացնել տարբեր տարածաշրջաններում հակամարտությունների զարգացման հավանականությունը: Աշխարհի տարբեր կետերում հաստատված փխրուն խաղաղության պահպանման նկատառումներով էլ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտիերեշը տեղային հակամարտությունների մեջ ներքաշված կողմերին դեռ 2020 թ. մարտին կոչ էր արել զերծ մնալ իրավիճակի սրումից և դադարեցնել բոլոր տեսակի ռազմական գործողությունները: Այնուամենայնիվ, Ադրբեջանը, թերևս, ճիշտ գնահատելով Հայաստանում կորոնավիրուսի հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական ճգնաժամի բացասական ազդեցությունը ռազմատնտեսական անվտանգության վրա և անտեսելով միջազգային մարդասիրական ու խաղաղասիրական նորմերը, լայնամասշտաբ պատերազմական գործողություններ սկսեց Արցախի դեմ, որի անվտանգության երաշխավորը Հայաստանն էր:

Անշուշտ, կարելի էր կանխատեսել պատերազմի վերսկսումը ոչ միայն Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ հայտարարությունների, այլև համավարակի այն բոլոր բացասական հետևանքների վերլուծության հիման վրա, որոնք Հայաստանը և Արցախը դարձնում էին անվտանգային առումով խոցելի: Որոշիչ էին նաև այլ հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, հիմնական տարածաշրջանային դերակատարների շահերի փոփոխություններն ու ոչ միանշանակությունը, արտաքին հարաբերությունների անկանխատեսելիությունը և այլն, սակայն ռազմատնտեսական անվտանգությունն այն հիմնասյունն է, որի վրա կառուցվում է պետության ամբողջ անվտանգային համակարգը: Պատերազմող կամ մեծ հավանականությամբ պատերազմի մեջ ներքաշվելու վտանգի առջև կանգնած պետություններում այս հանգամանքի անտեսումն անթույլատրելի է:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ВЛИЯНИЕ НОВОЙ КОРОНАВИРУСНОЙ ПАНДЕМИИ НА ВОЕННО-ЭКОНОМИЧЕСКУЮ БЕЗОПАСНОСТЬ РА

Г. Э. АРУТЮНЯН, кандидат экономических наук, доцент, начальник Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Стремительные геополитические изменения, а также наблюдаемая в последнее время конвергенция национальной безопасности и экономического развития актуализировали обсуждение современных задач обеспечения военно-экономической безопасности. В этом аспекте специфической угрозой является новая коронавирусная пандемия. Результаты исследования влияния данной пандемии на систему безопасности государства на примере Армении указывают на то, что пандемия оказала негативное воздействие на все параметры военно-экономического потенциала государства (ВВП, военные расходы, сверхвысокотехнологичное производство, НИОКР, комплектование Вооруженных сил, безработица, социально-политическое единство и т. д.) и стала причиной возросшей уязвимости Армении и Арцаха в военно-экономическом отношении, что явилось дополнительной предпосылкой для развязывания Азербайджаном агрессии против Арцаха.

ECONOMIC SECURITY

THE IMPACT OF THE NOVEL CORONAVIRUS PANDEMIC ON THE MILITARY AND ECONOMIC SECURITY OF THE RA

G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Head, Strategic Gaming and Modeling Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Rapid geopolitical changes, as well as the recent convergence of national security and economic development, have updated the discussion of modern issues of ensuring military and economic security. In this aspect, the new coronavirus pandemic is a specific threat. The results of the impact study of this pandemic on the state security system, the case of Armenia, indicate that the pandemic has had a negative impact on all the parameters of the state's military and economic potential (GDP, military expenditure, super high-tech manufacture, R&D, manning and equipping, unemployment, socio-political unity, etc.) and has led to the increasing military and economic vulnerability of Armenia and Artsakh, and that provided an additional prerequisite for Azerbaijan to unleash aggression against Artsakh.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Վ. Վ. ԾԱՏՈՒՐՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ

Պարբերական հիվանդությունը (ՊՀ), կամ ընտանեկան միջերկրածովյան տենդը, (ԸՄՏ, *Familial Mediterranean Fever, FMF*) համաձայն «Հիվանդություններին և առողջությանն առնչվող պրոբլեմների միջազգային դասակարգման» 10-րդ վերանայման տարբերակի[1] (1992 թ.), մոնոգենային հիվանդություն է, որն առաջանում է 16-րդ քրոմոսոմում գտնվող *MEFV՝ MIMno249100* գենի փոփոխակման (մուտացիա) հետևանքով՝ պիրինի համադրության խանգարման պատճառով: Դրան բնորոշ են աուտոսոմ-ռեցեսիվ տիպի ժառանգումը, տենդի ինքնաբերաբար առաջացող հետադարձ բնույթի նոպաներն ու սեռոզ թաղանթների (պոլիսեռոզիտներ՝ պերիտոնիտ, պլևրիտ, սինովիտ) ասեպտիկ բորբոքումները: Որոշակի էթնոսներում (հայեր, հրեաներ, ասորիներ, արաբներ) տարածված հիվանդություն է[2]:

Հարկ է նշել, որ ըստ որոշ տվյալների՝ հանդիպում է նաև հիվանդության աուտոսոմ-դոմինանտ տիպը (հիվանդությունը զարգանում է հետերոզիգոտների շրջանում 1 նորմալ և 1 փոփոխակված գենով), որն առաջանում է բարձր աստիճանի ներթափանցմամբ (պենետրատություն) փոփոխակման դեպքում[3]:

---

[1] Տես “International statistical classification of diseases and related health problems. 10th revision”, Vol. 1: “Tabular list”. World Health Organization. 2016, Fifth edition, P. 277, E85.0:

[2] Տես *И. А. Шамов.* Семейная средиземноморская лихорадка (пароксизмальный полисерозит, семейный рецидивирующий полисерозит, периодическая болезнь). «Клиническая медицина», 2014, № 3; *А. З. Пепоян, М. А. Балаян, Н. А. Арутюнян, А. Г. Григорян и др.* Антибиотикорезистентность Escherichia Coli кишечной микробиоты у больных семейной средиземноморской лихорадкой. «Клиническая медицина», 2015, № 93; *Н. Т. Ватутин, А. С. Смирнова, М. А. Эль-Хатиб.* Семейная средиземноморская лихорадка: обзор рекомендаций EULAR, 2016. «Архивъ внутренней медицины», 2016, № 6; *Г. Г. Амарян.* Периодическая болезнь (семейная средиземноморская лихорадка) у детей. «Медицинский совет», 2017, № 19:

[3] Տես *Е. С. Федоров, С. О. Салугина, Н. Н. Кузьмина.* Семейная средиземно-

Պարբերական հիվանդությունն ըստ կլինիկական դրսևորումների լինում է աբդոմինալ, թորակալ, հոդային, տենդային և խառը տիպերի[4]: Ընդսմին այս հեղինակները նշում են, որ հոդային տարբերակը զարգանում է որպես հոդի սուր բորբոքում՝ հոդացավի, միա- և բազմահոդաբորբի ձևով, հաճախ ախտահարվում են սրունք-թաթային և ծնկան հոդերը: Հոդային տարբերակը կարող է զարգանալ առանց տենդի, որը դժվարացնում է ախտորոշումը, հատկապես՝ հիվանդության սկզբնական շրջանում:

Հետագայում կատարվել են պարբերական հիվանդության ժամանակ հայազգի երեխաների հոդերի ախտահարման տարածվածության բավական հետաքրքրական հետազոտություններ[5]: Դրանց արդյունքներով նշվել է, որ նման ախտահարում դիտվել է 56,6 % դեպքերում, ընդ որում, դա կարող է արտահայտվել սուր նոպայի տեսքով (տիպիկ ընթացք) կամ որպես քրոնիկական հոդախտ:

Ըստ գրականության տվյալների՝ որոշ դեպքերում հոդային տարբերակը կարող է ձևավորել ողնաշարաբորբ (սպոնդիլիտ) հիշեցնող պատկեր՝ նվազագույն ռենտգեն փոփոխություններով և բացասական B27 ՄԼԱ[6] (մարդու լեյկոցիտային անտիգեն *HLA*) և միևնույն ժամանակ 4,7 % դեպքերում կարող է զուգակցվել հոդերի այլ հիվանդությունների հետ[7]:

Պարբերական հիվանդության բարդություններից առավել հաճախ հանդիպում են երիկամների ամիլոիդոզը՝ քրոնիկական երիկամային անբավարարության, կպումային հիվանդությունը՝ բարակ աղիքի անանցանելիության կամ չբերության զարգացմամբ[8]:

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ն առողջ և ֆիզիկապես ամուր թվակակազմով համալրելու պրոբլեմը դարձել է արդիական, պետական մակարդակի խնդիր, իսկ զորակոչիկների թվային պակասուրդը և նրանց՝ հետագայում արդեն որպես նորակոչիկների ոչ բարվոք առողջական վիճակը, ԶՈՒ-ի համար գլխավոր խնդիրներից են:

Գրականության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զորակոչով ԶՈՒ-ի համալրումը ապահովող պետություններում գոյություն

морская лихорадка (периодическая болезнь): современный взгляд на проблему. «Современная ревматология», 2013, № 1:

[4] Տես *В. М. Арутюнян, Г. С. Акопян.* Периодическая болезнь. М., 2000, с. 304:

[5] Տես *Г. Г. Амарян.* Периодическая болезнь у детей: клинико-генетические аспекты и современный подход к лечению. Автореф. дисс. докт. мед. наук. Е., 2010:

[6] Տես *M. Galeazzi, G. Gasbarrini, A. Ghirardello, S. Grandemange et al.* Autoinflammatory syndromes. “Clinical and Experimental Rheumatology”, January-February 2006, N 24 (1 Suppl 40):

[7] Տես *Г. Г. Амарян.* Периодическая болезнь (семейная средиземноморская лихорадка) у детей:

[8] Տես *Г. Г. Амарян. Т. Ф. Саркисян, А. С. Айрапетян.* Семейная средиземноморская лихорадка у детей (периодическая болезнь). Методическое пособие. Е., 2012, с. 82:

ունեն մի շարք խնդիրներ՝ կապված տվյալ թվակազմի առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման հետ:

ՀՀ ԶՈՒ-ին բնորոշ առանձնահատկություններից է զորակոչային տարիքի անձանց շրջանում պարբերական հիվանդության հնարավոր առկայությունը և նրանց մի մասի՝ դրանով պայմանավորված ծառայությանը ոչ պիտանիությունը:

Ինչպես վերը նշվեց, պարբերական հիվանդությունը աուտոսոմ ռեցեսիվ հիվանդություն է: Դրա զարգացման համար պատասխանատու է *MEFV* գենը (քարտեզագրված է 16 քրոմոսոմի *p*13,3 հատվածում), որը կոդավորում է մարենոստրին (պիրին) սպիտակուց-ինֆլամասոմը: ՊՀ բուժման համար ընդունված է կոլխիցինը:

Պիրին ինֆլամասոմի փոփոխությունները, որոնք պայմանավորված են *M694V/V726A* գենային փոփոխակումներով, ՊՀ բուժառուների աղիքային միկրոֆլորայում առաջացնում են սեռով պայմանավորված շեղումներ: Երկարատև կոլխիցինաթերապիան աղիքային միկրոֆլորայում հանգեցնում է նոր տեղաշարժերի՝ *NLRP3*-ի արգելակման միջոցով ազդելով իմունային կարգավորման վրա: Պրո- և պրեբիոտիկոթերապիան կարող են նպաստել աղիքային միկրոֆլորայի շեղումների վերացմանը: Հարկ է նշել, որ *NLRP3* ինֆլամասոմը *NLRP* ընտանիքի ամենահետազոտված ինֆլամասոմն է:

L. acidophilus INMIA 9602 Er շտամ 317/402-ը ՊՀ-ով տառապող անձանց օրգանիզմում առաջացնում է *NLRP3*-ի գործունեության փոփոխություններ՝ նպաստելով աղիքային միկրոբիոտայի դրական տեղաշարժերի: Պրոբիոտիկների կենսագործունեությունը խթանելու համար հաճախ օգտագործվում են պրեբիոտիկներ: Ըստ այդմ էլ ՊՀ նոպայի կանխարգելման և բուժման տեսակետից էապես կարևորվում է ՊՀ-ով տառապող անձանց համար պրե- և պրոբիոտիկների կիրառման հարցը:

Մասնագիտական գրականության մեջ նկարագրվում է պարբերական հիվանդության մի դեպք, երբ այն ընթանում էր թոքերի ռեցիդիվող և ինտերստիցիալ ախտահարումով[9]: Հիվանդության տիպիկ դրսևորումներն են կրկնվող տենդը, պերիտոնիտը, սինովիտը, պլևրիտը, հազվադեպ՝ պերիկարդիտը, մենինգիտը, մաշկի կարմիր քամու տիպի ախտահարումները և երիկամների ամիլոիդոզի զարգացումը: Նկարագրված կլինիկական դեպքում հիվանդությունն սկսվել էր թոքերի կրկնվող ինտերստիցիալ ախտահարումով և մաշկի՝ սկլերոդերմիկ տիպի պատկերով: Շուրջ 5 տարիների ընթացքում թոքերի ախտահարումը դիտարկվել է որպես կրիպտոգեն թոքաբորբ, և հիվանդն ստացել է գլյուկոկորտիկոիդներով անարդյունավետ բուժում: 2013 թ. գենետիկական հետազոտությամբ հայտնաբերվել են *V726A* և *A744S* փոփոխակումները՝ բաղադրյալ *(compound)* հետերոզիգո-

[9] Տես *А. В. Шестакова, С. Н. Волкова, Г. В. Шестакова, М. Л. Горбунова и др.* Случай периодической болезни с рецидивирующим интерстициальным поражением лёгких. «Казанский медицинский журнал», 2017, т. 98, № 5:

տային վիճակում և հաստատվել է պարբերական հիվանդության ախտորոշումը: 3,5 տարվա ընթացքում կոլխիցինի ընդունումը ապահովել է հիվանդության հետընթացը՝ արտահայտված ֆեբրիլ տենդի ու թոքաբորբերի սրումների բացակայության, թոքերի ախտահարման ռենտգենաբանական պատկերի և մաշկի սկլերոդերմիկ ախտահարումների նվազման ու վերացման ձևով: Տվյալ կլինիկական դեպքում գրանցված պարբերական հիվանդության դրսևորումները դասվում են քիչ հանդիպող երևույթների շարքը:

Հեղինակները հաստատում են ԸՄՏ բազմաթիվ խնդիրները և ախտորոշման, բուժման ու հսկողության համալիր մոտեցումների ցուցաբերման անհրաժեշտությունը:

Մեկ այլ խումբ հետազոտողներ սկսվող իդիոպաթիկ յուվենիլ հոդաբորբն ուսումնասիրել են 54 եգիպտացի երեխաների շրջանում[10], երբ այն գենետիկորեն հաստատված էր, սակայն զարգանում էր առանց ընտանեկան միջերկրածովյան տենդի տիպիկ կլինիկական ախտանիշների: Բոլոր հիվանդները ենթարկվել են սկրինինգի *MEFV* գենի 12 ընդհանուր փոփոխակումների առնչությամբ: Ընդ որում, սկսվող իդիոպաթիկ յուվենիլ հոդաբորբով հիվանդների օրգանիզմում *V726A*-ն եղել է առաջատար փոփոխակումը, երկրորդ տեղն զբաղեցրել է *E148Q*-ն 15,74 % ալելային հաճախականությամբ, մնացած փոփոխակումները կազմել են 7,4 %: *MEFV* գենի փոփոխակումների կրողների օրգանիզմում իդիոպաթիկ յուվենիլ հոդաբորբի զարգացման ռիսկը 18 անգամ գերազանցել է հսկողական խմբի համար գրանցված ցուցանիշը: Առողջ հսկողական խմբում *E148Q* փոփոխակումները կազմել են 13,3 %:

Հեղինակները եզրակացնում են, որ *MEFV* փոփոխակումները կարող են լինել աուտոիմուն բորբոքային հիվանդությունների հիմքը, ուստի և իդիոպաթիկ յուվենիլային հոդաբորբով հիվանդները պետք է ստուգվեն նաև *MEFV* փոփոխակումների առումով այն երկրներում, որտեղ պարբերական հիվանդությունը հաճախ է հանդիպում:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է կատարել իդիոպաթիկ յուվենիլային հոդաբորբով հիվանդների սկրինինգ՝ պարբերական հիվանդության առկայությունը գենետիկորեն հաստատելու համար, հատկապես, երբ խոսքը վերաբերում է զորակոչային տարիքի երիտասարդներին, ինչը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ ԶՈՒ-ի համալրումը առողջ անձնակազմով:

Դրա հետ մեկտեղ առաջարկում ենք որպես պարբերական հիվանդության դրսևորումների կանխարգելման միջոցներ օգտագործել պրե- և պրոբիոտիկներ, որոնց ազդեցության մեխանիզմների լրիվ պարզումը հնարավորություն կտա վերջնականապես հիմնավորելու կլինիկական բուժման գործում դրանց օգտագործման անհրաժեշտությունը:

Բավական հետաքրքիր հետազոտություն է կատարվել Հայաստանի

[10] Տես *H. M. Lotfy, M. E. Kandil, M. S. Issac, S. Salah et al.* MEFV mutations in Egyptian children with systemic-onset juvenile idiopathic arthritis. “Molecular Diagnosis and Therapy”, October 2014, N 18:

Հանրապետությունում, մասնավորապես՝ ուսումնասիրվել է հայկական պոպուլյացիայում պարբերական հիվանդության և *MEVF* գենի փոփոխակումների կրելիության հաճախականությունը[11]:

Հայ մասնագետների խումբը տվյալ հետազոտությունը կատարել է Երևան քաղաքում և 10 մարզերում: Պատահական սկզբունքով կազմված ընտրանքում ներառվել են 17-ից 20 տարեկան 290 հոգի (111 արական և 179 իգական սեռի): Նրանցից վերցվել են պերիֆերիկ արյան նմուշներ, որոնցում ուսումնասիրվել են ընտանեկան միջերկրածովյան տենդի 12 առավել հաճախակի հանդիպող փոփոխակումները:

Ուսումնասիրության արդյունքներով ի հայտ է եկել կրելիության չափազանց բարձր հաճախականություն՝ 1:3, որը պայմանավորված չէ սեռով: Առավել բարձր հաճախականություն գրանցվել է Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, ցածր՝ Տավուշի և Կոտայքի: Ցույց է տրվել, որ կլինիկայում նկատված արական սեռի որոշակի գերակշռությունը պայմանավորված է հետերոզիգոտային հիվանդների առկայությամբ: Կրելիության այս ցուցանիշը գրականության մեջ հանդիպող ցուցանիշներից ամենաբարձրն է:

Կարևոր է, որ խումբը հաշվարկել է նաև ԸՄՏ-ի սոցիալ-տնտեսական բեռը: Թեև հիվանդության ընթացքը հիմնականում եղել է բարորակ, սակայն ֆինանսական հետևանքները բավական նշանակալի են: Տարեկան գումարային ֆինանսական բեռը, ներառյալ տարբեր սոցիալական վճարումների և տնտեսական կորուստների տեսքով կատարած անուղղակի ծախսերը, հասնում է 4,2 – 6,0 միլիարդ դրամի, ինչը կազմում է պետական բյուջեից առողջապահությանը նպատակաուղղված միջոցների գրեթե 8 տոկոսը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ Զինված ուժերի համալրման տեսակետից, մասնավորապես, երբ դա կատարվում է պայմանագրային ծառայության անցնող զինծառայողներով, պարբերական հիվանդության պարագայում առկա են բազմաթիվ պրոբլեմներ, որոնք պահանջում են շուտափույթ լուծում՝ խարսխված բազմակողմանի գիտական հիմքերի և հիմնավորումների վրա:

[11] Տես *Ա. Է. Թադևոսյան,* Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման ամփոփիչ հաշվետվություն: Ե., 2017, էջ 18:

ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՀՈԳԵՀՈՒԶԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի բժշկական ծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոնի պետ, Լ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետի նյարդաբանության ամբիոնի ավագ դասախոս, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի՝ ոչ ջերմային ինտենսիվությունների միկրոալիքային ճառագայթման ներգործության ուսումնասիրությամբ զբաղվող խմբի անդամ

Ներկայումս արտաքին միջավայրի բնական և արհեստական գործոններին կարևոր նշանակություն է տրվում, մի կողմից, հոմեոստազի պահպանման, մյուս կողմից՝ տարաբնույթ ախտաբանական կենսընթացների հարուցման առումով[1]: Դրանց շարքում առանձնակի դեր ունեն այն գործոնները, որոնք ազդում են օրգանիզմի ինտեգրային գործունեությունն ապահովող համակարգերի վրա:

Վերջին տասնամյակները բնութագրվում են ռադիոէլեկտրոնիկայի բուռն զարգացմամբ: Դա հանգեցրել և հանգեցնում է այն մարդկանց թվի օրինաչափ աճման, որոնք իրենց մասնագիտական գործունեության բերումով ենթարկվում են գերբարձրհաճախականային էլեկտրամագնիսական դաշտի (ԳԲՀ ԷՄԴ) ազդեցության: Այդ դաշտերը լայնորեն կիրառվում են ռազմական գործում, օդերևութաբանությունում, ուղեվարությունում, տիեզերական և մյուս գիտական հետազոտություններում: Պրոբլեմն է՛լ ավելի արդիական է դառնում այն պատճառով, որ մեր կենցաղում ևս համատարած կերպով օգտագործվում է այնպիսի սարքավորանք, որի աշխատանքը հիմնված է ոչ իոնացնող ճառագայթման սկզբունքի վրա[2]:

---

[1] Տես *А. К. Намазов, О. Е. Пискун, К. А. Намазов.* Влияние внешней среды на организм человека. «Здоровье - основа человеческого потенциала: проблемы и пути их решения», 2020, т. 15, № 2:

[2] Տես *Н. И. Бурлака.* Влияние электромагнитного излучения на функциональное состояние организма машинистов. «Новые задачи современной медицины». Материалы III Междунар. науч. конф. г. Санкт-Петербург, декабрь 2014 г. СПб., 2014, сс. 11–13:

Միևնույն ժամանակ, չի կարելի թերագնահատել տվյալ կարգախմբի մարդկանց համար հոգեհուզական վիճակի նշանակությունը, քանի որ տեղի ունեցած փոփոխությունները կարող են վկայել, որ օրգանիզմն իր պահուստային կարողությունները մոբիլիզացրել է կարգավորման համակարգերի որոշակի ծանրաբեռնվածությունը հաղթահարելու համար: Չի բացառվում, որ դրանք կարող են հետագայում հիմք դառնալ տարատեսակ դիսֆունկցիաների առաջացման, սրտանոթային, մարսողական ու մյուս համակարգերում ախտաբանական շեղումների զարգացման համար[3]:

Ցավոք, բավարար չափով չի ուսումնասիրվել այն անձանց հոգեհուզական վիճակը, որոնք մասնագիտության բերումով երկար ժամանակ գործ են ունենում ԳԲՀ ԷՄԴ-ի հետ: Գրականության մեջ եղած սակավաթիվ հաղորդումները միայն վկայում են, որ նման ներգործության նկատմամբ օրգանիզմի պատասխան հակազդումներին մասնակցում են բարձրագույն նյարդահոգեկան կենտրոնները:

Այսպես. որոշ գիտնականներ[4] ուսումնասիրել են կենսաօբյեկտների վրա երկրամագնիսական, ցածրհաճախականային, բարձրհաճախականային դաշտերի ու ռադիոալիքային ճառագայթման ներգործությունը այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են նկարագրական-հյուսվածաբանական, էլեկտրոնամանրադիտակային, համակարգչային վերլուծության և այլ եղանակներ: Այդ հետազոտությունների շնորհիվ ի հայտ են բերվել նյարդային համակարգի մեծ զգայունությունն ու խոցելիությունը, արյան բարձր ճնշման և սրտի իշեմիկ հիվանդության զարգացման վտանգը, բացասական ազդեցությունը անոթային համակարգի վրա, բջջային հեռախոսի մագնիսական դաշտի ազդեցությունը մարդու ծերացման կենսընթացի վրա: Ընդ որում, ամեն ինչ կախված է արտաքին ազդանշանի հաճախականությունից և լայնույթից:

Այդ հետազոտողները նաև պնդում են, որ տվյալ կարգախմբի անձինք միկրոալիքային գեներատորներով որոշ ժամանակ աշխատելուց հետո սկսում են գանգատվել առողջական վիճակից, առաջանում են որոշակի նյարդաբանական ախտանիշներ, որոնք բնորոշ են աստենիկ, աստենոնյար-

[3] Տես *Л. Б. Лазебник, А. Э. Лычкова.* Воздействие излучения ДМВ диапазона на моторную функцию желудочно-кишечного тракта и желчевыводящих путей. «Экспериментальная и клиническая гастроэнтерология», 2013, № 8; *В. В. Лешин, И. О. Борисов, Т. Н. Семенова, Ю. Л. Новикова.* Особенности физиологических и структурных изменений в центральной нервной системе под влиянием электромагнитного поля СВЧ диапазона. «Вестник Орловского государственного аграрного университета», 2012, т. 34, вып. 1; *Д. А. Родченко, М. С. Кизиченко, Е. В. Сарчук.* Воздействие СВЧ-излучения на организм человека: аспекты проблемы. «Научное обозрение. Фундаментальные и прикладные исследования», 2020, № 3:

[4] Տես *А. А. Шпак, В. А. Новиков.* Исследования влияния электромагнитных полей (ЭМП) и электромагнитных излучений (ЭМИ) на биообъекты. «Биомедицинская инженерия и электроника». Электронный научный журнал, 2017, № 4 (http://biofbe.esrae.ru/pdf/2017/4/1120.pdf):

դային համախտանիշներին և նեյրոցիրկուլյատոր դիստոնիային[5]: Ահա այսպիսի տվյալներով են սահմանափակվում այն մարդկանց հոգեհուզական վիճակի մասին տեղեկությունները, որոնք գտնվում են ոչ ջերմային ինտենսիվությունների ԳԲՀ ԷՄԴ-ի ազդեցության տակ:

Հետազոտության նպատակը

Մեր հետազոտության նպատակն է գնահատել մասնագիտության բերումով ոչ ջերմային ինտենսիվությունների միկրոալիքային ճառագայթման ազդեցությանը ենթարկվող անձանց տագնապայնության մակարդակը:

Հետազոտության նյութն ու մեթոդները

Հիմնական խումբը կազմված էր տարբեր մասնագիտական ստաժ ու տարիք ունեցող արական սեռի100 հոգուց: Նրանք թեստավորվել են ըստ Սպիլբերգեր-Խանինի թեստի, ընդ որում, եթե ստացված միավորների գումարը եղել է 30-ից պակաս, ապա տագնապայնության վիճակը համարվել է ցածր, 31-45 միավորի դեպքում՝ չափավոր, իսկ 46 և ավելի միավորների դեպքում՝ բարձր:

Ստուգողական խումբը կազմել են նույն տարիքի և սեռի 20 անձ, որոնք մասնագիտության բերումով գործ չեն ունեցել միկրոալիքների հետ:

Ստացված արդյունքների առաջադրման, ինչպես նաև դրանց ստույգության գնահատման համար կիրառվել են վիճակագրական վերլուծության համընդհանուր ճանաչում ստացած մեթոդները[6]:

Հետազոտության արդյունքների քննարկում

Աղ. 1-ում բերված են ռեակտիվ տագնապայնության (ՌՏ) և անձնային տագնապայնության (ԱՏ) որոշման համար Սպիլբերգեր-Խանինի թեստի արդյունքներն ըստ միկրոալիքների ազդեցությանը ենթարկվելու տևողության:

Աղյուսակ 1

ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՊԻԼԲԵՐԳԵՐ-ԽԱՆԻՆԻ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՄԻԿՐՈԱԼԻՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ

Ազդեցությանը ենթարկվելու տևողությունը (տարի)	Ցուցանիշներ (M±m)			
	Ստուգողական խումբ (n=20)		Հիմնական խումբ (n=100)	
	ՌՏ	ԱՏ	ՌՏ	ԱՏ
≤ 5	29,3 ± 2,7	26,7 ± 5,6	26,17 ± 10,15	40,09 ± 9,61
6-10			28,12 ± 12,02	40,90 ± 8,19
≥ 11			23,77 ± 12,45	40,0 ± 10,54
Ծանոթագրություն՝ ստուգողական խմբի համեմատությամբ իր խմբում p<0,05				

[5] Տես *А. С. Рудой, Е. В. Титкова, И. В. Загашвили.* Современные подходы к диагностике, терапии, профилактике поражений электромагнитного излучения сверхвысокочастотного диапазона. «Военная медицина», 2017, № 2:

[6] Տես *С. Гланц.* Медико-биологическая статистика. М.,1998:

Սպիլբերգեր-Խանինի թեստի կիրառումը հնարավորություն է տվել պարզելու հետևյալը.

1. ռեակտիվ տագնապայնության վերաբերյալ՝
   ա) ռեակտիվ տագնապայնության ցուցանիշն ըստ միկրոալիքների ազդեցությանը ենթարկվելու տևողության բոլոր խմբերում համապատասխանում է տագնապայնության ցածր մակարդակին,
   բ) ստուգողական խմբի համեմատությամբ՝ առանձին խմբերում փոփոխությունները ցույց են տալիս տագնապայնության արժեքի աննշան մեծացման ու հետազոտվողների երրորդ խմբի (11 և ավելի տարվա ստաժ) անձանց դեպքում այդ ցուցանիշի նվազման միտումը:
2. Անձնային տագնապայնության վերաբերյալ՝
   ա) բոլոր խմբերում գրանցվել է միջին մակարդակ, ինչն ընդհանուր առմամբ վկայում է, որ տվյալ կարգախմբի մարդիկ գտնվում են մշտական հուզական լարվածության վիճակում, և իրենց մասնագիտական գործունեության ամբողջ ընթացքում դրսևորում են անհանգստություն, լարվածություն ու ջղագարություն,
   բ) հետազոտվողների բոլոր խմբերում ստուգողական խմբի համեմատությամբ դիտվում է անձնային տագնապայնության արժեքի աճման միտում,
   գ) տվյալ կարգախմբի առաջին խմբում ընդգրկված՝ 5 տարուց պակաս աշխատանքային ստաժ ունեցող անձանց համեմատությամբ անձնային տագնապայնության գրանցված փոփոխություններն ունեն ընդամենը միտման բնույթ (աճման միտում՝ 6-10 տարի աշխատանքային ստաժ ունեցող անձանց դեպքում, որոնք գտնվում են այդ ճառագայթման ազդեցության տակ, և նվազման՝ երրորդ խմբում):

Աղ. 2-ում ներկայացված են տագնապայնության Սպիլբերգեր-Խանինի թեստի արդյունքներն ըստ միկրոալիքների հետ մասնագիտորեն գործ ունեցողների տարիքի:

Աղյուսակ 2

ՍՊԻԼԲԵՐԳԵՐ-ԽԱՆԻՆԻ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ

Տարիքը (տարի)	Ցուցանիշներ (M±m)			
	Ստուգողական խումբ (n=20)		Հիմնական խումբ (n=100)	
	ՌՏ	ԱՏ	ՌՏ	ԱՏ
20-25	29,3 ± 2,7	26,7 ± 5,6	29,28 ± 9,24	43,83 ± 9,84
26-30			26,15 ± 11,36	38,23 ± 7,85
31-35			27,83 ± 10,78	40,83 ± 9,21
≥ 36			24,72 ± 12,75	41,04 ± 9,89
Ծանոթագրություն՝ ստուգողական խմբի համեմատությամբ իր խմբում $p<0,05$				

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ստուգողական խմբի համեմատությամբ՝

- ՈՏ ցուցանիշներն ակնհայտորեն ունեն տարիքի համեմատ նվազելու միտում,
- ԱՏ ցուցանիշները տարիքի համեմատ ենթարկվում են չնչին փոփոխությունների. ստուգողական խմբի համեմատությամբ բոլոր տարիքային խմբերում ՈՏ ցուցանիշները կա՛մ գործնականում չեն փոխվում (20-25 տարիքային խումբ), կա՛մ միտված են նվազելու (մյուս խմբերը), իսկ ԱՏ դեպքում կա ցուցանիշների արժեքի աճման ակնհայտ միտում:

Ընդհանուր առմամբ մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ՝

- ոչ ջերմային ինտենսիվությունների միկրոալիքային ճառագայթման հետ աշխատող անձանց հոգեհուզական ոլորտը ենթարկվում է բավական հետաքրքիր փոփոխությունների, որոնք պայմանականորեն կարելի է բնութագրել որպես քրոնիկական միկրոալիքային ստրես,
- միկրոալիքային ճառագայթման նկատմամբ համեմատաբար ավելի զգայուն է հոգեհուզական ոլորտը, որը պատասխանատու է անձնային տագնապայնության համար,
- անցկացված հետազոտության բոլոր տարիների համար թե՛ ռեակտիվ, թե՛ անձնային տագնապայնության ցուցանիշները հաստատապես չեն տարբերվում ստուգողական խմբի ցուցանիշներից, ընդսմին առկա են դրանց արժեքների նվազման (ՈՏ) և աճման (ԱՏ) ցայտունորեն արտահայտված միտումներ: Դա խոսում է հետազոտվող թվակազմի անձանց հոգեհուզական ոլորտում ինչ-որ դիսֆունկցիայի գոյության մասին, ընդ որում, դիտվող փոփոխությունները կարող են հետևանք լինել ծառայողական գործունեության այնպիսի ընթացքի, որն ուղեկցվում էր փոփոխություններով թե՛ իրադրությունում, թե՛ հուզական ոլորտում այն առումով, որ միկրոալիքային ստրեսը զարգանում է որպես մասնագիտական ստրեսի տարբերակ:

Գրականության մեջ հրապարակված են մասնագիտական ստրեսի տարբերակների ուսումնասիրությանը նվիրված բավական հետաքրքրական հետազոտությունների արդյունքներ[7], քննարկված է մասնագիտական ստրեսի, մարմնաձևային (սոմատոֆորմային) և հոգեմարմնական (հոգեսոմատիկ) խանգարումների պրոբլեմը, տրված է այդ խանգարումների ֆիզիոլոգիական մեխանիզմների բնութագիրը, նկարագրված են տարբեր տեսակների մասնագիտական ստրեսներ՝ դասավանդողների (ավագ դպրոց, մանկական նախադպրոցական հաստատություններ, միջնակարգ դպրոց, ներկայացված են նման ստրեսները կանխելու հնարավորությունները), ինչպես նաև բժիշկների, ավտոտրանսպորտի վարորդների և մարզիկների (նրանց համար

[7] Տես *А. А. Хадарцев, А. Р. Токарев*. Профессиональный стресс (механизмы развития, диагностика и коррекция проявлений). «Монография». Тула, 2020:

բնութագրված են մարզական միջոցառումների կազմակերպման դեպքում մասնագիտական ռիսկերը, այդ թվում՝ մարզական բժշկության տեսակետից):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես. ի մի բերելով վերը նշվածը՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

- Սպիլբերգեր-Խանինի թեստն արտացոլում է այն անձանց հետ կապված իրավիճակը, որոնք երկար ժամանակ գտնվել են ոչ ջերմային ինտենսիվությունների միկրոալիքների ազդեցության տակ, և այդ մարդկանց տագնապայնությունը հետազոտելու համար ունի մեծ զգայունակություն,
- ընդհանուր առմամբ, մեր հետազոտությամբ Սպիլբերգեր-Խանինի թեստի արժեքների փոփոխման հայտնաբերված միտումները վկայում են, որ տվյալ կարգախմբի մարդկանց բնորոշ են խոր ենթագիտակցական շեղումներ, ինչը պետք է դառնա նման մարդկանց համար ձեռնարկվող միջոցառումների վերակառուցման հիմքը:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ПЕРИОДИЧЕСКОЙ БОЛЕЗНЬЮ

В. В. ЦАТУРЯН, полковник м/с, кандидат медицинских наук, доцент, начальник Военно-медицинского факультета ЕГМУ

РЕЗЮМЕ

Согласно «Международной классификации болезней» 10-го пересмотра, средиземноморская семейная лихорадка, или периодическая болезнь (ПБ), представляет собой моногенное заболевание, вызванное мутацией в гене *MEFV (MIMпо249100)* 16-ой хромосомы, приводящее к нарушению синтеза пирина. По мнению исследователей, мутации гена *MEFV* могут стать основой для развития разного рода аутоиммунных воспалительных заболеваний. Исследования показывают, что в таких государствах, как Армения, в которых пополнение вооруженных сил осуществляется по призыву, существует ряд проблем, связанных с состоянием здоровья и физического развития у данной категории лиц. В связи с распространенностью ПБ среди армянского населения РА проблема своевременного выявления лиц с данным заболеванием приобретает особую важность в контексте комплектования ВС РА как призывниками, так и контрактниками.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПСИХОЭМОЦИОНАЛЬНОГО СОСТОЯНИЯ ЛИЦ, РАБОТАЮЩИХ С ГЕНЕРАТОРАМИ МИКРОВОЛНОВОГО ИЗЛУЧЕНИЯ

Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, начальник кафедры организации и тактики медицинской службы Военно-медицинского факультета ЕГМУ,
Л. С. ГАЛСТЯН, кандидат медицинских наук, старший преподаватель кафедры неврологии факультета общей медицины ЕГМУ, член группы Военно-медицинского факультета ЕГМУ по изучению воздействия микроволнового излучения нетермических интенсивностей

РЕЗЮМЕ

Бурное развитие радиоэлектроники и ее активное внедрение в повседневную жизнь привели к увеличению числа людей, подвергающихся воздействию сверхвысокочастотных излучений электромагнитных полей. В статье представлены результаты исследований, проведенных применением теста Спилбергера-Ханина с целью оценки психоэмоционального состояния и уровня тревожности лиц, работающих с генераторами микроволнового излучения нетермических интенсивностей.

MILITARY MEDICINE

SOME PROBLEMS CONCERNING FAMILIAL MEDITERRANEAN FEVER

V. V. TSATURYAN, Colonel of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, Head, Military Medical Department, YSMU

SUMMARY

According to the International Classification of Diseases, Tenth Revision (ICD-10), Familial Mediterranean Fever (FMF), or periodic disease, is a monogenic disease caused by mutations in the Mediterranean Fever *(MEFV-MIMno249100)* gene, located on the chromosome 16, which causes disorder of pyrin synthesis. In the researchers' opinion, mutations in the MEFV gene can underlie the development of multiple autoimmune inflammatory diseases. The research proves that in states like Armenia, where the armed forces are manned by conscripts, there are a number of problems concerning the health state and physical development in this category of people. Due to the prevalence of FMF in the Armenian population of the RA, the problem of timely identification of individuals with this disease is gaining special significance in the context of manning the RA Armed Forces both with conscripts and contracted servicemen.

SOME ISSUES OF THE PSYCHO-EMOTIONAL STATE OF PERSONS WORKING WITH MICROWAVE GENERATORS

G. R. VARDANYAN, Lieutenant Colonel of Medical Service, Head, Chair of Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU,
L. S. GALSTYAN, PhD in Medicine, Senior lecturer, Chair of Neurology, Department of General Medicine, YSMU, Member, Group for the study of effects of microwave radiation of non-thermal intensities, Military Medical Department, YSMU

SUMMARY

The rapid development of electronics and its wide introduction into the everyday life, have caused the increase of the number of people exposed to the super-high-frequency radiation of electromagnetic fields. The article represents the results of the research conducted with the help of Spielberger-Hanin test to assess the psycho-emotional state and level of anxiety with the people who deal with non-thermal intensity microwave generators.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, լեյտենանտ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, լեյտենանտ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,
Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգային – национальный – national
– ազգային ինքնություն – 1. национальная самость, 2. տես *ազգային նույնականություն* – 1. national identity, 2. տես *ազգային նույնականություն*
– ազգային նույնականություն – национальная идентичность – national identification
ակոսավոր հրացան – винтовка – rifle
ամփոփագիր – 1. сводка, 2. сводка, информационное сообщение – 1. report, summary, 2. bulletin, information statement, informational message
անդրազգային հանցավոր տարր – транснациональный преступный элемент – transnational criminal element
ապահարմարումային վարք – дезадаптивное поведение – maladaptive behavior
առաջադրանքային կառավարում – директивное управление, принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – mission command, mission-type tactics, Auftragstaktik
արագագործություն – быстродействие – speed, quick-action
արագություն – скорость – speed
արդյունավետություն – արժեք չափանիշ – критерий эффективность – стоимость, эффективность затрат – cost – effectiveness criterion
բուժառու – пациент – patient
գերբարձրհաճախականային էլեկտրամագնիսական դաշտ – сверхвысокочастотное электромагнитное поле – super-high-frequency electromagnetic field
գերձայնային թևավոր հրթիռ – гиперзвуковая крылатая ракета – hypersonic cruise missile
գիտաճյուղ – дисциплина – discipline
գործակցելիություն – интероперабельность, оперативная совместимость – interoperability
գործառական առաջնահերթություն – функциональная первоочередность – functional priority
գունային հոգեբանական ախտորոշման մեթոդ – цветовой метод психодиагностики – method of color psychodiagnostics
գունային չափանմուշ – цветовой образец, цветовая карта – color sample, color code
երկակի նախանշանակման տեխնոլոգիա – технология двойного назначения – dual-purpose technology
զանգվածեղ հարված – массированный удар – massive strike, mass attack

զեկույց – рапорт – report
զսպում – 1. сдерживание, 2. տես *սաստում* – 1. containment, 2. տես *սաստում*
– զսպման գործիքակազմ – 1. инструментарий сдерживания, 2. инструментарий устрашения – 1. containment toolkit, 2. deterrence toolkit
ընթացակարգ – процедура – procedure
թեթև հետևակ – легкая пехота – light infantry
թռիչքադաշտ – аэродром – aerodrome, airfield
թռիչքարան – аэродром – aerodrome, air station
թվաբանական միջին ցուցանիշ – среднее арифметическое значение – arithmetic mean, average
խանգարում – 1. расстройство, 2. помеха – 1. disorder, 2. jamming, hindrance, interference
– հոգեմարմնական խանգարում – психосоматическое расстройство – psychosomatic disorder
– մարմնաձևային խանգարում – дисморфное расстройство тела – body dysmorphic disorder
խանգարումապաշտպանվածություն – помехозащищенность – interference protection, interference immunity
խելամիտ ռազմական բավարարության սկզբունք – տես *կշռադատված ռազմական բավարարության սկզբունք*
խորհրդակում – консультация – consulting, consultation
կարգախումբ – категория – category
կարգային համահարաբերակցության գործակից – коэффициент ранговой корреляции – rank correlation coefficient
կարգապահություն – дисциплинированность – discipline
կիբեռտարածություն – киберпространство – cyberspace
կիբեռտիրույթ – кибердомен – cyber domain
կշռադատված ռազմական բավարարության սկզբունք – принцип разумной военной достаточности – principle of reasonable military adequacy, reasonable military sufficiency principle
համակարգաստեղծ սկզբունք – системообразующий принцип – system principle, backbone principle
հայեցակարգ – концепция – conception
հասկացություն – понятие, категория – concept, category
հեռահար զինատեսակ – дальнобойное оружие – long-range weapon
հետախուզահարվածային համալիր – разведывательно-ударный комплекс – reconnaissance and strike complex
հերթագայություն – чередование – alternation
մանրաեզրաչափքային ԱԹԱ – малогабаритный БПЛА – small UAV
մարտակարգ – боевой порядок – battle deployment, combat formation, order of battle, tactical formation
մոդել – модель – model
– խնդրակենտրոն մոդել – տես *նպատակակենտրոն մոդել*
– հավասարեցման մոդել – модель выравнивания – alignment model
– նպատակակենտրոն մոդել – целеориентированная модель, проблемно-ориентированная модель – goal-based model, issue-based model

– ռազմավարական պլանավորման հիմքային մոդել – базовая модель стратегического планирования – basic strategic planning model
մտային գրոհ – мозговой штурм – brain storming
նյարդայնություն – нервозность – nervousness
ողնաշարաբորբ – спондилит – spondylitis
պահանջ – требование – requirement
– նորմատիվային պահանջ – нормативное требование – normative requirement
– նորմացուցային պահանջ – տես *նորմատիվային պահանջ*
պահեստազոր – запас – reserve
պահուստ – резерв – reserve
պաշար – запас – stock
պաշտպանական արդյունաբերական համալիր – оборонно-промышленный комплекс – defense-industrial complex
պաշտպանական ենթակառուցվածք – оборонная инфраструктура – defense infrastructure
պատերազմավարություն – ведение войны – warfare, waging of war, conduct of war
պետութենաշինություն – государственное строительство – state building
ջղագարություն – տես *նյարդայնություն*
ռազմաարդյունաբերական համալիր – военно-промышленный комплекс – military-industrial complex
ռազմավար – стратег – strategist
ռազմատնտեսական ինքնաբավություն – военно-экономическая самодостаточность – military-economic self-sufficiency
ռազմարշավ – 1. военная кампания, 2. военная экспедиция – 1. military campaign, 2. military expedition
սաստում – устрашение – deterrence
– սաստման գործիքակազմ – տես *զսպում – զսպման գործիքակազմ 2*
սարքավորանք – оборудование – equipment, hardware, installation
սարքավորում – оборудование – equipping, equipment
սպառազինությունների մրցավազք – гонка вооружений – arms race
սպառնալիքակենտրոն ուղղություն – угрозо-центричное направление – threat-based direction
տագնապայնություն – тревожность – anxiety
տարաշարժ – маневр – maneuver
տարաշարժուն խումբ – маневренная группа – maneuver element
տեղաշարժի երթուղի – маршрут передвижения – route of movement
տեղեկատվական – информационный – information
– տեղեկատվական համատեղելիություն – информационная совместимость – information compatibility, information comparability
– տեղեկատվական հոսք – информационный поток – information flow
տեղեկատվահոգեբանական ձեռնածություն – информационно-психологическая манипуляция – information and psychological manipulation
տեղեկատվություն – информирование, информация – informing, information
տեղեկութային – информационный – information
տեղեկույթ – информация – information
– տեղեկույթի սորակորուստ – утечка информации – information leakage

ուղեվարություն – навигация – navigation
փորձի տեղայնացում – адаптация опыта к местным условиям – localization of experience
փոփոխակում – 1. модификация, 2. мутация – 1. modification, 2. mutation
օդատիեզերական պաշտպանություն – воздушно-космическая оборона – aerospace defense
ֆիզիկական – физический – physical
– ֆիզիկական պատրաստվածություն – физическая подготовленность – physical fitness, physical preparedness
– ֆիզիկական պատրաստություն – физическая готовность – physical readiness
– ֆիզիկական պատրաստում – физическая подготовка – physical training

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

аэродром – 1. թռիչքարան, 2. թռիչքադաշտ
боевой порядок – մարտակարգ
быстродействие – արագագործություն
ведение войны – պատերազմավարություն
винтовка – ակոսավոր հրացան
военная кампания – ռազմարշավ
военная экспедиция – ռազմարշավ
военно-промышленный комплекс – ռազմաարդյունաբերական համալիր
военно-экономическая самодостаточность – ռազմատնտեսական ինքնաբավություն
воздушная оборона – օդային պաշտպանություն
воздушно-космическая оборона – օդատիեզերական պաշտպանություն
гиперзвуковая крылатая ракета – գերձայնային թևավոր հրթիռ
гонка вооружений – սպառազինությունների մրցավազք
государственное строительство – պետութենաշինություն
дальнобойное оружие – հեռահար զինատեսակ
дезадаптивное поведение – ապահարմարումային վարք
директивное управление – առաջադրանքային կառավարում
дисциплина – 1. գիտաճյուղ, 2. կարգապահություն
дисциплинированность – կարգասիրություն
запас – 1. պաշար, 2. պահեստազոր
интероперабельность – գործակցելիություն
информационно-психологическая манипуляция – տեղեկատվահոգեբանական ձեռնածություն
информационный – 1. տեղեկութային, 2. տեղեկատվական
– информационная совместимость – տեղեկատվական համատեղելիություն
– информационное сообщение – см. *сводка 2*
– информационный поток – տեղեկատվական հոսք
информирование – տեղեկատվություն
информация – 1. տեղեկույթ, 2. см. *информирование*
– утечка информации – տեղեկույթի սորակորուստ
категория – 1. см. *понятие,* 2. կար-

գախումբ
кибердомен – կիբեռտիրույթ
киберпространство – կիբեռտարածություն
консультация – խորհրդարկում
концепция – հայեցակարգ
коэффициент ранговой корреляции – կարգային համահարաբերակցության գործակից
критерий эффективность – стоимость – արդյունավետություն – արժեք չափանիշ
легкая пехота – թեթև հետևակ
малогабаритный БПЛА – մանրաեզրաչափքային ԱԹԱ
маневр – տարաշարժ
маневренная группа – տարաշարժուն խումբ
маршрут передвижения – տեղաշարժի երթուղի
массированный удар – զանգվածեղ հարված
модель – մոդել
– базовая модель стратегического планирования – ռազմավարական պլանավորման հիմքային մոդել
– модель выравнивания – հավասարեցման մոդել
– проблемно-ориентированная модель – см. *модель – целеориентированная модель*
– целеориентированная модель – նպատակակենտրոն մոդել, խնդրակենտրոն մոդել
модификация – փոփոխակում
мозговой штурм – մտային գրոհ
мутация – փոփոխակում
навигация – ուղեվարություն
национальный – ազգային
– национальная идентичность – 1. ազգային նույնականություն, 2. см. *национальная самость*
– национальная самость – ազգային ինքնություն, ազգային նույնականություն
нервозность – նյարդայնություն, ջղագարություն
нормативное требование – նորմատիվային պահանջ, նորմացուցային պահանջ
оборонная инфраструктура – պաշտպանական ենթակառուցվածք
оборонно-промышленный комплекс – պաշտպանական արդյունաբերական համալիր
оборудование – 1. սարքավորանք, 2. սարքավորում
оперативная совместимость – см. *интероперабельность*
пациент – բուժառու
помеха – խանգարում
помехозащищенность – խանգարումապաշտպանվածություն
понятие – հասկացություն
принцип разумной военной достаточности – կշռադատված ռազմական բավարարության սկզբունք, խելամիտ ռազմական բավարարության սկզբունք
процедура – ընթացակարգ
разведывательно-ударный комплекс – հետախուզահարվածային համալիր
рапорт – զեկույց
расстройство – խանգարում
– дисморфное расстройство тела – մարմնաձևային խանգարում
– психосоматическое расстройство – հոգեմարմնական խանգարում
резерв – պահուստ
сверхвысокочастотное электромагнитное поле – գերբարձրհաճախականային էլեկտրամագնիսական դաշտ
сводка – ամփոփագիր 1, 2
сдерживание – 1. զսպում, 2. см.

устрашение
– инструментарий сдерживания – 1. զսպման գործիքակազմ, 2. см. *устрашение – инструментарий устрашения*
системообразующий принцип – համակարգաստեղծ սկզբունք
скорость – արագություն
спондилит – ողնաշարաբորբ
среднее арифметическое значение – թվաբանական միջին ցուցանիշ
стратег – ռազմավար
технология двойного назначения – երկակի նախանշանակման տեխնոլոգիա
транснациональный преступный элемент – անդրազգային հանցավոր տարր
тревожность – տագնապայնություն
угрозо-центричное направление – սպառնալիքակենտրոն ուղղություն
устрашение – սաստում, զսպում
– инструментарий устрашения – սաստման գործիքակազմ, զսպման գործիքակազմ
физический – ֆիզիկական
– физическая готовность – ֆիզիկական պատրաստություն
– физическая подготовка – ֆիզիկական պատրաստում
– физическая подготовленность – ֆիզիկական պատրաստվածություն
функциональная первоочередность – գործառական առաջնահերթություն
цветовой – գունային
– цветовая карта – см. *цветовой образец*
– цветовой метод психодиагностики – գունային հոգեբանական ախտորոշման մեթոդ
– цветовой образец – գունային չափանմուշ
чередование – հերթագայություն
эффективность затрат – см. *критерий эффективность – стоимость*

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

aerodrome – 1. թռիչքարան, 2. թռիչքադաշտ
aerospace defense – օդատիեզերական պաշտպանություն
airfield – see *aerodrome 2*
air station – see *aerodrome 1*
alternation – հերթագայություն
anxiety – տագնապայնություն
arithmetic mean – թվաբանական միջին ցուցանիշ
arms race – սպառազինությունների մրցավազք
Auftragstaktik – see *mission command*
average – see *arithmetic mean*
backbone principle – see *system principle*
battle deployment – մարտակարգ
brain storming – մտային գրոհ
bulletin – ամփոփագիր 2
category – 1. կարգախումբ, 2. see *concept*
color code – see *color sample*
color sample – գունային չափանմուշ
combat formation – see *battle deployment*
concept – հասկացություն
conception – հայեցակարգ
conduct of war – see *warfare*
consultation – see *consulting*
consulting – խորհրդարկում
containment – զսպում
– containment toolkit – զսպման գործիքակազմ
cost – effectiveness criterion – արդյու-

նավետություն – արժեք չափանիշ
cyber domain – կիբեռտիրույթ
cyberspace – կիբեռտարածություն
defense-industrial complex – պաշտպանական արդյունաբերական համալիր
defense infrastructure – պաշտպանական ենթակառուցվածք
deterrence – սաստում, զսպում
– deterrence toolkit – 1. see *containment* – *containment toolkit,* 2. սաստման գործիքակազմ, զսպման գործիքակազմ
discipline – 1. գիտաճյուղ, 2. կարգապահություն, 3. կարգասիրություն
disorder – խանգարում
– body dysmorphic disorder – մարմնաձևային խանգարում
– psychosomatic disorder – հոգեմարմնական խանգարում
dual-purpose technology – երկակի նախանշանակման տեխնոլոգիա
equipment – 1. սարքավորանք, 2. see *equipping*
equipping – սարքավորում
functional priority – գործառական առաջնահերթություն
hardware – see *equipment 1*
hindrance – see *jamming*
hypersonic cruise missile – գերձայնային թևավոր հրթիռ
information – 1. տեղեկույթ, 2. տեղեկութային, 3. տեղեկատվական, 4. see *informing*
– information and psychological manipulation – տեղեկատվահոգեբանական ձեռնածություն
– information comparability – see *information compatibility*
– information compatibility – տեղեկատվական համատեղելիություն
– information flow – տեղեկատվական հոսք
– information leakage – տեղեկույթի սորակորուստ
– information statement – see *bulletin*
informational message – see *bulletin*
informing – տեղեկատվություն
installation – see *equipment 1*
interference – see *jamming*
– interference immunity – see *interference protection*
– interference protection – խանգարումապաշտպանվածություն
interoperability – գործակցելիություն
jamming – խանգարում
light infantry – թեթև հետևակ
localization of experience – փորձի տեղայնացում
long-range weapon – հեռահար զինատեսակ
maladaptive behavior – ապահարմարումային վարք
maneuver – տարաշարժ
– maneuver element – տարաշարժուն խումբ
mass attack – see *massive strike*
massive strike – զանգվածեղ հարված
method of color psychodiagnostics – գունային հոգեբանական ախտորոշման մեթոդ
military campaign – ռազմարշավ
military-economic self-sufficiency – ռազմատնտեսական ինքնաբավություն
military expedition – ռազմարշավ
military-industrial complex – ռազմաարդյունաբերական համալիր
mission command – առաջադրանքային կառավարում
mission-type tactics – see *mission command*
model – մոդել
– alignment model – հավասարեցման մոդել
– basic strategic planning model –

ռազմավարական պլանավորման հիմքային մոդել
– goal-based model – նպատակակենտրոն մոդել, խնդրակենտրոն մոդել
– issue-based model – see *model – goal-based model*
modification – փոփոխակում
mutation – փոփոխակում
national – ազգային
– national identification – 1. ազգային նույնականություն, 2. տես *national – national identity*
– national identity – ազգային ինքնություն, ազգային նույնականություն
navigation – ուղեվարություն
nervousness – նյարդայնություն, ջղագարություն
normative requirement – նորմատիվային պահանջ, նորմացուցային պահանջ
order of battle – see *battle deployment*
patient – բուժառու
physical – ֆիզիկական
– physical fitness – ֆիզիկական պատրաստվածություն
– physical preparedness – see *physical – physical fitness*
– physical readiness – ֆիզիկական պատրաստություն
– physical training – ֆիզիկական պատրաստում
principle of reasonable military adequacy – կշռադատված ռազմական բավարարության սկզբունք, խելամիտ ռազմական բավարարության սկզբունք
procedure – ընթացակարգ
quick-action – see *speed 2*
rank correlation coefficient – կարգային համահարաբերակցության գործակից
reasonable military sufficiency principle – see *principle of reasonable military adequacy*
reconnaissance and strike complex – հետախուզահարվածային համալիր
report – 1. զեկույց, 2. ամփոփագիր
reserve – 1. պահուստ, 2. ռեզերվ, 3. պահեստազոր
rifle – ակոսավոր հրացան
route of movement – տեղաշարժի երթուղի
small UAV – մանրաեզրաչափքային ԱԹԱ
speed – 1. արագություն, 2. արագագործություն
spondylitis – ողնաշարաբորբ
state building – պետութենաշինություն
stock – պաշար
strategist – ռազմավար
summary – see *report 2*
super-high-frequency electromagnetic field – գերբարձրհաճախականային էլեկտրամագնիսական դաշտ
system principle – համակարգաստեղծ սկզբունք
tactical formation – see *battle deployment*
threat-based direction – սպառնալիքակենտրոն ուղղություն
transnational criminal element – անդրազգային հանցավոր տարր
waging of war – see *warfare*
warfare – պատերազմավարություն

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները՝ ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ–գլխավոր խմբագրի տեղակալ՝
Զ. Դ. Ասատրյան

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*

Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Ա. Զ. Պետրոսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Տ. Մ. Տիրացույանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,* համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2021 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» տպարանում

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ԲԱՆԱԿ

ՀՀ Պաշտպանության նախարարի այցը
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան.
ձախից աջ՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ գեներալ-մայոր *Գենադի Տավարածյան,*
ՀՀ Պաշտպանության նախարար *Վաղարշակ Հարությունյան,*
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ *Արման Սարգսյան,*
ՀՀ ՊՆ գործերի կառավարչության ռազմավարական ծրագրերի
մշտադիտարկման, վերլուծության և կոլեգիայի աշխատանքների
կազմակերպման վարչության պետ *Վլադիմիր Հակոբյան*

Երևան, ՊԱՀՀ, 2021 թ. մարտի 12

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1 (107). 2021